

Միհնակ Արքայություն

# ՔՐԻՍՏՈՎԻՆ ՄԻԲԱՅԼԵՑՆ

# ՔՐԻՍՏՈՎԻՈՐ ՄԻՋԱՅԼԵՆ



հեղինակ՝

Միքայէլ Վարանդեան

A handwritten signature in black ink, appearing to read "ՔՐԻՍՏՈՎԻՅՈՐ ՄԻՋԱՅԼԵՆ".



Միքայէլ Վարանդեանի «Քրիստափոր Միքայէլեան» կենդանագիրի (ինչպէս ինք կոչած է գրութեան սկիզբը) վերահրապարակումը կը նուիրենք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր միտք Քրիստափոր Միքայէլեանի նահատակութեան 115 եւ Միքայէլ Վարանդեանի ծննդեան 150 ամեակներում:

Այս նիւթը հրատարակուած է «Հայրենիք» ամսագրի Յունուար 1924-Թիւ 3, Մարտ 1924-Թիւ 5, Յունիս 1924-Թիւ 8 եւ Հոկտեմբեր 1924-Թիւ 12-ին մէջ:

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ  
Մայիս 2020

# Բովանդակութիւն

|                       |        |
|-----------------------|--------|
| -Առաջաբանի Տեղ        | Էջ 1   |
| -Իրրեւ Մարդ           | Էջ 15  |
| -Իր Կեանքը            | Էջ 22  |
| -Հրապարակախօսը        | Էջ 63  |
| -Աշխարհահայեցքը       | Էջ 67  |
| -Քրիստափոր Եւրոպայում | Էջ 73  |
| -Յաւելուած            | Էջ 115 |

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

«Հայրենիք»ի իմ ընկերները երկար ատենէ ի վեր կը յորդորէին ինձ՝ զրել Քրիստաֆորի, Զաւարեանի ու Շոստոմի – հայ նորագոյն պատմութեան նշանաւոր երրորդութեան – կենդանագիրը։ Կը հրաժարէի յամառօրէն եւ այժմ էլ առանց վարանումի չէ, որ կը համակերպիմ ու այս տողերը կը զրեմ Քրիստաֆորի մասին։

Կը խորհէի, որ այդպիսիներու կեանքն ու գործը կամ լաւ պէտք է զրովին – խորոնկ, բազմակողմանի եւ լիակատար ուսումնասիրութեան ձեւով – կամ թէ բնաւ չպէտք է զրովին…

Ինձի կ'ըսեն, սակայն, իրաւամբ. «Այն քիչը, որ դուք կարող էք տալ, տուէք»… Նոր սերունդ կ'աճի, թէ երկրին եւ թէ գաղութներուն մէջ, ընթերցասէր ու հետաքրքիր սերունդ, որ կ'ուզէ ծանօթանալ հայրենի անցեալին հետ, հայկական մեծ դրամայի մեծագոյն դերակատարներուն հետ։ Իսկ այդ վերջինները գերեզման իջան մին միահին ետեսից-շանթահարուած պարտքի ճամբուն վրայ անողոք պատահարէն կամ անակնկալ մահէն – գերեզման իջան, առանց ոեւէ յուշ, վաւերագիր թողնելու իրենց մասին – եւրոպացոց օրինակով – կամ գէթ այն ծրագիրներու, դէպքերու, անցուղարձերու մասին, որոնց յղացող, նախաձեռնող ու մասնակից եղած են։ Երբ մենք աւելի երիտասարդներս կը յորդորէինք անոնց՝ զրի առնել իրենց յուշերը, կը ժպտային ու կը լոէին։ Դիւրին բան չէր ստիպել այդ մարդկանց՝ իրենց մասին խօսելու, իրենց քառիէրը ցուցադրելու։ Նրանց համար կեանքի օրէնք էր յայտնի ասացուածքը. “Faisons notre devoir, le reste est vanite”.



Ստեփան Զօրեան. Քրիստովիոր Միքայէլ Եան. Սիմոն Զաւարեան

«Կատարենք մեր պարտքը, մնացածը ունայնութիւն է»... Յետ նայել չէին սիրում. նշանաբանն էր – «միշտ դէպի առաջ»:

Ուրիշներն էլ – զինուորական փայլուն հրամանատարներ եւ ինտելիգենտ ղեկավարներ – նոյնպէս վաղաժամ անհետացան, գերեզման տանելով իրենց ալէծուփ կեանքի ապրումները, ոչինչ վաւերագիր չթողնելով յետնորդներուն... Ոչինչ՝ Եփրեմէն, Սերոբէն ու Մուրատէն, Քեռիէն ու Չատոշէն, Առաքելէն ու Աւոէն, Տերսիմի Քեռիէն, ոչինչ՝ Հրայրէն, ժողովրդի այդ անզուգական «դէրվիշ» առաջնորդէն, որ այնքան յուզիչ պատմութիւններ կարող էր տալ մեզ իր զմայլելի գրչով, եթէ միմիայն նկարագրէր իր կեանքը, լի ցնցող դրուագներով – ոչինչ՝ Պետօէն, Արամ Արամեանէն, Նիկոլ-Դումանէն, Վազգէն Տէրոյեանէն, Սաքոյէն ու Խէչօէն, մեր աննման, «դաշնակցական» Խէչօէն, որ իր տիտանեան հասակին կը միացնէր եւ տիտանեան յանդգնութիւն ու անձնուիրութիւն – ոչինչ՝ Վարդգէսէն ու Վուամեանէն, Հրաչէն ու Շահրիկէն, Կոստի Համբարձումեանէն, Խաժակէն ու Ակնունիէն, Յոնանէն ու Իառուֆեանէն, ոչինչ՝ Իշխանէն, Համազասպէն, Վանի Սարգիսէն, Մուշի Գեղամէն եւայլն

## Եւայն... Նրանց թիւը լէգէոն է:

Ազատագրուած Իտալիայի մէջ, ազատագրուած բոլոր արեւմտեան եւ արեւելեան երկիրներուամ ազատութեան այդ Լէգէօնը շրջապատուած է համազգային գուրգուրանքով ու պաշտամոնքով։ Նրա մասին երգեր են հիատուամ, նրա հմայքը լցնուամ է դպրոցական ձեռագրքերն ու ամբողջ գրականութիւնը... որպէսզի տեսնեն նոր սերուանդները, թէ ինչպիսի մարդիկ են ծնել իրենց հարազատ ժողովուրդը ազատագրական երկունքի դժոխք-օրերուամ, թէ ինչպիսի անաղարտ անձնուիրութեամբ են նրանք ծառայել այդ ժողովուրդին ու համաշխարհային իդէալներուն եւ թէ որքան են նրանք շքեղացրել հայրենի պատմութիւնը իրենց գործերով, իրենց դիցազնական արիութեամբ եւ բարոյական անհասանելի բարձրութեամբ։

Սակայն... դժբախտութիւնը հոն է, որ մեր դատը դեռ չէ յաղթանակել... Եւ հոդ է աղբիւրը բոլոր այսպէս կոչուած քննադատութիւնների եւ ամբաստանութիւնների, բոլոր թունոտ կրքերի եւ անմիտ ցասումների, բոլոր իստերիկ ճիչ ու աղաղակների, որոնք տարափի պէս կը տեղան այսօր Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, առանձնապէս հայ բոլեփիկներու կողմէն, որոնք՝ վարչապետէն մինչեւ յետին «գաղափարախօսը»՝ իրենց խորախորհուրդ փիլիսոփայական վերլուծուամը բերին «Դաշնակցութեան» դրամային, մահուան դատապարտեցին զայն ու հանդիսաւոր դամբանականներ արտասանեցին։ Իրենց կոյր մոլեգնութեան մէջ նրանք մինչեւ իսկ պատրաստ են ժխտել այդ կուսակցութեան գոյութեան պատճառը... Նա պէտք չէ ծնուէր, նա կարո՞ղ էր չծնուել, նա ծնունդ չէ հայկական դժոխքի, նա ինքն է ծնել այդ դժոխքը, նա չէ հետեւանք օբեկտիվ իրականութեան, նա չէ արգասիք թիւք-քրդական անլուր յօշոտուանների ու ճարակուանների,

նա չէ իդէական, գաղափարաշունչ մի կուսակցութիւն, նման արեւմտեան ու արեւելեան – իտալական, յոյն, սերբ, բուլղար – երբեմնի ազգային-յեղափոխական կուսակցութիւններուն, նա միայն արկածախնդիր հրոսակներու մի խումբ է – հայ-բոլցեփիկների բառացի արտայայտութեամբ – հիմնուած նոյնպիսի արկածախնդիր շէֆերու ձեռքով (Քրիստաֆոր – Զաւարեան – Ռոստոմ...), որոնք, ո՞վ գիտէ, գուցէ եւ անձնական շահեր են հետապնդել...

## Հայկական շարժումը – մի «ավանտիւրա»...

Այսպէս են ուսուցանում բոլցեփիկ տէրերը Հայաստան աշխարհի դպրոցների մէջ, հայ մանկըտեաց ու պատանեաց. Նրանք արդէն դուրս են վտարել դասագրքերէն ու գրականութենէն ոչ միայն Քրիստաֆորների եւ Զաւարեանների անունները, այլ եւ այն բոլոր դէմքերն ու դէպքերը, որոնք ոեւէ առնչութիւն ունին հայ ժողովրդի հայրենասիրական շարժման հետ: Ասում են նոյնիսկ, որ նրանք կրակի են մատնել Ռաֆֆիի, Պատկանեանի, Ահարոնեանի ու այլոց գրուածքները (առ-տօ-դա-ֆէ...), մտաբերելով, անշուշտ, միջնադարեան իրենց արժանաւոր գաղափարային նախորդների մեծաշառչ եւ «արգասաւոր» գործունէութիւնը:

Այդպիսով, այն մարդիկ, որոնք ամէն օր յեղափոխութիւն եւ ազատութիւն բառերն ունին իրենց շրթների վրայ, պատրաստ են նոյն իսկ ամենակոպիտ անհեթեթութեան յանգելով – ad absurdum – փաստաբանել, որ ասկէ 30-35 տարի առաջ Թիւրքաց Հայաստանի մէջ, թիւրք-քրտական բոնակալութեան տակ՝ հող չկար հաւաքական ըմբոստացումի համար, կամ եթէ կար, հայ ժողովուրդը, հայ գիտակից եւ զգայուն փոքրամասնութիւնը պէտք չէ ըմբոստանար, այլ անարդ գրաստի պէս, անմոռնչ

Համբերութեամբ պէտք է տանէր իր մէջքին ու ծոծրակին տեղացող բոլոր հարուածները, իր գոյութեանն սպառնացող եւ իր ընտանեկան պատիւն անարգող բոլոր բռնութիւնները:

Այդտեղ է յանգում հայ բոլենիկների պատմափիլիսոփայութիւնը հայոց Ազատամարտի հանդէպ. այդպէս են նրանց ըմբոնումները գաղափարներու եւ իրերու այն վիթխարի հեղեղի մասին, որ քառասուն տարուց ի վեր փոթորկում է հայ կեանքը եւ կարմրավառ լուսապսակով իշխում է տիրականօրէն ամբողջ հայկական պատմութեան վրայ....:

Աւելի լուրջ ու խորունկ ըմբոնում չենք կարող պահանջել այդ նորակնունք տղաներէն, որոնց մէջ կիրքն է տիրական եւ որոնք պատմափիլիսոփայական կնճիռներն եաւ լուծում են պարզ ու դիւրին եղանակով – գրչի մի յանդուզն հարուածով:

\*\*\*

Այո, ասացինք, բոլոր վայնասունների պատճառն այն է, որ մեր յոյսերը դեռ չեն իրականացել: Մեր գերմարդկային ճիգերը անկարող եղան պատնէշ կանգնել թշնամու յորձանքի դէմ, որովհետեւ ոչ ոք մեզի օգնութեան հասաւ... Իսկ առանց դրսի օգնութեան՝ անգամ Գարիբալդիի ու Մաձճինիի քաջաց բանակը, քսան միլիոն իտալացի ժողովրդով եւ անկախ Պիէմօնդօն էլ կոնակն ունենալով՝ չպիտի կարողանար իտալիան ազատագրել...

Մեզ ասում են, որ պէտք է նախատեսէինք վիժումը... Խոստովանում ենք, մարգարէ չեղանք: Քառասուն տարի առաջ, երբ կերպարանաւորում էր հայ ազատազրական շարժումը, հայոց աշխարհի ամենանուրբ գլուխներն ու հոգիները, Խրիմեանէն մինչեւ Արծրունի եւ Ռաֆֆի, Պատկանեանէն

մինչեւ Փորթուգալեան, Փափազեան (Ստեփան) ու Հայկակ, ապա աւելի երիտասարդները, Քրիստաֆոր, Զաւարեան, Ռոստոմ, ամբողջ հայ առաջադէմ մտաւորականութիւնը, որի ուղեղի ծալքերուն մէջ առնուազն նոյնքան թափանցող, ըմբոնող ու «գուշակող» նիւթ կար, որքան երեւանի այժմեան վարիչների զիխում,-այդ բոլոր, բոլոր հայ դէմքերը խորապէս համոզուած էին, որ թիւքահայերի կացութիւնը անհանդուրժելի էր եւ բնաւ երբեք չէին երեւակայեր ու չէին կարող երեւակայել, թէ հայկական ազատամարտը – այդ կացութեան անխուսափելի ծնունդը – կարող էր այնքան կատաստրօֆային վախճան ունենալ, թէ թիւքաց հայութեան կէսը պիտի ջնջուէր... Լաւատես էր, ընդհակառակը, այն ժամանակուայ հոգեբանութիւնը,- լաւատեսութիւն, որ ծնունդ էր որոշ պատմական ու քաղաքական կօնկրետ տուեալների:

*Մտրակել այդպիսի իրողութիւններ՝ միեւնոյն է թէ մտրակել հողմը, որ փշում է որոշ ուղղութեամբ, որոշ կոնկրետ պատճառների մղումով։ Որքան կ'ուզէք, գլուխ պատոեցէք, պարապ, անիմաստ վէճ է այս, որ միայն կը ցուցադրէ վիճողներու անդարմանելի թերամտութիւնը։*

Խօսքս յեափոխական կազմակերպութիւնների ծագման մասին է եւ ոչ նրանց գործելակերպի, բարոյականի, սայթաքումների ու սխալների, որոնց հանդէպ պատմական քննադատութիւնը – լուրջ, անկիրք, անաչառ քննադատութիւնը – պահպանում է, հարկաւ, դրուատելու կամ մտրակելու իր լիակատար իրաւունքը։

\*\*\*

Վատ մարգարէ եղանք, այո, նաեւ համաշխարհային պատերազմի սկիզբներուն։ Մենք չկարողացանք նախատեսնել,

որ Դաշնակից պետութիւնները, Զեխօ-Սլովակիայի, Լեհաստանի, Իւգօ-Սլավիայի, Արաբիայի, Հրէական Պաղեստինի ստեղծողները, միմիայն մեզ պիտի լքէին դաւաճանօրէն, միմիայն Մելրի դաշնագիրը պէտք է պատռուէր, միմիայն ու յատկապէս մեր վերաբերմամբ պէտք է դրժէին իրենց տուած այնքան հանդիսաւոր խոստումներն ու յանձնառութիւնները. մենք չնախատեսանք, որ Թիւրքիան յաղթական Եվրոպայի կրոնկների տակ ճգմուելուց յետոյ, յանկարծ վերստին գլուխ պիտի բարձրացնէր, պիտի գրոհ տար դէպի Կովկաս, պիտի քշէր նախիրի պէս 300 հազարանոց յոյն բանակը, որ մեր յոյսերէն մէկն էր... Մենք չհասկացանք ու չնախատեսանք այդ բոլորը (մեզ հետ միասին բութ, անհասկացող եղան եւ Անգլիոյ ամենանուրբ դիւանագէտները), մենք չկարողացանք գուշակել նաեւ Ռուսաստանի ահաւոր կրախը, ուս զինուորական ոյժի անակնկալ ոչնչացումը, չկարողացանք մանաւանդ գուշակել, որ յեղաշրջուած, կարմիր Ռուսաստանը, կօմմունիզմի ու ժողովուրդներու իրաւունքների անունով երդուող Ռուսաստանը ամենատմարդի ձեւով պիտի ոտնահարէր հայ ժողովուրդը, գերազանցելով նոյնիսկ ցարիզմի հակահայ ոճիրները, պիտի պարպէր Թիւրքական ճակատը, վերադարձնելով Թիւրքաց Հայաստանը իր դահիճներին եւ թոյլ տալով – Բրեստ-Լիտովսկի համաձայնութեամբ – որ օսմանեան տիրապետութիւնը հասնի մինչեւ Ախուրեան:

Մենք չկարողացանք նախատեսնել եւ ջրի ու կրակի ամուսնութիւնը, աւատապետական Անգօրայի եւ կոմմունիստ Մուկուայի այդ սրտառուչ գրկախառնումն ու դաշնակցութիւնը, որի բիրտ ճիրաններում խեղդուեց հայոց անկախ պետութիւնը...

Այս բոլորը գուշակել, նախատեսնել կարող էին միմիայն հայ բոլշևիկները, վասնզի, ընթերցող, նրանք մեզի պէս

սովորական մարդիկ չեն... Նիշշէի «գերմարդիկն» են նրանք, որ գիտեն նոյնիսկ ապագայի մշուշի մէջ յստակօրէն տեսնելու գուշակել:

**Թողնենք սակայն բոլոր թու մարդարէներին** (մարդարէ՝ յետ իրողութեան... Ուշացած մարդարէ) եւ վերադառնանք մեր նիւթին:

**ՄԵՆՔ պարտուեցանք:** Այդ չի նշանակում, սակայն, թէ հայ ազատագրական շարժման փառաւոր Լէգէօնը պէտք է մոռացութեան անդունդը նետուի. չի նշանակում, թէ նրա դաժան աշխատանքը միանգամայն ապարդիւն անցաւ:

**Ո՞չ, ո՞վ ընկերներ:** Այն սերունդն իսկ, որ այսօր ապրում է մեր վեհապանծ Մասիսի շուրջին տակ, այն ազատ մտաւորականութիւնը, որ չի ուզում զլուխ ծուել ոռասական մտրակի ու խարազանի առջեւ, այն ազատ ժողովուրդը, որ երէկ, Փետրուարեան օրերուն մի վսեմ խիզախութեամբ ծառացաւ նոր, օտար տէրերու դէմ, որոնք կ'ուզէին խեղդել խսպառ այդ ազատութիւնը, մեռցնել խսպառ հայ զանգուածի գիտակցութեան մէջ Հրայրներու ու Եփրեմներու ազատատենչ աւանդութիւնները, այն ազատ ժողովուրդը, որ այսօր էլ չի ուզում բոլեւիկ, կօմմունիստ ճանաչել ինքզինքը, որ սրտի խորքերում հեգնում է մեր դեռաբուահիկ կարմիրների ծրագրային բանդագուշակութիւնները, եւ որ միայն համակերպում է – ու պէտք է համակերպի – քաղաքական գերագոյն նպատակներով, այն ազատ ժողովուրդը – թիւրքահայ ու ոռասահայ, ի մի ձուլուած այլ եւս յաւիտեան – ոչ այլ ինչ է, բայց եթէ հարազատ ծնունդ մեր անմահ Լէգէօնի 35-ամեայ դաժան ճիզերու...

**ՄԻՇ վհատիք, ո՞վ ընկերներ. մի՛ ընկճիք ճակատագրի**

շշմեցուցիչ հարուածների տակ, ինչպէս որ չեն ընկճուել Քրիստորը, Ռոստոմը, Զաւարեանը - մեր անբաժան գաղափարական Երրորդութիւնը - այն ահաւոր օրերում, երբ ցար-սովորական կրոնկների տակ խոշտանգուած էր հայկական դատը, փոշիանուած էր կազմակերպութիւնը եւ մահաշոնչ ամայութիւն էր բոլոր ամբողջ սպաւոր հայ աշխարհից:

Ապստամբութեան հրաւէր չեմ կարդուած: Եղերական սխալ կը լինէր Ռուաստանի դէմ այժմ ապստամբիլը: Արդէն Փետրուարեան թոփչքն էլ մի ահեղ ոփսկ էր, որ գուցէ միայն հայ ժողովուրդը կարող էր անել (վրացիք չարին համանման պայմանների մէջ): Հայ ժողովուրդը ուժասպառ է, արինաքամ. Հանգիստ ձգենք ու թողնենք իրերը բնական էլոլիախօնին... Բայց եւ չհամակուինք մի կողմէն մոայլ յոռետեսութեամբ՝ մեր կատարելիք միսսիօնի նկատմամբ, միւս կողմէն՝ պարապ ու յանցաւոր լաւատեսութեամբ՝ թէ հայ բոլեփիկները այլ եւա բաւ են՝ հայոց աշխարհի ճակատագիրը վարելու համար եւ թէ «Դաշնակցութիւնը» այլ եւս աւելորդ է...

Աշխարհը դեռ ծփուած է ալեկոծութեան մէջ, վառող է շնչուած միջազգային լարուած մթնոլորտը եւոչ մի ազգապահովագրուած չէ վաղուան վտանգներէն... Հայ բոլեփիկները, մեծախօս ու գոռող, տօնուած են իրենց յաղթանակները հայ մարտական կուսակցութեան դէմ, բայց դա նմանուած է հրաբուխի վրայ կատարուող խնճոյքին... Վաղն իսկ, միջազգային ոեւէ բարդութեան պարագային, կարող է պատահել որ մեր քաջամարտիկ կարմիրները ոռա զինուորների հետ «կծիկը դնեն» դէպի Թիֆլիզ ու Հայաստան, անտէր, անպաշտպան ձգելով հայ ժողովուրդը... Որովհետեւ, որքան էլ այդ կարմիրները Դաշնակցականներու «յաջորդներ» լինին, նրանցից ոչ ոք

կը պահանջէ այնքան անձնուրացութիւն ու արիութիւն, որ կարողանան վտանգի օրերին թեւ ու թիկունք լինել հայ ժողովրդին, նման Քեռիներուն ու Արամներուն...

Ռուաը, այո՛, վաղն իսկ, առաջին ընդհարումէն յետոյ, կարող է չքանալ Հայաստանի հորիզոններէն (Լենին շատոնց զոհաբերեր է հայ ժողովուրդը տիեզերական Յեղափոխութեանը եւ հայկական դատը նրա համար Եարօսլավցի մէկ զինուորի ոսկրտանքը չարժէ) – կարելի է այնուհետեւ երեւակայել կացութիւնը մի բուռն ժողովրդի, որի ապաէնն են բոլշևիկ հրամանատարներն ու այսպէս անուանուած «կարմիր բանակը»...

Հայ բոլշևիկները կարող էին, զուիցերիական միլիսի սիստեմով, առնուազն 50,000ի հասցնել հայ բանակը, զէնք ու ուազմամթերք պահանջելով Մոսկուայէն, որը այնքան առատաձեռնութեամբ կը մատակարարէ Քեմալականներուն: Զեն անում, սակայն, եւ Հայաստանի կարմիր գունդը բաղկացած է ընդ ամէնը մի քանի հազար զինուորներէ: Այդ թիւն, անշուշտ, բաւարար է հայ կօմմոնիստների աշքում, որոնք վայրի վերոյ յայտարարում են շարունակ, թէ Երրորդ Ինտերնացիոնալը հաշտեցրել է Կովկասեան եւ արեւելեան բոլոր ցեղերը, եւ վերջ դրել ազգամիջեան հակամարտութեան ու ատելութեան: Մենք գիտենք, սակայն, որ դա աղէտաւոր մի պատրանք է, գիտենք, որ «տաճիկ պրոլետարիատը» շատ չի փոխուել Երրորդ Ինտերնացիոնալի դպրոցի մէջ, գիտենք, որ թաթար ցեղը մեծամասնութեամբ մնում է մօլեռանդ մուսավաթական, վրացին մնում է մենշենիկ, որ միջցեղային ատելութիւնները բնաւ չեն պակսել, որ Թիֆլիզի ու Բագուի մէջ պատասխանատու պաշտօններով բազմած հայ կօմմոնիստները, տարաբախտաբար, չեն կարող արծարծել

վրացու, թաթարի մէջ համերաշխութեան զգացումներ դէպի հայութիւնը, այլ միայն ատամների կրծտոց. զիտենք, որ վաղը, առաջին իսկ պատեհ առիթով, ոռաները Կովկասէն, կամ միայն Հայաստանէն քաշուելու պարագային, Բագուէն մինչեւ Ղարաբաղի խորքերը, մինչեւ Գանձակ ու Նախիջեան, թաթար խուժանը պիտի զրոհ տայ հայ անպաշտպան համայնքներու դէմ – ինչպէս 1905-1906ի սեւ օրերուն, եւ այս անգամ, ինքնավստահ, խանդավառ ու յաղթական... «Դաշնակցութիւնը այլեւ չկայ... Զարկ»....

**Զգանստ լինենք:** Զշտապենք թեթեւ սրտով դամբանականներ արտասանել հայ մարտական կազմակերպութեան դիակի վրայ, թաղման ծէսեր կատարել: Հայ ժողովուրդը դեռ պէտք ունի «Դաշնակցութեան»:

Ա՛հ, անշուշտ, նա եւս անզօր է թիւրքական սպառազէն բանակի հանդէպ, ինչպէս որ անզօր էր յոյն զօրքը, բայց, այնուամենայնիւ, նա դեռ եւս ոյժ է, եւ որքան ինձ յայտնի է, բաւականաչափ կենսուրախ ոյժ, որ բնաւ տրամադիր չէ ինքնասպան լինելու:

Նա մի ոյժ է, որ յամենայն դէպս ժողովրդի ինքնապաշտպանութեան գործի մէջ վաստակել է անթառամ դափնիներ: Նրա մեղքը չէր, որ պայթեց համաշխարհային եւ ոռաւ-թիւրքական պատերազմը, բայց եթէ թիւրքաց Հայաստանի համայնաւեր կատաստրօֆէն ճողովրեցան Վասպուրականի հայութեան մի խոշոր հատուածը եւ այլ բեկորներ Մուշէն, Սասունէն, Կարինէն, որոնք այսօր կ'ապրին հայրենիքի կովկասեան բաժնին մէջ, աւելին ասենք, եթէ ինքը կովկասեան հայութիւնը համեմատաբար թեթեւ զոհերով դուրս եկաւ վերջին քսան տարուայ թաթարական ու այլ պոգրոմներէն,

Երբեմն նոյնիսկ շշմեցուցիչ ու խրատական հակահարուածներ տալով իր գոյութեան երդուեալ ոսոխներին, – դա միայն շնորհիւ «Դաշնակցութեան» էր:

Եթէ վերջին քառադարեակում, հայ ժողովուրդը մի յայտնի վարկ, հմայք ու արժանապատութիւն վաստակեց – նոյնիսկ ուազմական տեսակէտից – կովկասեան Բաբելոնի մէջ, յաչս վրացու, ոռափի ու թաթարի, եթէ այդ ժողովուրդների աչքում հիմքից փլեց վաղեմի անարգական հասկացողութիւնը հայի մասին, որ Պուշկին խտացրել էր իր մէկ տիտր դարձուածքի մէջ – «Դու վախկոտ ես, դու հայ ես» – եթէ կովկասցիք սկսեցին աւելի յարգանքով ու նոյնիսկ ակնածութեամբ նայել հայ մարդուն, հայ գաղափարական ու յեղափոխական երիտասարդութեան եւ ամբողջ հայ ընդհանրութեան, – շնորհիւ «Դաշնակցութեան» էր:

Եթէ Հայաստանի հողի վրայ այսօր ստեղծուել է մէկ ու կէս միլիոն (Լեռնային Ղարաբաղն էլ հաշուելով) հոծ, միապաղաղ հայ ազգաբնակութիւն, մի բան որ չէ եղած երկար դարերու մեր պատմութեան մէջ, – այդ եւ շնորհիւ «Դաշնակցութեան» էր, որը, աւանդ, միշտ հնարաւրութիւն չի ունեցել խաղաղ ու մարդավայել միջոցներով լուծելու հայ ազգային գոյութեան այդ ցաւոտ կնճիռը եւ երբեմն հարկադրուել է դիմելու իր դրացիների մեթուներուն...

\*\*\*

Դառնանք այժմ մեր ազատութեան լէգիոնին:

Մի անցեալ, մի ամբողջ պատմութիւն կորսուելու վտանգի մէջ է, մի անցեալ, որի ցաւոտ, արիւնալի գալարումների մէջ այնքան իմացական գանձեր են կուտակուած, այնքան հմայիչ տիպարներ հերոսական անձնազոհութեան: Անտարակոյս,

ամենահարուստ հատուածը հայկեան դարաւոր պատմովինեան... Ի՞նչ է ազգերի կեանքը առանց այդ վսեմ էջերի, առանց այդ իմացական գանձերի... Թափառական բեղուիններու կամ աֆրիկեան անտառաբնակ բուշմէններու մի կենցաղ:

Այդ պատմովինը պէտք է գրել: Իդէալիզմի, հերոսովինեան, գաղափարական անաղարտ մաքրովինեան այդ տիպարները իրենց գործերով հայ սերունդներուն պէտք է ցուցադրել: Հայ պատանիններուն, գիւղացիններուն, արհեստաւորներուն, հայ նորաբողբոջ մտաւորականովինեան... Այս՝ նաեւ երկրի մէջ: Բոլշեվիզմը իր դրակօնեան միջոցներով անգամ չի կարող ջնջել մի անցեալ, որի հետ կապուած է հայ զանգուածը իր սրտի եւ մտքի ամենանուրբ թելերով: Բոլշեվիզմը չպիտի յաջողի ոչնչացնել հայ երկրի մէջ Քրիստոֆորի ու իր ընկերների պաշտամունքը: Ինչ էլ անեն նրանք, այդ պաշտամունքը լինելու է միշտ հայ սերունդներու բարոյական դաստիարակովինեան ամենազօրաւոր խթաններէն մինը:

Գիտեմ, փականքները կան ազատ խօսքի, մամովի դէմ, աւելի բռնաւոր քան Նիկոլայ Լ կայսեր օրով: Բայց տպագրական խօսքը անհասանելի բարձրունքներուն սաւանող արծիւն է, որ կը հեգնէ տարածովինեան ու այլ արգելքները. ոռա, հայ, վրացի սօվետական կառավարովինները, անգամ չինական պարիսպներով, չպիտի կարենան զերծ պահել երկիրը դրսի հոսանքներէն ու ազդեցովիններէն:

\*\*\*

Գրենք ուրեմն, ինչ որ գիտենք, մեր մեծ ուսուցիչներու մասին: Գրենք էականը:

Քրիստովորը՝ իբրեւ մարդ, Քրիստովորը՝ իբրեւ մտածող եւ գործող, իբրեւ առաջնորդ եւ կազմակերպող:



# ԻԲՐԵՒ ՄԱՐԴ

Ապրում են միայն նրանք, որոնք պայքարում են...  
Ու քայլում մտախոհ, վսեմ իղձով տոգորուած  
Սնուցանելով անդադար, ցերեկ եւ գիշեր  
Կամ մի սուրբ աշխատանք եւ կամ թէ մի մեծ սէր...  
ՎԻԳՏՈՐ ՀԻՒԳՈ

Շատ անգամ առիթ եմ ունեցած խօսելու անհատի դերի մասին՝ պատմովեան մէջ: Ինչ էլ որ ասեն, այդ դերը ահագին է: Խօսքս, ի հարկէ, օժտուած, կամքոտ, խոշոր անհատների մասին, որ աստուածային կայծեր են կրում սրտի ու ուղեղի մէջ եւ առաքելական դրոշն ունին իրենց ճակատին: Ստէպ անհատը ինքը մի դրօշ է: Ստէպ՝ նա ինքը մի ամբողջ կազմակերպութիւն է... Ամայովթիւնից խմբեր է դուրս բերում, կազմակերպութիւն է ստեղծագործում: Այդպէս – մեր Քրիստաֆորը:

Յիշենք դարձեալ Խտալիայի օրինակը: Մտքերի ի՞նչ փոթորկում եւ ո՞րպիսի յեղաշրջում առաջ բերեց երիտասարդ Մաձձինին խտալական աշխարհում, որ մինչեւ անցեալ դարու 50-ական թուականները տնքում էր Աւարո-Բուրբոննեան բռնապետութեան լուծի տակ<sup>1</sup>:

Անշուշտ, յեղափոխական աշխատանք կատարուել էր եւ Մաձձինիից առաջ, զիսատորապէս հայրենասիրական ազատաշոնչ զրականութեան միջոցով: Բայց նա էր, որ յուզեց ու շարժեց զանգուածը: Եւ որքան արին... ըստ երեւոյթին թափուած ապարդիւն: Ամէն մի ցնցող նաւաբեկումից յետոյ, երբ դաւադրական ակտերը վերջանում էին զանգուածային կախաղաններով, ամբոխը, տգէտ ու գիտուն, անէծքի շանթեր

Էր թափում Մաձձինիի վրայ... Բայց նա անվրդով շարունակեց իր գործը, անցաւ շատ արիսների ու սարսափների միջից եւ յաղթանակեց: Եւ անիծող ժողովրդի յետնորդները անմահութեան կոթողներ տնկեցին ի պատիւ մեծ Դաւադիրի:

Հարկաւ, մեծ անհատներն եւս ամենակարող չեն: Նրանց գործը յաղթանակով պսակուած է միայն այն ժամանակ, երբ առարկայական պայմանները քիչ-թէ շատ նպաստաւոր են: Այդ պայմանների մէջ են, օրինակ՝ երկրի աշխարհագրական դիրքը, ժողովրդի թուական ոյժը, նրա ամփոփ կամ ցրիւլինելը, ազգային ինքնագիտակցութեան աստիճանը, տիրող բոնապետութեան էութիւնը եւ մանաւանդ արտաքին քաղաքական կացութիւնը: Ասացինք արդին, որ առանց դրսի աջակցութեան, առանց ֆրանսիական հարիւր-հազարաւոր բանակի՝ Մաձձինին, թէկուզ հարիւրաւոր Գարիբալդիներ ունենար իր թիկունքը՝ չպիտի կարողանար յաղթահարել աստրիական, Բուրբոնեան եւ այլ բանակները եւ ազատագրել հայրենիքը:

Առարկայական պայմանները հոն միանգամայն նպաստաւոր էին եւ անհատ-հերոսները – Մաձձինի, Գարիբալդի, Բիքսիօ եւ այլն առանձնապէս բախտաւոր եղան: Երբ շարժման պարագուինները վտանգուած էին, նրանք դիւրութեամբ ապաստան էին գտնուած փոքրիկ, անկախ իտալական Պիէմոնդի մէջ եւ կամ հարեւան ազատ Ֆրանսիայում, ուակից եւ մղեց իր քարոզութիւնը Մաձձինին, երկար տարիներ: Իսկ աստրիական բոնապետութիւնը, որքան էլ դաժան, այնուամենայնիւ, չէր ջարդուած անմեղ ժողովուրդը, յեղափոխականների դաւադրական ակտերի համար:

Համեմատեցէք հայկական իրականութեան հետ... Զգիտեմ՝ ինչ կարող էր անել Մաձձինիի դաւադրական հանճարը

կամ Գարիբալդիի դիցազնական ոգին՝ Հայաստանի պայմաններու մէջ: Եթէ ճիշտ է, որ հերոս անհատի մեծութիւնը չափում է յաղթահարուած արգելքներու մեծութեամբ, ապա չափազանցութիւն չէր լինի ասել, որ հայկական Մաձձինին եւ հայ համեստ Գարիբալդիները իրենց ներքին արժէքով, իրենց անվեհեր թոփչքներով յամենայն դէպս ոչնչով պակաս չեն իտալականներից<sup>2</sup>:

Ծանօթ ճշմարտութիւն է, որ առհասարակ պատմական մեծ, փոթորկոտ վայրկեանները գտնում են իրենց համապատասխան մարդիկը: Անցեալ դարու 70-ական թուականները (պատերազմ, հայոց հարց եւ Բերլինի վեհաժողով) յառաջ մղեցին Փայաջուկցի Հսկային, որ իր վէպերով բոցավառեց ամբողջ հայ երիտասարդութիւնը: Տասը տարի յետոյ, հայկական բողոքը վէպից արդէն անցնում էր կեանքի մէջ, զգացում էր կազմակերպելու հրամայական պահանջը, – եւ հայոց պատմութեան այդ բախտորոշ վայրկեանը չէր կարող գտնել մի աւելի կատարեալ դէմք – իր բարոյական ու իմացական պատկերով եւ իր աննման կազմակերպչական տաղանդով – քան մեր հանգուցեալ Վարպետը:

Եւ գուցէ երբեք այդ ճշմարտութիւնը այնքան սուր կերպով չէր զգացուել, ինչպէս Քրիստաֆորի մահէն յետոյ: Այդ մահը համազգային սուզի կերպարանք առաւ: Հայաստանի վրայ ծանրացած էր ոռա-թիւղթական բոնապետութեան թաթը եւ հայ մամուլը միայն երկշոտ տողերով արձանագրեց կորուստը: Բայց մահուան բօթը խուզ որոտի պէս թափանցեց Հայաստանի ու ամբողջ Կովկասի գիւղ ու քաղաքները, ամէն տեղ վշտի հառաչանք ու մրմունջ խլելով հայ սրտերից: Իսկ երբ 1905-ի Հոկտեմբերեան Մանիքեստէն յետոյ լեզուները բացուեցան, անվերջսպահանդէններութափորներէին, որ կը կազմակերպուէին

ամէնուրեք, խոտն բազմութեան ներկայութեամբ եւ վշտի անկեղծ ու յուզիչ արտայայտութիւններով...

Դժուար է գտնել մի ուրիշ հայ դէմք – Խրիմեանէն զատ – որ այնքան հմայք ու ժողովրդականութիւն վայելէր, այնքան սիրուած ու յարգուած լինէր թէ մտաւրականութենէն եւ թէ զանգուածներէն:

Եւ, սակայն, Քրիստաֆորը չունէր բնաւ այն արտաքին փայլն ու շուրջը, որ բնորոշում է հայոց աշխարհի մեծերին: Նա չէր ունեցած պերճ լեզու, շքեղ տիտղոս ու քարոզչական թափորներ, ինչպէս Խրիմեան. չէր խօսած ամէն օր լրագրի ամբիոնից հայ ժողովրդին, ինչպէս Արծրունի, չէր զրած շեփորող ու լացացնող վէպեր, ինչպէս Ռաֆֆի. չէր օժտուած խօսնակ քնարով, ինչպէս Պատկանեան. չէր կախարդած բազմութիւնները թատրոնական բեմէն, ինչպէս Պետրոս Աղամեան...

Կորած, անշուր, համեստ մի մտաւրական, որի միակ արտաքին փայլը, իր նուրբ, տանջուած, վեհօրէն գեղեցիկ, առաքելական դէմքի մէջ էր:

Շատերը չէին էլ տեսած նրան. ոչ էլ կարդացած էին նրա սակասաթիւ յօդուածները: Շատ շատերին, հեռու գաւառներում, նրա անունն անգամ անծանօթ էր: Բայց մէկ բան զիտէին ամէնքը. նա կազմակերպութեան զլուխն էր եւ ինքը գերազոյն կազմակերպողը, որ նահատակուել էր գործի փշոտ ճանապարհին: Գուցէ այն տարտամ բնազդը կար հայ սգացող երիտասարդութեան մէջ, որ այս մեռնողը տարբեր նիւթից, խմորից էր...

Բանաստեղծներ, հրապարակագիրներ, վիպասաններ ու դերասաններ շատ էր ունեցած հայ ազգը, բայց կազմակերպիչ տաղանդներ սակաւ են ծնուած դարերով պառակտուած, անմիաբանութեան, ծայրայեղ անհատապաշտութեան ախտերով մշակուած հայ անդաստանուամ...

Այդուեղ է, անուշտ, Քրիստաֆորի արտակարգ ժողովրդականութեան գաղտնիքը: Նա leader էր (առաջնորդ) բարիս ճշմարիտ, անգլիական իմաստով, վասնզի ընտիր իմացականութեանը միացնուած էր եւ բարոյական մեծ առաքինութիւններ. հաստատուն նկարագիր, անյողողող կամք, անաղարտ մաքրութիւն եւ անկաշառ շիտակութիւն:

Դուրս նետենք մեր ուղեղներից Մարքսեան յեղաթիւրուած մատերիալիզմի այն անհեթեթ նախապաշարմունքը, թէ անհատը ոչինչ է եւ թէ զանգուածն ու առարկայական պայմանները ամէն բան են: Մէկ երկու ընկերներ եռանդով հոլովուած են այն միտքը, որ արդէն հնացած է եւ հակառակ մեր ծրագրի ոգուն: Եթէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, հիմնադրութեան օրից ի վեր, արագօրէն ճիղաւրուեց իր խորունկ արմատները տարածելով բոլոր հայաբնակ վայրերուած, եթէ նա յարատեւեց այնքան տարիներ, կուրծք տալով թէ՝ արտաքին ահաւոր խոչընդոտներին եւ թէ՝ ներքին «պարբերական» տագնապներին, – այդ բոլորը մի խոշոր չափով կը պարտինք այն իրողութեան, որ Մարմնի գլուխը կանգնած էին գաղափարական, անբիծ մարդիկ եւ միանգամայն հմուտ ղեկավարներ: (Հարկաւ, նրանք եւս մտքի ու գործի հանձարներ չեին, բայց եւ, անտարակոյս, ամենաբարձր տիպարներից էին, որ հայ ցեղը կարող էր արտադրել):

Ապակենտրոնացման ու կենտրոնացման խնդիրները

Երկրորդական իրողութիւններ էին, եւ եթէ Հնչակեան կուսակցութիւնը այնպէս շուտ կազմալուծուեց, պատճառը, հարկաւ, կենտրոնացումը չէր, ոչ իսկ գուցէ կէս-գաղութային իր կերպարանքը, գլխաւոր պատճառն այն էր, որ նա մարդ չունէր իր գլուխը: Պ. Նազարբէգեան մի քանի տարի ցոյց տուեց անսովոր եռանդ, ունէր գրիչ, զուրկ չէր նոյն իսկ հրապարակախօսական շնհորքից – թէեւ յօդուածներից շատերը հայերէն չեն – բայց նրա միապետական բնաւորութիւնը անհնարին կը դարձնէր կազմակերպութեան ծաւալումն ու խորացումը: Եթէ Հնչակեան կուսակցութիւնը կանգնած լինէր իր կոչման բարձրութեան վրայ, լուրջ ու պարկեշտ ղեկավարներով, Քրիստափոր իր բազմաթիւ ընկերներով ու համախոհներով կը յարէր հաւանականօրէն այդ կուսակցութեան եւ պահանջ չէր լինի նոր յեղափոխական կազմակերպութիւն ստեղծելու ու հայութեան ուժերը ցրուելու:

Եւ եթէ նորածին կազմակերպութիւնը մկրտուեցաւ «Դաշնակցութիւն» անունով – դրա պատճառը նոյն Քրիստափորի ու իր ընկերներու հիմնական մտահոգութիւնն էր՝ հաւաքել, կենտրոնացնել գոյութիւն ունեցող բոլոր ցիրուցան յեղափոխական ուժերը: Նոր կազմակերպութիւնը պէտք է լինէր այդ բոլոր ուժերի «դաշնակցութիւնը»: Նրա մէջ պէտք է մտնէր նաև Հնչակը, որ հրափրուած էր, մի յայտնի ժամանակ մասնակցեց միութեան բանակցութիւններուն, բայց, տարաբախտաբար, շուտով խզեց յարաբերութիւնները «Դաշնակցութեան» հիմնադիր խմբերի հետ եւ այդպիսով գրեթէ էն սկզբից բաժան-բաժան գոյութիւն ունեցան հայկական երեք հոսանքներ («Արմէնիան» փոքրաթիւ հետեւողներ միայն ունէր) մի հանգամանք, որ ի հարկէ որոշ չափով վնասեց ընդհանուր շարժման:



Քրիստափոր Միքայէլ Եան

# ԻՐ ԿԵԱՆՔԸ

Քրիստաֆորը ծնուել է Գողթանի սիրուն մայրաքաղաքում – Վերին Ագովիս – մի աշխայժ, գործօն, գերազանցապէս օժտուած համայնքի մէջ, որը Ղարաբաղի ժողովրդի հետ կազմում է կովկասեան հայութեան սերը, ամենաընդունակ, ամենաընտիր հատուածը: Զոկ եւ Ղարաբաղցի կազմում են այդ երկրի – կարելի է համարձակ ասել՝ ամբողջ Կովկասի – ամենաձեռնարկու, ամենաանհանգիստ ու գործունեայ տարրերը, որ սիրում են նետովիլ դէպի հեռաւոր հորիզոններ, առեստրական նպատակներով կատարում են մեծ, արկածալի ուղեւորութիւններ դէպի Պարսկաստան, Ռուսիա եւ Եւրոպա, դեռ անցեալ դարու 50-ական թուականներէն, երբ շատ տեղերում երկաթուղին գոյութիւն չունէր: Ուղեւորութիւններն ու առեստրական յարաբերութիւնները լուսաւոր կենտորնների հետ առաջ են բերում մտքերի շփում ու փոխանակութիւն, բարձրացնելով միաժամանակ համայնքի նիւթական բարեկեցութեան մակարդակը, որ անհրաժեշտ իսթաններից մինն է կուտուրայի եւ առաջադիմութեան:

Եւ Ագովիսը 80-ական թուականներին արդէն շէն, բարգաւաճ մի գիւղաքաղաք էր, միաժամանակ հայկական մշակոյթի մի օրրան, ուր կը խօսուէր համեմատաբար սիրուն, ներդաշնակ հայ բարբառ: Երբ Ղարաբաղէն մեկնելով եւ Զանգեզուրի շրեղագարդ լեռ ու հովիտները կտրելով, չորս-հինգ օրուայ յոգնատանջ ուղեւորութենէն յետոյ հասնում էիք Ագովիս, ձեզ թուամ էր, թէ անապատէն մէկէն ի մէկ ընկնում էիք սիրուն, դալարագեղ մի օվասիս...

Հակապատկերը, կօնտրաստը կատարեալ էր. Զանգեզուրը՝ իր ժողովրդով՝ կոշտ, անտաշ, նահապետական, իսկ Ագովիսը՝

զրեթէ եւրոպական մի գիւղաքաղաք, ուր մարդիկ, կանալք աչքի էին ընկնում իրենց նորաձեւ կեցուածքով, իրենց բարեկիրթ շարժ ու ձեւերով ու քաղցրահնչիւն հայ բարբառով, Ագովիսը՝ մի գիւղաքաղաք, ուր կային դպրոցներ ու գրադարաններ, կուլտուրական այլ եւ այլ հասատատութիւններ:

Զարմանալի չէ, որ այդտեղից դուրս եկան ոռասահայոց վերածնութեան մի շարք առաջամարտիկներ՝ Քրիստաֆորի հետ Բուրխուղարեաններ, Քալանթարներ, Արասխանեան, Ք. Թաղէոսեան եւայլն: Քիչ անդին, Ագովիսէն մի երկու մղոն հեռաւորութեան վրայ, Ցղնա գիւղում ծնուել է մեր Ռոստոմը:

Ագովիսը՝ մի ճշմարիտ օվասիս նաեւ արտաքին իր տեսքով, մի գեղեցիկ, մշակուած ծառաստան, իսկ շուրջը, ընդարձակ տարածութեան վրայ՝ լերկ ժայռեր ու կիրճեր միայն: Անշուշտ, այդ ամայութեան շնորհիւ է, բնական միջավայրի այդ աղքատութեան, անբերրիութեան շնորհիւ է, որ Ագովիսի բնակիչների մէջ վաղաժամ զարգացել է առեւտրի սէրը, տոկոն, արտակարգ աշխատասիրութիւնը, մաքառելու հզօր բնագդը եւ թափառական կեանքի տենչը:



Վերին Ագուլիս, 20-րդ դարի սկիզբ

**Աշխարհագրական աղքատ միջավայր – ուր, սակայն, լեռ  
ու ձորերը լեցուն են Դաւիթ Բէկեան կոփառու յուշերով եւ  
այլ պատմական աւանդութիւններով...**

**Ահա այդպիսի միջավայրում են ծնուել հայոց նորագոյն  
պատմութեան երկու տիրական ու պայծառ դէմքերը –  
Քրիստաֆոր եւ Ռոստոմ: Թողնենք առ այժմ Ռոստոմին եւ  
զբաղուենք Քրիստաֆորով:**

\*\*\*



**Քրիստափոր Սիքայէլեան**

Նրա մանկութիւնն ու պատանեկութիւնը թո՛ղ գրեն իր անմիջական հարազատները: Գիտենք, որ այն օրից, ինչ Քրիստաֆոր Միքայէլեանը աչք է բացել ու սկսել է գիտակցական կեանքով ապրել, նա տոգորուած է եղել ժողովրդին ծառայելու բուռն տենչանքով: Գիտենք, որ նա շատ երիտասարդ աւարտել է Թիֆլիսի Ուսուցչական ծեմարանը, կովկասեան բարձրագոյն դպրոցներէն մինը, ուր կը պատրաստուէին ժողովրդական ուսուցիչներ գաւառներու համար:

Ապա ուսումնաւարտ Միքայէլեանը սկսել է իր կառիերը համեստ ձեւով, իբրեւ գիտական ուսուցիչ. պաշտօնավարել է իր ծննդավայր Ազուլիսի մէջ, եղել է հմուտ, խղճամիտ ու բեղուն ուսուցիչ: Այն ժամանակ, հայ առաջադիմական մամուն ու գրականութիւնը մէկ գերազոյն կարգախօս ունէին – դպրոցը: Դպրոցը՝ մեծ վերանորոգիչն ու յեղափոխիչը, դպրոցը՝ գերազանց գործիքը հայ սերունդներու կրթութեան ու դաստիարակութեան՝ ժամանակակից ազատաշունչ գաղափարներու ոգով. դպրոցը Քրիստաֆորի գործունէութեան առաջին ասպարէզն եղաւ:

Սակայն, դպրոցական գործունէութիւնը գիտաքաղաքում չէր կարող գոհացնել նրան. նա ձգտում էր դէպի աւելի լայն հորիզոն, որպէս արծիւը փակուած վանդակի մէջ. ձգտում էր շարունակ դէպի համալսարան՝ բարձրագոյն ուսման երազով: Եւ նա անցուցել է շատ նեղ օրեր, վարել է խիստ չարքաշ կեանք, ապրել է միշտ նիւթական կարօտութեան մէջ, պայքարել է բազմաթիւ խոչընդոտներու դէմ՝ հէնց միայն Մոսկուա երթալու իր իղձը կատարելու համար:

Այդ բոլորին պերճախօս վկայ է հետեւեալ թղթակցութիւնը Քրիստաֆորի մասին, որ գտայ պատահմամբ այս օրերս «Մեղու

**Հայաստանի»ի հինաւուրց էջերը պրապտելիս:** Թղթակցութիւնը 1881 մարտ 15-ին է, Վերին Ագուլիսէն, ուր 23 տարեկան Քրիստաֆորը, վարժապետ էր դպրոցի մէջ:

**Թղթակիցը, Վիշապազոն ստորագրութեամբ, հաղորդում** է, թէ «Կայացաւ տղայոց ուսումնարանի երեսփոխանական ժողով» եւ որ այդտեղ օրակարգի հարցերէն մինն էր՝ «տեղույն ուսումնարանի ծախսով ուսում առած եւ այժմ ուսուցիչ պ. Միքայէլեանի ոռձիկի հարցը»:

Եւ – ասում է Վիշապազոնը – «Միքայէլեանի հարցը մեծ հակածառութեան նիւթ եղաւ»: Ահա հարցի էութիւնը թղթակցի բառերով.

«Ուսումնարանը իւր ծախքով պարոնին ուղարկել է Թիֆլիսի Ուսուցչական Դպրոցը, որ այնտեղ աւարտելուց յետոյ գայ եւ այստեղի ուսումնարանում ուսուցչի պաշտօն վարէ իւր կարդացած տարիներից երկու տարի աւելի, տարեկան ոռձիկ 150 մանէթ. (ամսական 12 1/2 ոռվլի. Մ. Վ.):

«Դ. Միքայէլեանը, ուսման սիրով ոգեւորուած, առանցքնելու այդպիսի տարօրինակ պայմանը, ընդունում է: Աւարտելուց յետոյ, պարոնը խնդրում է, որ ուսումնարանը իւրեան օգնէ բարձրագոյն ուսում ստանալու եւ աւելի կատարելագործուած ուսումնարանին ծառայէ, իսկ հոգաբարձուք յայտնուած են, որ գայ դեռ մի տարի ուսուցչութիւն անէ եւ այդ մի տարուայ ընթացքում նոքա խոստանուած են որքան հնար է աշխատել բարերարներ գտնելու նորա համար եւ միեւնոյն ժամանակ յայտնուած, թէ փոխանակ տարին 150 ոռվլի տալու, զիջուան կ'անեն: Պարոնը եկաւ եւ այժմ ուսուցիչ է»....

Երկար վիճաբանութեան նիւթ է դառնում հոգաբարձական ժողովներու մէջ եւ այդ «զիջումի» հարցը (այսինքն՝ ոռճիկը աւելացնելու): Թղթակիցը շարունակում է.

«Այժմ այդ ժողովում խօսուեցաւ, թէ որքան զիջում լինի: Շատերը իրանց վաճառականական կէտից քննելով, առաջարկեցին, որ 150 ոութուց ոչ մի կոպէկ աւել չը տրուի...

Բայց այդ խիստ առաջարկութիւնը մերժուեցաւ եւ երկար խօսակցութիւնից յետոյ վճռուեցաւ, որ նորան 300 ոութիւն, իսկ եթէ կը խոստանայ եւ հետեւեալ տարիները մնալու, ոռճիկը էլի աւելացնեն ժողովի համաձայնութեամբ, ապա թէ ոչ, նորանից ստանան ուսումնարանի արած ծախսը իւր տոկոսով:

«Գալով նորան օգնելու մասին, հոգաբարձուք յայնտեցին որ ուսումնարանը միջոց չունի օգնելու:

«Յանակիլի կը լինէր, որ հոգաբարձուք մտածէին այս մասին, կամ բարերարներ գտնէին եւ կամ ուսումնարանի դրամագլխից օգնէին»...

Այս տողերը բերինք ցոյց տալու համար, թէ որքան տխուր պայմաններում է սկսել իր կառիերը այն մարդը, որ 15-20 տարի յետոյ պիտի դառնար հայ երիտասարդութեան փայփայած կուտքը: Սակայն, այդպէս եղած է գրեթէ բոլոր նշանաւոր հայ գործիչներու ճակատագիրը:

Այնուհետեւ, Քրիստաֆորի կեանքին հետեւելու համար, դիմելու ենք անմիջական աղբիւրին – իրեն – Քրիստաֆորին: 1903ին, երբ «Փոթորկի» շրջանը աւարտելէ յետոյ,

պատրաստում էր նետուելու a corps perdu նոր վտանգալի ձեռնարկի մէջ, ընկերներու բուռն յորդորներու վրայ, Դաշնակցութեան լիդերը ժատ լեզուով թելադրեց Ժընեվի մէջ քանի մը թուցիկ տեղեկութիւններ իր երիտասարդութեան օրերէն: Դա միակ կենսագրական վաւերաթուղթն է, որ մնում է «Դրօշակ»ի խմբագրատանը: Երանի գէլթ այդքանը թողնէին եւ մեր միա ընկերները:

1878-79ի ոռա յեղափոխական շարժումը – կարդում ենք այդ վաւերագրի մէջ – արձագանգ գտաւ եւ Կովկասում: Այլազան ժողովուրդներու պատկանող երիտասարդութիւնը կը կարդար գաղտնի ոռա գրականութիւնը, կը հետեւէր Ռուսաստանի դաւադրական գործողութիւններուն, կ'ունկնդրէր եւ եկտր յեղափոխական քարոզիչներուն:

Ագահօրէն այդ երիտասարդութիւնը նվիրուեց ինքնազարգացման: Նա կը պատրաստէր հանրային-յեղափոխական գործունէութեան: Տիրական հմայք էր վաստակել ոռա «Ժողովրդական Կամքի» կուսակցութիւնը: Միջազգային ընկերվարականութիւնը երիտասարդութեան իտէալն էր: Ազգային խնդիրները ոչ ոքի չէին զբաղեցնուած: Ամէնքը համսշխարհաքաղաքացիներ էին: 1880-ին կազմուած մի կոմիտէի մէջ կային 2 հայ, մէկ հայուհի, 2 վարցի եւ մէկ վրացուհի:

Կոչում էին ինքնազարգացման «Կրուժօկներ», շրջանակներ:

1880-ին ինքը Քրիստաֆորը, աւարտելով Ռասուցական ինստիտուտը, զնում է Ազուլիս, եւ մի տարի յետոյ վերադառնուած է Թիֆլիս: Նա քարոզում է Թիֆլիսեան շրջանակներում, որ բաւական չեն տեսական, վերացական պարապմունքները, այլ

որ հարկ է զբաղուել նաեւ ծայրագաւառային խնդիրներով, հարկ է ստեղծել ազգային մարմիններ, որոնց կոչումը պէտք է լինէր՝ քարոզ մղել հարազատ զանգուածներու մէջ: Մի բան, որ չէր խանգարի եւ ազգերու համերաշխութեան: Քրիստաֆորի այդ առաջարկի դէմ բողոքում են հայ ու վրացի ընկերները...

Սակայն 1882-ին, երբ Քրիստաֆորը գիւղն էր, Թիֆլիզի խառն կոմիտէն լուծում է եւ կազմուամ են ազգային կրուժօկներ: Եւ հայկական կոմիտէն, նուիրտում է հայ ժողովրդային շահերու պաշտպանութեան, ինչպէս ժամանակին ծրագրել էր Քրիստաֆորը:

Ազգային, հայրենասիրական այդ տրամադրութիւնը զարկ է տալիս այն մեծ ռէակցիան – յետադիմական շարժումը – որ սկսուեց Ռուսաստանում Ալեքսանդր II-ի սպանութենէն ի վեր (1881 Մարտ):

Կրուժօկներումէջ կարդուամ են հայերէն: Խմբերը կամաց-աճուամ են: Նրանք զբաղուամ էին ինքնազարգացմամբ, հրատարակուամ էին թուոցիկներ, այլեւայլն բնաբաններով՝ Ռաֆֆիէն, Նալբանդեանէն... կարգախօսներ՝ որոնք պահանջուամ էին հայոց ազատութիւնը օսմանեան լուծէն: Ունէին դրամարկղ, կարդուամ էին դասախօսութիւններ, մարդիկ կը դրկէին Թիվքաց Հայաստան՝ ուսումնասիրութեան նպատակով (Օր. S. Փիրումեան, Հայկ Մելիք-Դադայեան, Զաք. Թաւաքալեան եւ այլն):

Թիֆլիզեան խմբերի մէջ էին ի միջի այլոց Արսէն Թոխմախսեան, Դափիթ եւ Թամարա Ներսէսեան, Սիմօն ու Սրապիօն Տէր Գրիգորեան: Վերջին չորսը Մոսկուա գնացին, ուր Միք. Զալեանի<sup>3</sup> հետ սկիզբ դրին հայ գաղտնի մամուկի

ու հրապարակեցին «Ազատութեան Աւետաբեր»ը, (1883-ին):

1884-ին Քրիստ. Միքայէլեանը վերստին Թիֆլիզ է եւ ղեկավարում է Մշեցիներէ բաղկացած մի խումբ: Զրի սովորում էին նրանք հայերէն գրել, մարզում էին եւ հրացանաձգութեան մէջ, Քրիստաֆորը պարապում էր նրանց հետ եւ բնագիտութիւնից: Այդ շրջանէն դուրս եկան՝ Արաբօ, Մարգար վարժապետ եւ Քաւոր Պետրոս:

1885-ին դպրոցներու փակման առիթով հրատարակում են 2-3 թուցիկներ, որոնք կոչում էին հայութիւնը դէպի դիմադրութիւն:

Ապա Քրիստաֆոր մեկնում է Մոսկուա, ուր մնում է մինչեւ 1887-ի ամառը: Այնտեղ նա մտնում է հայ հայրենասէր ուսանողներու շրջանը (կար եւ շրջանը հայ կօսմօպօլիտներու): Այնտեղ ձգտում է լրացնել իր մտաւոր պաշարը:

1887-ին Թիֆլիզ վերադառնալով, Քրիստաֆոր վերսկսում է իր աշխատանքը գրեթէ ամայութեան մէջ: Շուտով սակայն կազմակերպում են այլ եւ այլ խմբեր: Կար Արծրունի-Սունդուկեանի կրուժօկը, որ կ'աշխատէր գլուխ բերել Թիֆլաց Հայաստանի գրաւումը ուսաներու ձեռքով: Կազմուեց «Երիտասարդ Հայաստանի» խումբը, որի անդամներ են իշութեան, Նիկ. Մատինեան: Առաջ են գալիս այլ գաղտնի կազմակերպութիւններ...

Այստեղ, տարաբախտաբար, կտրւում է Քրիստաֆորի տեղեկութիւններու թելը:

Գիտենք, որ նա 1889-ին նորէն ուսուցիչ էր, այս անգամ աւագ

ուսուցիչ՝ Ազովիսուամ: Թերեւա աւելորդ չէ յիշատակել այստեղ մի բանակոփու – կարծատեւ, բայց կծու – որ ծագեց 1888-ի վերջերին Քրիստաֆորի եւ «Արձագանգ»ի խմբագրութեան միջեւ՝ դպրոցական դասագրքերու շուրջ: «Մշակ»ի 1888 թ. թիւ 131-ում Քրիստաֆորը հրատարակել էր մի յօդուած «Դասագրքեր եւ Հրապարական ոչկլամ» խորագրով: Բողոքուած էր վատ դասագրքերի դէմ, որոնց համար «Արձագանգ»ը եւ նրա համախոհները անարժան ոչկլամներ էին անում:

Աբգար Յովհաննիսեանի թերթը իր պատասխանի մէջ յայտարարուած է, որ «ինքնակոչ մանկավարժ» Միքայէլեանը մտցրել է դպրոցի մէջ մի ձեռնարկ, – Վոլպերի ձեռնարկը – որ չէ հաստատուած հոգեւոր իշխանութենէն... եւ մեղադրուած է Միքայէլեանին անիշխանութեան, սանձարձակութեան մէջ:

«Մշակի» թիւ 143-ի մէջ Քրիստաֆոր պատասխանուած է, ակնարկելով, որ «Արձագանգ»ը պարզապէս մատնութիւն է անում...

«Արձագանգ»ի մանկավարժների հետ, ասում էնա, անկարելի է խօսել, ինչպէս որ անկարելի է դիսպուտի, վիճաբանութեան միջոցով առաքինութիւն ներշնչել գայլաձկներին» (հոչակատր Շչեղրինի խօսքն է):

Աւագ ուսուցչութիւնը շատ չտեւեց, վասնզի հայ կեանքը մրրկուած էր եւ աշխատանքը եռուած ոռահայոց մտաւոր կենտրոն-Թիֆլիսի մէջ:

Հոն զատ-զատ գոյութիւն ունէին մի շարք հայրենասիրական խմբեր, որոնց մէջ էին մտնուած ժամանակի հայ առաջադէմ մտաւորական դէմքերը: Նրանք բոլորը սպասուած էին վարպետ-

դարբնին, որ պիտի գար կոելու միութիւնը այդ ցիր ու ցան կազմակերպութեանց:

Հանդարտ, համեստ, առանց գահավէժի, առանց աղմուկի՝ Քրիստաֆորը սպասեց իր բաղձալի թատերամուտի ժամին... Եւ ժամը հասաւ, նա նետուեց իր ուժեղ անհատականութեան ամբողջ թափով հատուածներու տենդային վիճաբանութեանց ու բախումներու մէջ, չէզոքացրեց կենտրոնախոյս բնագդները, մօտեցրեց հակամարտ ոյժերը եւ վարպետ ձեռքով կոեց «Դաշնակցութեան» ճակատագիրը:

Այնքան անջատ խմբաւորումներ ի մի ձուկելու, այնքան հակամարտ, կենտրոնախոյս տարրեր քով քովի բերելու եւ մի կուռ, ներդաշնակ միութիւն ստեղծելու համար, անհրաժեշտ էր իրօք կազմակերպչական մի խոշոր տաղանդ, մի մարդ որ ոչ միայն մտաւորապէս, այլ եւ բարոյապէս կանգնած լինէր պատմական վայրկեանի բարձրութեան վրայ, որ յեղափոխական անբիծ ու աննկուն նկարագրի հետ ունենար եւ անսովոր տակտ, ճկունութիւն ու հոտառութիւն, մարդկանց ներաշխարհը թափանցելու կարողութիւն, գաղափարական գործակիցներն ընտրելու ձիրք, անաշառ ու հաշտարար ոգի, զուապ ու հասասարակիու բնաւորութիւն եւ մի իրօք հազուագիտ վարուեցողութիւն, որպիսին դժուար է գտնել հայոց վերածնութեան նախորդ ուահվիրաներու մօտ:

**Այդպիսի մէկն էր Քրիստաֆորը:**

Եւ եթէ Հ. Յ. Դաշնակցութեան վարիչ շրջաններում, սկզբից ի վեր, հակառակ այնքան ջախջախիչ արտաքին հարուածներուն ու ներքին խմորումներուն, իշխեց միշտ եղբայրական համերաշխութիւնը, եթէ հայ մարտական կազմակերպութիւնը

տասնեակ տարիներու ընթացքին – Հիմնադրի մահին յետոյ եւս – կարողացաւ միշտ ճողոպրիլ սովորականութեան եւ ցարիզմի որոգայթներէն ու բոլոր քայքայիչ աղէտներէն, դրա գլխաւոր պատճառներէն մէկն էլ այն էր, որ հոն, այդ կազմակերպութեան ծաւալուն խորշերու մէջ, ապրում էր միշտ – ապրում էր գէթ մասամբ – Քրիստաֆորի ոգին:

**Գաղափարական ընկերայնութեան ոգին էր դա, որ այնքան**



Քրիստափոր եւ Սիմոն Զաւարեան  
Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրատան բակը

Զերմութիւն, հմայք ու հրապոյր կը հաղորդէր մեր մթնոլորտին եւ որ կը բղխէր մեր մեծ ընկերոջ ամէն մի խօսքէն, ամէն մի ժեսթէն ու նամակէն:

Ես մի անգամ արդէն – Վոամեանի մասին խօսելիս – լիշատակելեմՔրիստաֆորինամակները, ուղղուածգաւառական եւ արտասահմանեան կոմիտէներուն ու գործիչներուն, – նամակներ, որոնցից այսօր, տարաբախտաբար, շատ քչերն են մնացել, մեծ մասը հողմերու բերանն է նետուել – նահատակներու նշխարներուն պէս – Արեւելքի բոնակալական երկիրներու մէջ:

Ես գրել էի, որ այդ նամակները ստէպ մի մի բանախօսութիւն են, սեղմ ու հիվթալի, այլ եւ այլ խնդիրներու շուրջ: Իրաքանչիւրի մէջ երեւան է զալիս մարդը, գործիչը, քարոզիչը, իրաքանչիւրի մէջ ցոլում է նրա հիմնական, այրող ու տանջող մտահոգութիւնը՝ պատրաստել մաքուր ու գիտակից հաւատացեալներու շարքեր, վառել նրանց մէջ հաւատն ու սէրը դէպի գործը, դարբնել նրանց մէջ անխորտակելի համոզումը, որ միմիայն դաժան, զոհառատ պայքարի մէջ հայ ժողովուրդը պիտի գտնէ իր փրկութիւնը:

Եւ այդ նամակներու հեղինակը ներկայանում է մեզ՝ ոչ իբրեւ ուսուցիչ ու դաստիարակ, այլ իբրեւ ընկեր ու բարեկամ: Ընկերական – ոչ մենթօրական, վարդապետական – տոնով կը վարէր Քրիստաֆորը իր յեղափոխական քարոզութիւնը:

Երբեմն ասես – պատասխանատու այս կամ այն խնդրի առթիւ հրահանգներ տալիս – խղճի քրիզ ունէր եւ հակամէտ էր ինքն իսկ փաստաբանելու իր պաշտպանած թեզի հակառակը... մի՛ գուցէ իր կարծիքը համապատասխան չլինէր ճշմարտութեան:



428 ՅԵՂԻՓՈԽԱՎԿԱՇ ԴԱՅԱՎԿՈՒԹՅՈՒՆ

—→ 1890 ←—

(FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE)

\* 1898 \*

URTHUSTUR PHHRO

21 ottobre 1900

No. 12

Whale park.

Wm G'

the, is it half a year? though we get no news.  
from: because we expect you to be in our  
party, & go with us to see our friends. We have got  
two tickets to the grand: concert. We expect to be  
there at 10 o'clock & take up our seats by 10 o'clock  
in the hall: though we do not know if we shall be  
able to get them, as we are not yet admitted to the  
grand hall, though we have been invited to the  
concert. We expect to be there at 10 o'clock: &  
then go to the grand hall: & sit down in our  
seats. We expect to be there at 10 o'clock: &  
then go to the grand hall: & sit down in our  
seats. We expect to be there at 10 o'clock: &  
then go to the grand hall: & sit down in our  
seats. We expect to be there at 10 o'clock: &

Но вътре във възможността (Макарът боя) са издигнати същите  
принципи, които са външни, като Гюнтер, и които са външни  
и във възможността да са използвани за подобна целост.  
Но във възможността, която съществува във възможността да се  
използват, като този на Гюнтер, една чиста енергия.  
Но във възможността и като този на Гюнтер, една чиста  
енергия.

## Սիքայէլին Փարիզ.

## Քրիստոնության ձեռագիր՝ Նամակը

21 Փետրուար 1900

(Այդ գիծը, թերեւա աւելի մեծ շափով, յատուկ էր մեր միա ողբացեալ ընկերոջ՝ Զաւարեանին... Երկուսն էլ խղճի մարդիկ էին, խորապէս զիտակից մարդկային սխալականութեան եւ իրենց ծանր, պատասխանատու կոչման):

Եթէ երբեմն այս կամ այն առթիւ ցուրտ խօսքեր կ'ուղղէր այս ու այն ընկերոջ, կը շտապէր ներողութիւն խնդրել, մի քանի ջերմ խօսքերով զինաթափ կ'անէր ամենաբուռն դժգոհութիւնները:

Առջեւա է 1900 թուականին ինձ զրած իր մի ընդարձակ նամակը (ուղղուած Փարիզ), որի մէջ խստիւ կը դատապարտէր իմ ընթացքը Արփիարի «դաւաճանութեան» ծանօթ խնդրում: (Մանրամասնօրէն կը յիշատակեմ սոյն տեսութեան երկրորդ զիսի մէջ):

Յանդիմանական այդ գրութիւնը, սակայն, վերջանում է հետեւեալ տողերով.

«Ես վերջացրի իմ ասելիքը.

Եթէ ես սխալուամ եմ, ընդոնիր նախօրէն իմ ներողութիւնը եւ ի նկատի առ նաեւ իմ պատրաստականութիւնը լսելու թէկուզ քո խիստ հայիոյանքները: Եթէ չեմ սխալուամ կամ ճշմարտութեան մի մաս կայ իմ ասածներում, ապա իմացիր քո անելիքը: Յամենայն դէպս երբեք չմոռանաս, որ այս բոլորը գրեցի քեզ իբր քեզ սիրող եւ մտերիմ ընկեր»:

Մի այլ նամակում, ուղղուած նոյն 1900-ին, «Փարիզի ընկերներին» (Ահարոնեան, Լորիս-Մելիքեան եւ ես այն ժամանակ կը ներկայացնէինք «Դաշնակցութիւնը» Փարիզում), Քրիստաֆոր գրում էր Ժընեւէն Արեւմտեան Բիւրօի անունով՝ «Պրօ Արմէնիա»ի հիմնադրութեան եւ փարիզեան

գործունէովմեան շուրջը, մեր եւ Ժընեվի միջեւ ծագած մի քանի տարածայնովթիւններու առթիւ, զրում էր կծու քննադատական: Եւ ահա նամակի վերջաբանը.

«Ահա այն ամէնը, ինչ մեր մէջ խօսուել է եւ ինչ կարեւոր համարեցինք ձեզ զրել: Տեղ-տեղ եթէ նամակիս ոճը խիստ թուի ձեզ, ինդրում, աղաչում եմ ոչ մի ուրիշ նշանակովթիւն շտաք դրան, բայց եթէ միայն, որ մենք ցանկացել ենք ըստ կարեւոյն աւելի լաւ պարզել մեր հայեացքները, որպէսզի հարցը այլեւա երկար չճգնագուի եւ մենք պատճառ չինինք ձեր գործի դանդաղելուն:

«Կ'ընդունէք դուք մեր առաջարկներից մէկը կամ միաը, թէ ի նկատի ունենալով մեր (այս անգամ արդէն չափազանց որոշ) կարծիքները, ինքներդ աւելի յարմար մի կօմբինացիա կը գտնէք,- այդ արդէն սրանից յետոյ թող ձեր գործը լինի: Իսկ մենք ընդունելով թէ թերթի կարեւորովթիւնը եւ թէ ենթադրող կոմիտէի համար պահանջուելիք ծախսերը, կը հոգանք դրամական մասի վրայ:

Յաջողովթի՞ն ձեզ եւ մի փոքր բախտ հայի դատին»...\* (Բոլոր քաղուածքները անուան ենք բառացի, պահպանելով հեղինակի ոճը, ուղղագրովթիւնը, ընդգծումները եւայլն: Այս բոլոր նամակները, որ արդէն պատմովթեան սեփականովթիւն են, յետագայում թերեւա կը հրատարակուին ամբողջովթեամբ:)

Հետեւեալ զրովթիւնը, ինծի ուղղուած, աւելի հին է. նա թուագրուած է 1899 դեկտեմբեր 22, երբ ես մենակ էի Փարիզի մէջ (Ահարոնեան Լօգան էր) եւ բժ. Լորիս-Մելիքեան նոր կու գար Պետրոգրատէն, Քրիստաֆորի հրաէրով, իր կապերը օգտագործելու՝ մեր արտասահմանեան պրոպագանտը

**ուժեղացնելու համար:**

## **Քրիստաֆոր պրում էր.**

«Թայինեանին<sup>4</sup> տեսած կը լինիս արդիս: Հեռուից հեռու տէ էլ երկար «հրահանգներ» չսպասէք մեզնից, ինչպէս հեզմուա ես դու: Զեզ ենք տալիս ամբողջ Փարիզը եւ թէ ուզենաք ամբողջ Ֆրանսիան իր Լուֆէներով եայլն: Ինչ խելքներդ կը կտրի արէք, – մեզ ընդունելի է»:

\*\*\*\*\*

Ղարիբը<sup>5</sup> նորերս այստեղ էր եւ ասում էր, որ Փետրուարի վերջին նա էլ է վճռել այդտեղ գալ. կազմտում է ուրեմն մի հիանալի Տրիոմվիրատ<sup>6</sup>, որը կարող է միանգամայն պատիւ բերել «Դաշնակցութեան»: Տեղներուամդ միայն պինդ նստեցէք, սիրեցէք միմիեանց եւ կանոնաւորէք պարապմունքներդ:

«Ճիշդ է, դրամի սղութիւնը մեզ նեղում է եւ նեղելու է, բայց այդ մասին էլ ահա մտածում ենք մի վճռական քայլ անել: Առ այժմ դիմել ենք Ռուսոմի եւ Բօրիսի<sup>7</sup> խորհուրդներին, որոնց համաձայնութիւնը, իբր Բիւրօի անդամների, կարեւոր էր: Զեզ հետ էլ, ի հարկէ, կը խորհրդակցենք: Հարցը կայանում է պատասխանատու մարմիններից մի արտակարգ ժողով գումարելու եւ այդ մարմիններից մի-մի անդամ բացառապէս դրամական գործով զբաղուելու համար հանելու մէջ: Տեսնենք, գուցէ առանց ժողովի էլ համաձայնութիւն կայանայ այդպիսի մի որոշում ընդունել: Ա՛խ, մի փոքր աւելի կրակ մեր բոլորիս մէջ, – եւ գուցէ մեր գործերը այդ դրութեան մէջ չինէին...» (ստորագրողը ես եմ Մ.Վ.):

**Մի այլ նամակով (1900 թ. մայիս) նոյն յորդորն էր ուղղում**

**Ինձ ու ընկերներին.**

«Աւետիսը... մի քանի տեղեկութիւններ բերած կը լինի մեզնից: Ծանօթացրու մի լաւ Թայխնեանի հետ եւ ասա՛ որ քեզ հետ միասին սիրի նրան: Զեր սէրը նրան միշտ ջերմ կը պահի եւ յուսահատուելու նրա հակումները կ'անհետանան»:

\*

\* \*

-«Սիրեցէք միմիեանց»...

Նազովրեցու հոչակատր խօսքը կը հնչեցնէր «Դաշնակցութեան» հիմնադիրը նոյն Նազովրեցիական պարզութեամբ, առանց պաթեթիկ շեշտերու եւ ճարտասանական թօս-երու: Կազմակերպութեան արշալոյսէն մինչեւ իր եղերական մահը, կրկնել է միշտ այդ գեղեցիկ յանկերգը. նա ինքը սիրել է միշտ իր գաղափարակից ընկերներին եւ ձգտել է նոյն սիրով տոգորել կուսակցական շարքերը: Հայ առաջադիմութեան ուահվիրաներէն գուցէ ոչ ոք այնքան խորոնկ չի զգացել հայի անսէր ու ամբարիշտ բարքերը եւ ոչ ոք, անտարակոյս, չի թափել այնքան յամառ ու բեղուն ճիգ՝ այդ ցեղային արատը վերացնելու կամ գէթ մասամբ մեղմելու:

Քրիստաֆորի կեանքի նպատակն էր այդ Նա գիտէր, որ հայ ազգի ազատագրութեան հսկայ գործը յաջողութեամբ պսակելու համար, անհրաժեշտ է հաւաքել մաքսիմում-ը ցեղի գործոն ոյժերու, անհրաժեշտ է դարբնել ազատութեան գերազոյն գործիքը, հայ ժողովրդի մեծագոյն յեղափոխական կազմակերպութիւնը: Նա գիտէր, որ այդ գործիքը ազդու եւ տեսական դարձնելու համար, պէտք էր փշրել հայ

մարդկանց դարաւոր անմիաբանութեան ու ծայրայեղ անհատապաշտութեան սառուցը, իսկ այն փշրել կարող էր միայն սիրոյ անդով, ջերմացնող ու կենսարար հոսանքը, միացած յեղափոխական կենդանի, դժողակ, ինքնին արդին մաքրագործող ու զտող աշխատանքի հետ:

Ահա թէ ինչու «Դաշնակցութեան Առաջամարտիկը» - որ մեծ կազմակեպիչ լինելով հանդերձ, եղաւ նաև մեծ, անզուգական պրօպագանտիստ - իր երկարամեայ քառիէրի ընթացքին, Թիֆլիզէն-Քիշնեւ, Ժընեվէն-Փարիզ-Ֆիլիպպէ-Պոլիս, ամենուրեք իր յօդուածներու, ճառերու եւ մտերմական զրոյցներու մէջ նոյն յանկերգն է, որ կը հնչեցնէր այլեւայլ եղանակներով՝

-«Սիրեցէք, սիրեցէք միմիեանց»...

\*

Դէտք չէ, սակայն, երեւակայել Քրիստաֆորին Նազովրեցու հեղ, զառնուկի կերպարանքով, ինչպէս որ կը պատկերացնեն վերջինին բոլոր դարերու արուեստագէտները: «Գառնուկը» ստէպ առիւծի խոյանք ունէր, ցասումի ու ատելութեան զօրաւոր բոնկումներ, որոնք փոթորկում էին նրա հոգին եւ տարրալուծում նրա գեղեցիկ ու սովորաբար անխոռվ դէմքը: Բաւական է յիշել «Փոթորիկ»է Քրիստաֆորին, Սովորան Համիլի դէմ ամենախիզախ դաւը նիւթող Քրիստաֆորին, հայ ժողովրդի անողոք վրէժինդրութիւնն անձնաւորող Քրիստաֆորին:

Որքան մեծ էր նրա սէրը դէպի հարազատ ժողովուրդն ու նրա դատը, նոյնքան հզօր էր ատելութիւնը դէպի այդ ժողովրդի թշնամիներն ու ամէն կարգի ցեցերը: Վերջիններու շարքին կը դասէր Քրիստաֆորը հայ դրամատէր բուրժուազիան, որը

թուրքահայ մեծ ճգնաժամի օրերուն թերացաւ իր տարրական պարտասորովթիւններու մէջ, դաւաճանեց հայկական դատին: Յետագային, Քրիստաֆորի Դրօշակեան յօդուածներից մենք առաջ կը բերենք քանի մը շանթոտ հատուածներ՝ այդ վիրաւոր խնդրի շուրջը: Ասում են, իբր թէ իր նահատակովթենէն քանի մը օր առաջ, 1905-ի մարտին, լսելով Բագովի հայ-թաթարական ընդհարումներու մանրամասները եւ մեծահարուստ հայ բուրժուաներու կոտորածը, բացականչել էր.

– Դա արժանաւոր պատիժ է մեր գձուձ բուրժուազիայի համար, որ այնքան անտարբեր էր դէպի Թուրքահայոց տանջանքներն ու մեր քարոզները... Թո՛ղ այժմ իր կաշով վրայ զգայ բոնովթեան հարուածը, գուցէ սթափովի...

\*

\* \*

Յաջորդ գլուխ մէջ կը խօսենք Քրիստաֆորին Ժընեվ փոխադրելու պատճառների եւ իր արտասահմանեան գործունէովթեան մասին: Առայժմ զբաղուած ենք նրա մարդկային, բարոյական դիմագիծը յատկանշելով:

Ժընեւում կ'ապրէր, ինչպէս ապրել էր Թիֆլիսում: Երկար ժամանակ կը բնակուէր ընտանիքով Avenue de Croisette մի խղճուկ բնակարանում, ամենահամեստ ապրուատով, ստէպ ենթակայ զրկանքներու: Ինքը կը ստանար իր ամսականը – 150 ֆրանք – կազմակերպովթենէն, իսկ կնոջ ու երեխայի հոգսը Կովկասի ընկերներու եւ համակիրներու վրայ էր: Ինքն արդէն խիստ սակաւապետ էր ու ժումկալ: Երբ խմբագրատանը կը խորասուզուէր վիճաբանովթեան ու խոհերի մէջ հայկական առօրեայ ցաւերու շուրջը, կամ երբ կը գրէր ոեւէ յօդուած,

կը մոռանար իսպառ անօթութիւնն ու նիւթական հոգսերը, կ'աշխատէր մինչեւ կատարեալ ուժասպառում:

Հակառակ նիւթական ճնշման, դրսոր միշտ բաց էր ամէնքի համար, ճաշի, թէյի, ընթրիքի ատեն:

Այդպէս էր եւ Թիֆլիզում, ուր առաջին անգամը տեսայ իրեն 1895-ի ամառը: Կուսակցական խորհրդաժողով էր, որին ներկայ էին Քրիստաֆորի հետ ի միջի այլոց Լեւոն Սարգսեան, Նիկ. Մատինեան, Ռոստոմ, որ կը պատրաստուէր Կարին երթալ եւ Յովսէփ Արդութեան, որ նոր եկել էր Վանէն ազիտացիական պտոյտ անելու Կովկասի մէջ ու շուտով վերստին երկիր մտնելու: Նա (Արդութեանը) մեր ամենահին, տարիքոտ ու հմուտ քարոզիչներէն էր, որ լայն ժողովրդականութիւն ունէր շրջաններու մէջ: Ես, դեռ սկսնակ, ընդամէնը մէկ ու կէս տարի ուսանողական ու Դաշնակցական կեանք վարած Ժընեւում, յաջողեցայ մոտք գործել այդ խորհրդաժողովի մէջ՝ միմիայն Ռոստոմի թեւերու տակ: Անհամբեր կը սպասէի Քրիստաֆորի մի ճառին. բայց յուսախաբ եղալ. ամէնքը խօսեցան, նա լուռ մնաց, միայն շարունակ յետ ու առաջ կ'երթար սրահի մէջ եւ անյագ կը ծիսէր:

Սրբագրիչի պաշտօնը կը վարէր «Նօվօյէ Օքոզրէնիէ»-ի, տեղական հայա-ռուս առաջադիմական թերթի խմբագրատանը, ջնջին ամսականով: Եւ անքան ծանրաբեռնուած էր հոգսերով... Կ'ապրէր, որպէս ճշմարիտ դէմօկրատ, որպէս մտաւոր պրօլետար եւ այդպէս մնաց իր ամբողջ կեանքի ընթացքին: Լիակատար ներդաշնակութիւն խօսքի ու կենցաղի միջեւ... Դէմոկրատիզմը նրա ամբողջ էութեան մէջ էր, նրա ստեղծած կազմակերպութեան մէջ էր, ապակենտրոնական սիստեմի եւ

**զուտ ընկերային դիսցիպլինի ու ոգու մէջ:**

**Այդպէս՝ Կովկասոմ, այդպէս՝ արտասահմանում։ Վարելով  
իղէալիստի ու ազնիւ աշխատատրի չարքաշ կեանքը, նա  
ամենուրեք արթուն հսկողն էր ընկերներու բարոյական  
նկարագրի եւ կուակցական կարգապահութեան վրայ։**

**Մի անգամ սովորական ժամին դիմում եմ «Դրօշակ»ի  
խմբագրատուն (Reseraie N 26) եւ դեռ սանդուխներից լսում եմ  
ներսէն Քրիստաֆորի բարձրածայն ու ցասկոտ աղաղակը.  
Կը նախատէր ընկերներից մէկուն եւ մերթ ընդ մերթ կը  
գոչէր. «Մենք յեղափոխականնե՞ր ենք»... Ներս եմ մտնում  
եւ առջեւս բացւում է մի զուարճալի տեսարան. Քրիստաֆորը  
զայրացած քանդում է մահիճներէն մէկը եւ մին միահի ետեւէ  
դուրս շպրտում մատրասները։ Դէնը, սենեակի մի անկիւնում  
կանգնած է հին, տարիքոտ ու երախտաւոր ընկեր X... ու  
սահմոկած ու անմոռնչ լսում է նախատինքի շանթերը։ Նրա  
յանցանքն այն էր, որ երկու թէ երեք մատրաս էր փոել իր**



«Դրօշակ»ի խմբագրատունը,  
Քրիստափորի օրով

անկողնի վրայ, մինչ նորեկ վանեցի մի երիտասարդ ընկեր պառկել էր գիշերը գրեթէ մեր անկողնի վրայ: Վանեցին եւս հոն էր, սենեակի մի այլ անկիմում, նոյնպէս սահմոկած... Խեղճ տղան սովոր էր աւելի կոշտ տեղերում պառկելու եւ չէր կարող սպասել, որ իր անկողնի խնդիրը այդպիսի փոթորիկ բարձրացնէր:

Ամիսներ յետոյ, Ակնունիի, Ահարոնեանի եւ իմ ներկայութեամբ, Քրիստաֆոր արտասանեց նոյն ընկերոջ երեսին մի ծանր մեղադրական, յայտարարելով, որ նա մեղկացել է ժրնետում, հետզհետէ շեղում է կուսակցական էթիկայի պահանջներից, եւ որ հետեւաբար անարժան է մնալու «Դրօշակ»ի խմբագրատանը:

Այդ անողոք խարանումներից յետոյ, մեզ բոլորիս թուամ էր, թէ մեր ընկեր-դատախազը ընդմիշտ խզեց իր կապերը դատապարտեալի հետ: Երկու օր յետոյ Քրիստաֆոր մեկնում էր Կովկաս, «Փոթորկի» գործը կազմակերպելու (1901-ի աշնանն էր): Ուղետրութիւնն արդէն ինքնին վտանգաւոր էր այն ժամանակուայ պայմաններում, իսկ առաքելութիւնը՝ եւս առաւել: Ամէնքը կը զգային այդ: Եւ ամէնքը, ընկեր ու համակիր, շտապել էին կայարան՝ մնաս բարեւի: Հոն էր եւ մեղադրեալ ընկերը: Քրիստաֆոր մէկ առ մէկ բոլորիս համբուրելէ յետոյ՝ նրան եւս մօտեցաւ, զրկեց, համբուրեց, ասելով.

–Կոպիտ եղայ, ներողամիտ եղիր:

Ոմանք մտերմաբար ու խնդալով դիտել տուին Ուսուցին. «Այդպիսի վօլթ ֆասով դու միայն քաջալերեցիր քո բերնով իսկ դատապարտուածին եւ քո մեղադրականի արժէքը ջնջեցիր»...

## **–Սիրտս չդիմացաւ, – պատասխանեց...**

Բայց Քրիստաֆորի ոչ միայն սիրտը, այլ բանականութիւնն էլ չէր դիմանում: Նրան չափազանց ընտանի էր մարդկային ներողամտութեան մեծ առաքինութիւնը, ընտանի էր տիեզերական և յափտենական փարտօնի օրէնքը: Եւ այդ օրէնքը նա դարձուցել էր ոչ միայն սրտի մի կաթէգօրիկ հրամայական, այլ եւ կուսակցական գործունէութեան հաւատոյ հանգանակ: Ներողամտութիւն, դէպի յեղափոխական ընկերները, որոնք նոյնպէս մարդիկ են եւ կարող են սայթաքիլ ու սխալովիլ: Ներողամտութիւն, որ ստէպ Քրիստաֆորի հզօր ազդեցութեան տակ, կարող էր դաստիարակիչ եւ ուղղիչ հետեւանք ունենալ սայթաքուղներու եւ թուղացողներու նկատմամբ...

Այդ պատեհապաշտութիւնը, ըստ երեւոյթին, ներդաշնակուած էր Քրիստաֆորի անհաշտ, զտարիւն յեղափոխութեան հետ: Ո՞ւր կ'երթար, արդարեւ, եթէ իւրաքանչիւր սայթաքումի համար ընկերները բանադրուէին ու հեռացուէին...

Նա լաւատես էր առհասարակ մարդկային բնութեան վերաբերմամբ, նրա աչքը ուժեղ ու թափանցող էր յատկապէս մարդկանց լաւ գծերը տեսնելու համար եւ նա շատ անգամ օգտագործել է հայ դատի համար այնպիսի մարդկանց, որոնց վրայ միա ընկերները անյուածիօրէն խաչ էին դրած:

Այդտեղ է Քրիստաֆորի մեծ ազդեցութեան գաղտնիքը: Նա չէր ազդում – հիպնօզում էր: Եւ այդ հիպնօզի մէջ դեր ունէր նրա խօսքի ու տրամաբանութեան ոյժը, դեռ ունէին նրա ձայնի գալարումները, նրա անոյշ, հազուագիտ աչքերը եւ ամբողջ վեհափառ կերպարանքը...

Իրողութիւնն այն էր, որ Քրիստովորին մերժել չէին կարողանում, երբ նա դիմում էր մարդկանց այս կամ այն խնդրով (խօսքս, հարկաւ, անյոյս տգէտներու եւ քարասիրտներու մասին չէ): Իրողութիւնն այն է, որ նա ոյժեր էր դուրս բերում ամայութիւնից, գաղափարական նուաճումներ էր անում այնտեղ, ուր մենք բոլորս անզօր էինք: Եւ սակայն պերածախօս չէր... Նա ազդում էր նոյնիսկ իր լուռ, մելամաղձոտ նայուածքով: Այդ է պատճառը, որ ոմանք նրան փաղաքշական մակդիրը կը տային – կախարդ...

Անյիշաշարութիւն ու վեհանձն ներողամտութիւն – եւս առաւել դէպի իր գաղափարակից ընկերները... Տեսանք արդէն: Երբեմն, սակայն, գիտէր յամառիլ եւ երկար ատեն չխօսիլ այս կամ այն ընկերոջ հետ, որ մեղանչել է կարգապահութեան կամ կուակցական այլ կանոններու դէմ: Քիչ թէ շատ գիտակից ընկերոջ համար ծանրագոյն պատիժը հէնց այդ էր, որ Քրիստովորը չխօսէր իրեն հետ:

Այդպիսի պարագայի մէջ էր մեր մի այլ հինաւորց ու ծանօթ ընկեր, որ երկար ամիսներ կ'ապրէր խմբագրատանը, առանց Քրիստովորի բարեւն առնելու, մի տեսակ մերժուածի, բանադրուածի պէս: Ի վերջոյ, համբերութիւնը հատնելով, մի օր նա նետուեց Քրիստովորի աշխատասենեակը, եւ ձեռքը նրան մեկնելով, սկսեց հեկեկալ, սիրտը կը պոռթկար, կ'ուզէր հաշտուիլ հետը եւ խորհրդակցել գործերու մասին: Այդ դրամատիկ տեսարանէն յետոյ, հաշտութիւնն ի հարկէ, կայացաւ:

Այլ տեսաբան: Եզիպտոսի մէջ երկու երիտասարդ ընկերներ, երկուան էլ նախկին համալսարանական, Աղասէր եւ Առանձնար (տաղանդաւոր երգիծաբանը), քանի մը անկարգապահ

արարքներով հրափրել էին իրենց վրայ Քրիստոֆորի բարկութիւնը: Մի օր նրանք երկուսով եկան Ժընեւ: Եթէ չեմ սխալիր, 1901-ին էր: Մտան խմբագրատուն ու անվստահ քայլերով մօտեցան Քրիստոֆորին: Վերջինը բնականաբար խիստ պաղ ընդունելութիւն արաւ նրանց, հրափրեց նստել եւ սկսեց մի երկար ճառ. նախ մեղմ ու զուապ, ապա հետզհետէ բարձրաձայն ու խարանող – միշտ, սակայն տրամաբանող ու համոզիչ – նա ցուցադրեց երկու ընկերներուն իրենց արարքի տգեղութիւնը եւ կարդաց բարոյական մի ազդու խրատ: Ապա խօսք տուեց երկուսին. Առանձար եւ Աղասէր կ'արդարանային, ինչպէս որ կարող էին: Քրիստոֆորը չընդունեց նրանց արդարացումը եւ աւելի թափով յարձակուեց: Ի՞նչ խօսք՝ որ դատապարտեալի աթոռին նստած երկու ընկերները կրօնական երկիւղածութեամբ կ'ունկնդրէին Ուսուցչին:

Ես, որ միակ վկան էի այդ բուռն վիճաբանութեան եւ այդ անողոք խարազանումի, հոդ եւս այն տպատրութիւնն ստացայ թէ «Դրօշակ»ի խմբագրապետը ընդմիշտ խզեց գայթակղութեան երկու զոհերու հետ, ինչպէս խզել էին ուրիշ ընկերներ: Մեծ եղաւ, սակայն, իմ զարմանքը, երբ իմացայ, որ երկու օր յետոյ, Քրիստոֆորը մենակ ուղեկցել է նրանց երկաթուղու կայարանը եւ համբուրելով ճանապարհ դրել: (Աղասէր պատերազմի ատեն սպանուեցաւ Երգնկայում, Առանձարը մեռաւ Կիլիկիայում):

Նրա ձայնին ամէնքն էին ուշադիր, առանց կուսակցական խտրութեան, նրագովեստի խօսքերով ամէնքը կը հպարտանային եւ նրա մեղադրական սլաքներով ամէնքը կը խոցոտուէին: Անկարելի էր արհամարհել կամ անտարբեր ընդունել նրա ոեւէ արտայայտութիւնը, ոեւէ ժեսթը՝ բացասական թէ դրական:

Մի օր – 1904 թուին էր – դէպի «Դրօշակ»ի խմբագրատուն հեւ ի հեւ վազեց Ստեփան Շահումեանը, որ այն ատեն Ժընեվա, Լենինի մեծամասնական հատուածի մէջ: Ի՞նչ էր պատահել: Շահումեան, ինչպէս եւ ուրիշ հայ սօցիալ-դեմկրատներ, բոլշևիկ թէ մենշեվիկ, երբեք ո՞տք չէր դրած «Դրօշակի» շէմքին. ամէնքն էլ այն ժամանակ, հայ, վրացի, ռուս, Պլէխանովի ու Լենինի օրգաններու մէջ կատաղի պայքար էին մղում Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, որը գրաւել էր հայ աշխատատրական հրապարակը եւ չէր թոյլ տալիս հայ ու վրացի սօցիալ-դեմոկրատներին շնչել ու զարգանալ: Եւ «Դրօշակ»ը չէր պատասխանում նրանց:

Անակնկալ այցի պատճառը հետեւալն էր. Քրիստաֆոր մտերմական զրոյցներու մէջ Շահումեանի առթիւ ասել էր, ի միջի այլոց, հաւաստի աղքիւրից իմանալով, որ նա ստանում էր իր ուսանողական ամսաթօշակը Բերլին ու այլ տեղեր միաժամանակ երկու հայ դրամատէրերից: Լուրը հասնելով Շահումեանի ականջին, նա շտապել էր Քրիստաֆորի մօտ.

«Ուրիշ ասէկուէններու վրայ ուշք չէի դարձնի, բայց ձեզ յարգելով, չեմ կարող զանց առնել ձեր մեղադրանքը» – ասել էր մօտատրապէս Շահումեանը: Քրիստաֆոր ի հարկէ պնդեց իր ասածի վրայ<sup>8</sup>:

Մարդիկ կան – սակաւաթիւ ընտրեալներ – որ գիտեն յարգանք ու հմայք բոնադատել (imposer) անխտիր ամէնուն: Նրանցից էր «Դաշնակցութեան» հիմնադիրը, որ վայելեց այդ հազուագիւտ առանձնաշնորհումը իր ամբողջ քառիէրի ընթացքում, սկսած Ագուլիսի իր ուսուցչութեան օրերից, երբ նա պաշտուելու չափ կը սիրուէր ժողովրդից ու մտատրականութիւնից:

Անգամ մեր բոլժուաները անտարբեր չէին դէպի նրա անձնական հմայքը: Բազովի, թիֆլիզի եւ այլ վայրերի մեր «բոլժուա մտաւորականութիւնը» – Վաշեաններ, Դաստակեաններ ու Դօլովսաննեաններ – կարելի է ասել մինչեւ վերջ հաւատարիմ մնաց Քրիստովորին, իր նիւթական աջակցութիւնը բերելով թուրքահայ դատին:

Յարգանք ունէր անգամ հայ Կրեսոսը: Լաւ յիշում եմ 1903 թուականի ամառը, երբ Քրիստովորի շղթայազերծուած «Փոթորիկ»ի թեւերու վրայ մեր միլիոնատէր կապիտալիստներ մին միահին ետեւէ «կծիկը կը դնէին» Անդրկովկասէն ու շունչերնին Փարիզ կ'առնէին, եւ երբ Քրիստովորի հրահանգով՝ ինձ էր վիճակուած տխուր պաշտօնը դիմաւորելու սարսափահար Կրեսոսներէն մէկ քանիսին, յիշում եմ, որպիսի պատկառանքով էին նրանք խօսում «կաղ, մօրուքաւոր վարժապետի» մասին, որը մոլեգին հարուածներով շանթել էր նրանց ու «ղարան-ղարան» արել... Լաւ գիտէին, որ այդ «վարժապետը» «փող ուսող չէր» եւ որ դրամը յամենայն դէպս պիտի երթար գործին ծառայելու...

Յարգանք ունէին եւ օտարները: Ելրոպական լեզու չգիտէր, հազիւ հազ կարդում ու հասկանում էր ֆրանսերէնը: Բայց դէմքով ու կեցուածքով իսկոյն հրապուրում էր նոր ծանօթացող ելրոպացուն: 1901-ին, Փրօ Արմէնիան հիմնուելուց քիչ յետոյ, Պիէռ Քիյեառ մի քանի օրով այցելեց Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրատուն: Առաջին անգամը տեսաւ Քրիստովորին եւ խորապէս սիրեց նրան: Մեզ հետ կը խօսէր, բայց աչքը միշտ Քրիստովորի վրայ էր, շարունակ կը դիտէր նրան, կը խնդրէր թարգմանել նրա ամէն մի խօսքը, ամէն մի ժեսթը: Քիյառի վրայ, հարկաւ, խոր տպաւորութիւն էր արել եւ այն յուզիչ սէրն ու եղբայրական մտերմութիւնը, որ Ժընեվի բոլոր ընկերները

**յոյց էին տալիս դէպի կոսակցութեան ղեկավարը:**

Եւ երբ Ժընեվի հայերը – ընկերներ եւ գաղութ – երկաթուղու կայարանն էին Պիէռ Քիյառին ճամբու դնելու, մեր Ֆրանսիացի բարեկամը հերթով ամէնքի ձեռքը սեղմելէ յետոյ, մօտեցաւ Քրիստաֆորին, որի հետ հազիւ մի երկու խօսք էր միայն փոխանակել քանի մը օրուայ մէջ, գրկեց նրան ու համբուրեց:

**Ամիսներ յետոյ, Փարիզում, մի օր նստած էի Քիյեառի հետ մեծ բոլվարներու մէկ սրճարանի մէջ. շարունակ տեղեկութիւններ կը խնդրէր մեր մեծ ընկերոջ մասին, որ արդէն Կովկաս էր անցել, եւ վերջը յայտնեց բառացի.**

**–Հաւատացնում եմ ձեզ, ես պաշտամոնք ունիմ Քրիստաֆորի համար:**

\*

\* \*

Ընդհանուր էր սէրն ու յարգանքը դէպի այդ մարդը, բայց ոչ ոք այնքան խորունկ չէր սիրել ու մեծարել նրան ինչպէս իր երկու զինակիցները – Ռոստոմ եւ Զաւարեան։ Եւ պաշտամոնքը փոխադարձ էր։ Իրաքանչիւրը հպարտ էր միա երկուսով։

**Շատ է արդէն խօսուել մեր**

Ոռստոմ

Նուիրական երրորդութեան մասին: Գաղափարի եղբայրներ էին նրանք, հազար անգամ աւելի եղբայր, քան արիւնի եղբայրները: Նման օրինակներ շատ չեն եղել համաշխարհային պատմութեան մէջ: Խառնուածքով տարբեր՝ նրանք իրարու կը լրացնէին:

Երեք մեծ սիւներ միեւնոյն ուխտի. «Քրիստոֆոր եւ Սիմոն, որոշ տեսակէտով հակոտնեաներ են, բայց միմեանց անհրաժեշտ, միմիեանց լրացուցիչ» – ասում էր յաճախ Ռոստոմը:

Նա ինքը ոչ պակաս անհրաժեշտ էր Երրորդութեան մէջ՝ իր խոշոր իմացականութեամբ եւ բարոյական մեծութեամբ: Միայն գիտէր ինքինքը ջնջել միւսներու առջեւ եւ այդ կ'անէր սիրով, բնականաբար, առանց ցոյցի ու կեղծ համեստութեան: Ցուցամոլութեան արատը – որ իր հիւանդագին ու գարշահոտ արտայայտութիւններով այնքան յատուկ է հայ մտաւորականին ընդհանրապէս – խորթ, օտար էր մեր Երրորդութեան անդամներին, բայց այն օտար էր մանաւանդ Ռոստոմին: Ես չեմ ճանաչում մեր հին ու նոր, ոռուահայ ու թուրքահայ ամենաբարձր մտաւորականութեան շրջաններում մի ուրիշ դէմք, որ բնութիւնից լինելով այնքան լայնօրէն օժտուած, ունենալով խելքի, հստօր-ի, բարութեան ու անձնազոհութեան այնքան առատ պաշար, միեւնոյն ժամանակ այն աստիճան զերծ լինէր ինքնապաշտուամի, փառասիրութեան եւ ունայնամտութեան հակումներից, ինչպէս Ռոստոմը:

**Փա՞ռք, ծա՞փ, դափնինե՞ր... «Ունայնութիւն ունայնութեանց»...**

Դա մի գիծ է, որ յամենայն դէպս խորապէս գեղեցկացնուած է գործիչի եւ մանաւանդ հերոսական գործիչի դէմքը, տալիս

Է նրան մի արտակարգ փայլ ու հրապոյր, դարձնում է նրան մտաւորականութեան ու զանգուածների սիրելին:

Դէտք էր տեսնել, զգալ Քրիստաֆորի տառապանքը ամէն անգամ, երբ ոեւէ չարագուշակ լուր էր գալիս իր սիրելի Քոթոթի<sup>9</sup> մասին: Մի օր, ըստ սովորութեան, երկուառվ խմբագրատանն էինք, աշխատանքի սեղանի շուրջը: Այդ օրը լուր էր հասել մեզ Կարսի աղէտատոր ուժանակային պայթումի մասին, որին զոհ գնացին 3-4 ընկեր: (Եթէ չեմ սխալիր, 1903 թի աշնանն էր): Բնականաբար, ամէնքս քիչ թէ շատ ընկճուած էինք, մտածելով, որ թանկագին կեանքեր են զոհուել եւ որ պայթիւնն, անտարակոյս, ոուս ու թուրք կառավարութիւններու ուշադրութիւնն է հրափրել մերայնոց վրայ:

Բայց Քրիստաֆորը աւելի ծանրակշիռ պատճառ ունէր անհանգիստ լիենլու: Ամբողջ օրը նա մոայլ, սգաւոր տրամադրութեան մէջ էր. բառ չէր արտասանում, ստէպ թողնում էր աշխատանքը, շրջում սրահի մէջ եւ անվերջ ծխում: Եւ մինչ ես լուռ գրում էի, յարգելով իր մտահոգ լուսաթիւնը, նա կանգ առաւ ետես ու դողդոջուն ձայնով՝

–Միքայէլ, մեզ մի ծանր հարուած է սպասում:

Յայտարարութեան խորհրդատոր տոնը ցնցեց ինձ, թողի զրիչս ու հարցական արտայայտութեամբ դարձայ դէպի Քրիստաֆորը, որ շարունակեց աւելի յուզուած.

–Իմ հաշուով Ռոստոմը այդ պայթիւնի միջոցին Կարս պիտի գտնուէր:

Ու լոեց: Մնացածը պարզ էր: Ռոստոմը «Դաշնակցութեան»

ուժանակային գործերու մասնագէտներէն էր եւ այդ օրերը Կարս էր. բնականաբար, դժբախտ փորձին ներկայ պիտի լինէր եւ, ուրեմն, երեք զոհերէն մէկն էլ նա էր...

Զարդարացաւ Քրիստաֆորի ենթադրութիւնը. Ռոստոմը տակավին ողջ էր. բայց նա ինքը շուտով զոհ պիտի գնար ուժանակային ահեղ պատահարին...

\* \* \*

Մտքերու եւ զգացումներու ներդաշնակութիւնը կատարեալ էր երեքի միջեւ: Զաւարեանը, իբրեւ ամենէն տաք ու ըմբուտ խառնուածքի տէր, միշտ քննադատող ու հարուածող, եւ Քրիստաֆորն ու Ռոստոմը, իբրեւ աւելի հանդարտ ու հաւասարակշուած բնաւորութիւններ,-երեքով կը կազմէին իտէալական Ուխտը, աւելի ճիշտ, մի Մեծ Ուխտի բիւրեղեայ կորիզը, որ մտքի ու հոգու անդուկ ճառագայթուամով հետզհետէ կ'արգասատրէր հայ գաղափարային անապատը եւ կ'աճեցնէր հայոց ազատութեան փաղանգը:

Տարածայնութիւններ, հարկաւ, կը ծագէին երեքի միջեւ, բուռն վէճեր ու դժգոհութիւններ, հարկաւ, տեղի կ'ունենային, բայց նրանք անզօր էին քանդելու գեղեցիկ ներդաշնակութիւնը, անզօր էին խախտելու կորիզը:

Ստոյգ է, որ Սօֆիայի Հնդհ. Ժողովից յետոյ (1903-ի վերջերում) տիրեց առժամանկեայ սառնութիւն Քրիստաֆորի ու Միմոնի միջեւ:

Միմոն, իր անզուապ բնաւորութեան մղուամով, այդ ժողովուա եւս նկատուեց ծայրայեղութիւններու մէջ, պահանջեց, որ շէֆերն իրենք երկիր մտնեն, իրենք եւս նետուին կրակի մէջ

## Եւ չգոհանան երիտասարդները հոն նետելով...

Փոքր ինչ տարօրինակ էր այդ պահանջը, բայց Զաւարեան, ի հարկէ, ունէ անձնականութիւն չէր դնում իր պահանջներու եւ բանաձեւերու մէջ, քանի որ ինքն եւս իր թեկնածութիւնը դրեց երկիր անցնելու: Նա առհասարակ վերին աստիճանի անկեղծու անաշառ էր եւ, Քրիստաֆորին ու Ռոստոմին ջերմօրէն սիրելով հանդերձ, զիտէր – երբեմն ամենաջնջին պատճառներով – յարձակուել նրանց վրայ, ինչպէս եւ միա ընկերներու վրայ, իր բուռն խառնուածքի ամբողջ մոլեգնութեամբ:



Ոտքի ձախէն աջ.՝ Երուանդ Յամամճեան, Յայկ Օհանեան,  
Քրիստափոր Միքայէլեան, Ռուբէն Տէր Ղեւոնդեան  
Նստած.՝ Սիմոն Զաւարեան, Ստեփան Թադէոսեան (Սամսոն)  
Նկարուած ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովի օրերուն

Այդպիսի յարձակումներու ատեն անխուսափելի էին ծայրայեղութիւնները, որոնք ստէպկը դառնային անհանդուրժելի:

Անյիշաչար եւ ազնիւ՝ Զաւարեանն ինքն եւա կը զղջար իր գործած ակամայ անարդարութիւններու համար, բայց առիթը ներկայանալուն պէս, վերստին կը դիմէր նոյն ծայրայեղութեանց, իր գերզգայուն ու գերազրգիո բնաւորութեան շնորհիւ:

Վշտով հեռացաւ Քրիստաֆորը Սօֆիայի ժողովից: Ժընեւ էր կարճ միջոցով: Եւ երբ պաղ առնելով, հիւանդ պառկած էր – մէկ շաբաթի չափ – Ժընեւ եկաւ ինքը Սիմոնը, նոյնպէս կարճ ժամանակով. պիտի վերադառնար ու անցնէր Կիլիկիա: Տեղ հասնելով, շտապեց դէպի Քրիստաֆորի բնակարանը, միասին էինք, նետուեց դէպի հիւանդը, գրկեց զլուխը եւ երկար, երկար համբուրեց: Նոր էին սակայն բաժանուել Սօֆիայում: Այդպէս կարող էր վարուել միայն ամենաքնքոյշ, ամենամտերիմ հարազատը... Զգիտեմ, թէ ինչ կը զգար այդ վայրկեանին ինքը հիւանդը եւ թէ որքան կը հակազդէր այդ եղբայրական փաղաքշանքներին. նրա դէմքն անշարժ էր...

Քրիստաֆորի վիշտը ըմբոնելու համար, անհրաժեշտ է յիշել մի այլ պարագայ...

Ճշմարտութեան հակառակ կը լինէր, եթէ ասէինք, որ կուսակցութեան մէջ ամէնքն էին սիրում ու մեծարում կուսակցութեան առաջնորդին: Կային եւ չսիրող հակառակորդներ. իրաւ է, իսկառ սակաւթիւ. այնպէս որ կարելի է մատնանշել նրանց, իբրեւ բացառութիւն: Պէտք է յիշատակենք այստեղ Վարդ-Պատրիկեանի եւ Խաժակի պարագան. եւա առաւել, որ այն մի յայտնի դեր ունեցաւ Քրիստաֆորի եղերական վախճանի մէջ:

Սօֆիայի Համագումարէն առաջ այդ երկու ընկերները Վառնայի «Շարժում» թերթի մէջ հրատարակել էին քանի մը յօդուածներ Քրիստաֆորի դէմ: Երկուան էլ ծանօթ դէմքեր էին. Վարդ-Պատրիկեանը (Վարդօ) առաջին օրերու յեղափոխական գործիչներէն էր, որ սպանուեց յետագայում կուսակցութեան դրամները իւրացնելու համար: Խաժակը – Գարեգին Խաժակեանը – նոյնպէս հին, վաստակաւոր ընկերներից էր, որ խոշոր ծառայութիւններ է մատուցել կազմակերպութեանը իր անխոնջ ու շնորհալի քարոզչութեամբ եւ որ 1915-ին, Վարդգէսի, Ակնունիի, Զարդարեանի եւ այլ հարիւրատոր ընկերներու հետ, ընդունեց մարտիրոսութեան փառապսակը:

Այս այսպէս լինելով հանդերձ, պարտաւոր ենք ճշմարտութիւնն ասելու մեր պատմութեանը: Մենք նոյն ճշմարտութիւնը պիտի ասենք – ըստ մեր ըմբռնումին – եւ մեր աւելի մեծ դէմքերու մասին՝ Քրիստաֆորի, Զաւարեանի, Ռոստոմի: Այլապէս գրիչ չէինք վերցնի կենդանագիրներ հիւելու: Ոչ ոք անսխալական է եւ ոչինչ չկայ աւելի անհամակրելի, քան կոյր, մոլեուանդ երկրպագութիւնը: De mortuis aut verum aut nihil – «Մեռածի մասին՝ կամ ճշմարիտը կամ ոչինչ»... Այդ դէմքերը արդէն իսկ բաւականաչափ հրապուրիչ են եւ բնաւ պէտք չկայ աւելի եա գեղեցկացնելու:

Դէտքչունիշափէն աւելի գեղեցկացուելու «Դաշնակցութեան» պատմութիւնը, որ իր հերոսական գործերու յեղաշրջող ազդեցութիւններու հետ ունեցել է եւ մեծ սայթաքումներ: Մի կազմակերպութիւն, որի նմանը մեզի պէս փոքրիկ, ճնշուած ազգերը ծնուած են միայն երկարատեւ ու դժնդակ երկունքից յետոյ, որ իր ամբողջ էութեամբ, իր լոյսերով ու ստուերներով հարազատ ծնունդ է իր ժողովրդի իմացա-բարոյական յատկութիւններու, աշխարհագրական եւ պատմական

արտասուելի միջավայրերու, մի կազմակերպութիւն, որ երեսուն տարի ամբարել է իր վիթխարի շտեմարանի մէջ ցեղի ամենաշքեղ առաքինութիւնները, նրա առնական կորովի եւ հերոսական մարտնչումներու անսպառ գանձը, – մի այդպիսի կազմակերպութիւն բնաւ պէտք չունի թագցնելու յետնորդներից, պատմութիւնից իր ստուերային ու պակասաւոր կողմերը: Եւ մի պատմութիւն, որ պէտք է միայն խանդավառ փառաբանութեան հիմնը երգէ «Դաշնակցութեան» եւ անվերապահ խունկ ծիսէ նրա գործիչներուն, աւելի լաւ է բնաւ չգրով:

Վարդօ եւ Խաժակ – չփիտեմ թէ ո՞րը որի հանդէպ աւելի ազդեցիկ ու հեղինակաւոր էր, հաւանօրէն Խաժակը Վարդօի – տպել էին «Շարժում»ի մէջ մի շարք յօդուածներ, ուր կը ջանային վարկաբեկ անել Քրիստաֆորին – առանց անունը յիշելու, բայց խիստ թափանցիկ ակնարկներով – կը ցուցադրէին «Դաշնակցութեան» պարագուխը, որպէս «սիրող յեղափոխական», որ չէր ուզում երկիր մտնել…

Իրենք գրողները այն միամիտ հաւատն ունէին, թէ իրենք Պոլիս ու Իզմիր ունեցած գործունէութեամբ անցել էին արդէն յեղափոխական ամենափշոտ ճամբաներէն եւ իրաւունք կը սեպէին քննադատելու Քրիստաֆորը, որ տակաւին «Երկիր չէր անցած»:

Ինչ որ ցաւալի էր, այդ քննադատութիւնը կը տարուէր կրքով ու թոյնով: Մենք նրան կը հետեւէինք Ժընեւէն: Դաշնակցութեան առաջնորդը, որքան էլ պայծառ, ոլիմպեան հոգի ունենար, չէր կարող չազդուել այդ յօդուածներէն: Մեծ էր նրա վիշտն ու վրդովմունքը: Մի նամակ ուղղեց «Շարժում»ի ղեկավարներուն, որոնցով կը յատկանշէր երկու հակառակորդներու վարմունքը: Ստացաւ աւելի եւս թունոտ պատասխան:

\*  
\* \*

Սօֆիայի համագումարում խով ձեռով հնչում էր արձագանգը «Շարժում»ի յօդուածներու: Եւ երբ մեր այնքան սիրելի Զաւարեանը կը յորդորէր շէֆերուն «Երկրի մէջ» փորձել իրենց ուժերը, նա կարծես ակամայ կը հանդիսանար նեցուկ, քաջալեր «Շարժում»ի ղեկավարներուն:

**Մխալ, աղէտաւոր մեթոտ....:**

Զարաչար սխալում էին Վարդո, Խաժակ, Սիմոն, պահանջելով, որ Քրիստոֆոր Երկիր անցնէ: «Փոթորիկ»ի իր արկածալի Ողիսականով նա արդէն ապացուցել էր, որ վտանգին խուսափողը չէ եւ որ զիտէ ղեկավարել իր նաւակը յորձանուտ ջրերու մէջ, արիաբար կուրծք տալով բոլոր խոչ ու խովթերուն: Կովկասն եւս գրեթէ «Երկիր» էր այն ժամանակուայ պայմաններում եւ մի այնպիսի գործունէովթեան համար:

Խնդիրը հոդ չէր: Խնդիրը մեթոտի, բանաւորովթեան, նպատակայարմարովթեան մէջ էր: Ամբողջ կազմակերպովթիւնը Սօֆիայի համագումարում եւ նրանից յետոյ, պէտք է ծառանար այդ անբանական ու կորստաբեր պահանջի դէմ: Ոչ մի տեղ չի տեսնուած, որ կոռի ատեն – իսկ «Դաշնակցովթեան» գործունէովթիւնը շարունակական կոփւ էր – Զօրավարը նետոփի կրակի մէջ ու ձգի իր վաշտերը բախտի կամքին... Իսկ մեզ պէս թշուառ մի ժողովրդի մէջ, որի դարաւոր պատմովթեան ընթացքում Դիօգինէսեան լապտերով պէտք է փնտոել կազմակերպիչ տաղանդները, եւս առաւել զգուշաւոր ու շրջահայեաց պէտք է լինէինք:

**Այդպէս չեղաւ սակայն: Հոդ եւս մենք ապացուցինք, որ**

ինքնատիպ մի ժողովուրդ ենք, ոչ բնաւ նման՝ ուրիշ, բարձր կամ ստորին քաղաքակրթութեան տէր ժողովուրդներուն: Հոդ եւ ապացուցեցինք, որ հայկական իրականութեան մէջ ամենաարտառոց բաներն անգամ հնարաւոր են:

Քրիստաֆոր, ժողովից յետոյ պատրաստուեց, ա corps perdu, մահուան ոխկով, նետուելու իր ծրագրած գործի մէջ,— եւ ահագին կազմակերպութիւնը մի ողբալի, կրատրական համակերպութեամբ հաշտուեց իրողութեան հետ: Հատ-հատ ձայներ բողոքեցին Կովկասէն,— ձայներ, որ զգաստութեան կը հրավիրէին արտասահմանեան մարմինները... Ոչինչ չազդեց: Քրիստաֆոր դարձաւ ոմբածիգ, տերրօրիստ — իր կոչումը չէր — եւ գործի սկզբին իսկ ընկաւ շնչասպառ, «որպէս դարաւոր կաղնին, կայծակի շանթահարող հարուածներու տակ»: Եւ կազմակերպութիւնը որբացաւ:

Զաւարեան, Ռոստոմ եւ ուրիշներ յաջորդեցին Վարպետին, բայց ոչ ոք փոխարինեց նրան: Շատերը կը գան ու կ'անցնին — ոչ ոք չի փոխարինի նրան:

Մեռաւ այն պահում, երբ Կովկասի ու հայրենիքի մէջ գոռ անցքեր էին պատրաստում, երբ կազմակերպութիւնը արագ-արագ ծաւալտում էր ու նոյնանում հայ ժողովրդային ընդհանրութեան հետ. մեռաւ այնքան վաղաժամ, եւ եթէ ապրէր, տարակոյս չկայ, «Դաշնակցութիւնը» եւ հայ ժողովուրդը պիտի կարենային խոսափել շատ սխալներից ու սայթաքումներից:

Մահէն յետոյ միայն զգացին ահոելի բացը... Այդպէս եղած է միշտ, այդպէս լինելու է միշտ հայկական իրականութեան մէջ:



**Քանի մը խօսք էլ մեր ընկերոջ ընտանեկան պարագաներու մասին:**

Մեր մէջ սովորովմիւն է վարդագոյն գծերով ներկայացնել Քրիստովոր Միքայէլեանի եւ իր ամուսնու կենակցովմիւնը: Այդ մոլորովմեանը իր բաժին տուրքն է տալիս եւ Զաւարեանը<sup>10</sup>: Այդպէս եղած է, անշուշտ, սկզբներում: Գեղեցիկ մի վէպ էր այդ սիրահարովմիւնն ու ամուսնովմիւնը: (Շատ քիչ կանայք – հայ եւ ոռա ծանօթ շրջաններում – կարողացել են չկախարդուիլ մեր ընկերոջ դէմքի ու հոգու հրապոյրներէն):

Եւգենիա Կօնստանտինօվնան<sup>11</sup> ոչ միայն արտակարգ գեղեցկովմիւն ունէր, այլ եւ յեղափոխական մի յայտնի անցեալ, գործել էր ոռա «Նարօղնայա Վօլիա» հոչակատր կուսակցովմեան շարքերում, ծանօթ էր, իբրեւ անձնուէր, շիտակ անկաշառ մի նկարագիր:

Որքան էլ, սակայն, ի բնէ ազնիւ լինէր, չէր կարող ապրել եւ զգալ իր ամուսնու պէս, բաժանել նրա վշտերն ու հոգսերը, հայրենասիրովմիւնն ու հայրենանուէր եռանդը: Վասնզի օտար էր: Գուցէ Թիֆլիզեան շրջանը իրօք եղել է մի իդիլիա (հովուերգովմիւն), բայց տարբեր բան էր իմ աշքով տեսածը արտասահմանի մէջ: Դարձեալ, ի հարկէ, լաւ մարդ էր. սակայն շարացել էր, մաղձոտել: Նիւթական անձուկ վիճակն էլ աւելի էր ազդում իր տրամադրովմեան վրայ: Ընկերներն էլ շարունակ դիտել կը տային իրեն, որ այնքան երկար տարիներ ապրելով հայ միջավայրում, բնաւ չէր հոգացել քիչ-շատ հայերէն սովորելու:

Որքան յիշում եմ, այդ հողի վրայ խզուեցան յարաբերութիւնները տիկին Միքայէլեանի եւ Օրթանսի միջեւ (Յոնան Դաւթեանի կնոջ). այդ չնաշխարհիկ զուիցերուհին, որ ընդամենը մի երկու տարուայ մէջ տիրապետել էր հայ լեզուին ու նոյնիսկ թարգմանութիւններ կ'անէր հայերէնից ֆրանսերէն, խորապէս կը վրդովուէր Քրիստաֆորի կնոջ անտարբերութենէն դէպի ամէն ինչ, որ հայկական էր: Աւելի եւս կը վրդովուէին ընկերները, տեսնելով որ Քրիստաֆորի միակ զաւակ Ռուբէնը, մօր ազդեցութեան տակ, բնաւ երբեք չէր քաջալերտում՝ հայերէն սովորելու, հակառակ մի շարք ընկերներու ջանքերուն:

Կեղծիք կը լինէր, եթէ ասէինք, որ այդքոլոր դժգոհութիւններն ու գանգատները միանգամայն անհիմն էին: Եւ գուցէ չի էլ կարելի մեղադրել տիկին Միքայէլեանին, որ նա չէր սիրուա հայութիւնը ու հայկական դատը: Նա ոռա հայրենասէր էր, եւ բնական էր այդ եւ չէր էլ թաքցնոամ: Իր սէրը Քրիստափորէն փոխադրել էր դէպի իր զաւակը, եւ այդ վերջինը իր միակ ու գերագոյն պաշտամունքի առարկան էր: (Պաշտում էր զաւակին նաեւ հայրը):

Տիկինն աշխատեց, որքան կարելի է, հեռու պահել Ռուբէնին հայկական ազդեցութիւններից, հեռացրեց նրան եւ Կովկասէն, ուր գնացել էին մեծ պատերազմի ատեն. Ռուբէնը, իբրեւ բժիշկ, գործեց բաւական ժամանակ, նոյնիսկ հայ կամաւրական շրջաններում, գնաց մինչեւ Էրզրում, քիչ-շատ մարզուց հայերէնի մէջ... Քրիստափորի ընկերները ուրախանում էին տեսնելով այդ իւելօք, ազնիւ, փոքր ինչ թուղակամ տղային, որ այնքան նման էր իր հօրը դէմքով, ձայնով, շարժուձեւերով, մտաւոր ընդունակութիւններով, եւ որ այնքան հպարտ էր իր հայրիկով: Յոյս ունէինք, որ նա պիտի կապուէր ընդմիշտ

**Հայկական միջավայրի հետ, մնալով Կովկասում:**

Մայրը, սակայն, տարաւ նրան Մոսկուա, եւ ամուսնացրեց տղային մի ոռա օրիորդի հետ: Եւ ընդմիշտ հեռացան հայ հորիզոններից: Զենք կարող չ'ասել, որ դա մի վիրատրանք էր մեծ մարդու յիշատակին...

Քրիստաֆոր Միքայէլեանը, այդպիսով, սերունդ չթողուց հայ ժողովրդին, որին նուիրել էր իր ամբողջ կեանքը, որի պատմութիւնը զարդարել էր այդ կեանքով... Այդպէս են վերջանում գրեթէ բոլոր ամուսնութիւնները օտարներու հետ:

Ոչ ոք կարող է լրջորէն պնդել, թէ մեր մեծ ընկերը բախտաւոր ընտանեկան կեանք է ապրել: Այդ կեանքի տիսուր, բացասական կողմերն եւս նա տարաւ փիլիսօփայօրէն, ստոյիկեան արիութեամբ:

\*

\* \* \*

Այդպէս էր մարդը: Մենք ներկայացրինք նրան իր մտաւոր, բարոյական, ընտանեկան ու այլ բարեմասնութիւններով, այնչափ, որչափ ինքներս կարողացել էինք ճանաչել նրան:

Մարդը, հարկաւ, իր բոլոր կարողութիւններով արտացոլում է իր գրուածքներու եւ գործերու մէջ: Հետեւաբար, մենք աւելի լաւ պիտի բնորոշենք Քրիստաֆորին, երբ կտանք գէթ համառօտ տեսութիւնը նրա քաղաքական գրուածքներու եւ գործերու:

**Դիմենք, ուրեմն, հրապարակախոսին եւ գործիչին:**

# ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԼ

Հոետոր չէր. աւելի ճիշդ՝ ունէր միայն բանականութեան պերճախօսութիւնը, կը դիմէր ոչ զգացումին, այլ մտքին ու դատողութեան։ Կը ձգտէր համոզել։

Այն հոետորներէն չէր, որ գիտեն շոյել ձեր ականջները նուրբ ու ներդաշնակ պարբերութիւններով, շքեղ ու գոռ, յափշտակող ու յուղիչ, որ կը հոսին ինքայորդոր, հրաբխավէժ առատութեամբ եւ կը փոթորկեն ու քարշ կըտան զանգուածները։

Շատ չեն եղած այդպիսիք նաեւ ուրիշ ազատագրուող ազգերու մէջ։ Խօսքս դատարկ բեմբասացնելու մասին չէ, այլ ճշմարիտ հոետորներու, որոնք կ'ապրին հանրութեան վիշտը եւ գիտեն իրօք – խօսքի թովիչ ներգործութեամբ – ալեկոծել սրտերը, լացացնել, ոգետրել ու դէպի շինարար գործ մղել։

Հայ ամբիոնը այդ պերճախօսութեան մէկ հատիկ ներկայացուցիչ ունի՝ ի դէմս Ահարոնեանի։

Սակայն, որքան եւ ճիշդ է, որ այդ վերջինը, իր խորունկ ծանօթութեամբ հայժողովրդի հոգեբանութեանուպատմութեան, կարողանում է ստէպ իր խօսքի հմայքի տակ պահել անգամ դժուարահաճ մտատրական լսարանները, այնուամենայնիւ, կարելի է ասել, հայութիւնը տակափին չի ծնել ամբողջական հոետորի տիպը, այն՝ որ իր մէջ կը միացնէ արուեստագէտն ու բանախօսը, ճարտասանն ու գիտականօրէն-փիլիսոփայօրէն պատրաստուած, տրամաբանող ու վերլուծող միտքը։

Քրիստափորը զանգուածի մարդը չէր, այլ սահմանափակ մտատրական շրջաններու։ Զայնն էլ արդէն չունէր հզօր,

Հումկու ելեւջներ, որ այնքան անհրաժեշտ է բազմութեան հետ խօսող հոետորներուն:

Զանգուածներու եւ ընդարձակ լսարաններու հերոսներէն չէր երրորդութեան միա անդամն եւս – Զաւարեանը: Իսկ երրորդը, Ռուստոմը, անզամ փոքրիկ լսարաններու մէջ, մի քանի տասնեակ ունկնդիրներու ներկայութեամբ գէշ կը զգար իրեն. Երեքի մէջ նա ամէնէն թոյլն էր իր լեզուական կարողութեամբ, ոչ բնաւ գիտութեամբ ու տրամաբանութեամբ:

Երեքին, սակայն յատուկ էր մէկ ընդհանուր գիծ – լիակատար բացակայութիւնը դերասանական թօս-երու եւ շինծու, պաթեթիկ ոգեստրութեան: Երեքն ալ կը գարշէին ամբոխավարական ժեսթերէ:

Կը սիրէին, սակայն, ամբոխը: Կը սիրէր մանաւանդ Զաւարեանը: Մեր մտատրական քարոզիչներէն ոմանց համար հեշտանքի պէս մի բան էր՝ իջնել ամբոխի ծոցը, ընկերանալ ու ձուլուիլ ժողովրդի ամենախոնարհ խաւերի հետ, եւ ամէն օր երկար ժամեր ապրել սրճարաններու եւ խաներու ծխու, անհրապոյր մթնոլորտում, ուամկօրէն զրուցել ու վիճաբանել եւ ուամկօրէն զուարձանալ: Այդ գիծը աւելի խոշոր չափով յատուկ էր Խամակին: Եւ ամբոխը փոխադարձաբար կը սիրէր նրանց ու կը մտերմանար նրանց հետ:

Նոյն մտերմութիւնը չկար հայ ամբոխի եւ Քրիստափորի միջեւ, որ փոքր ինչ տարբեր խառնուածք ունէր – նուազ քարտուս, աւելի զուապ ու վերապահու – եւ կը պահպանէր մի յայտնի արիստօկրատիզմ: Երբ նա կը մտնէր մասսաներու մէջ, իբրեւ մեծ ընկեր ու մեծ եղբայր, ամէն ոք կը զգար բաժնող անջրպետը պրօֆէսօրի եւ լսարանի, հովովի եւ հօտի

**միջեւ: Ամբոխը զուապ կը պահէր ինքզինքը կուսակցութեան առաջնորդի հետ եւ կը նայէր ու կ'ունկնդրէր նրան պատկառու ակնածութեամբ:**

**Երկու տիպի քարողիչները եղած են բոլոր ազգերու վերածնող հոսանքներու մէջ, երկուան էլ հաւասարապէս անհրաժեշտ:**

\* \* \*

**Յաւ է, որ չոնինք Քրիստափորի գէթ զիսաւոր ճառերէն եւ ոչ մէկը: Ոչ ոք չի հոգացել արձանագրելու, պահելու: Անգամ կուսակցական ընդհանուր ժողովներու եւ կօնֆէրանսներու մէջ արտասանուած ճառերէն – ոչ մէկ հատիկ: Մեր գրեթէ բոլոր արձանագրութիւնները, մանաւանդ թուրքիոյ եւ Կովկասի մէջ, կատարուել են հապշտապ, անխնամ ու անկատար ձեւով: Անշուշտ, ժամանակի պայմանները, յեղափոխական կոռոփի տենդը իրենց տեղն ունին այդ տիսուր զանցառութեան պատճառներու մէջ. բայց խոշոր տեղ ունի եւ մեր աւանդական անփութութիւնն ու արհամարհանքը դէպի պատմական վաւերագրերը:**

**Քրիստափոր – հրապարակախօսի մասին, այդ պատճառով, մեր ծանօթութիւնները խիստ սահմանափակ են: Բայց մեզ աւելի ծանօթ է Քրիստափոր – հրապարակագիրը:**



ԵԼԼԷՆ



Քր. Սիքայէլեան

Քրիստափորի ստորագրութիւնները



Ոտքի ձախէն աջ . - Ստեփան Թադէոսեան (Սամսոն) ,  
Երուանդ Համամճեան  
Նստած . - Քրիստափոր Միքայէլեան , Սիմոն Զաւարեան ,  
Ռուբէն Տէր Ղեւոնդեան  
Ժընեւ , «Դրօշակ»ի խմբագրատան բակը

# ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՔԸ

Քիչ գրեց, բայց զրածը մնայում արժէք ունի: Հրապարակագրի առանձին շնորհք չունէր, չունէին եւ իր երկու մեծ զինակիցները, Զաւարեան ու Ռոստոմ: Մեծ դժուարութեամբ կը գրէր Քրիստափորը իր յօդուածները. երբեմն ամբողջ շաբաթներով կ'աշխատէր մէկ յօդուածի վրայ, կը գրէր, կը ջնջէր, կը սրբագրէր... եւ ստէպ կատակով կ'ըսէր մեզ. «Տանջում եմ գրիչս, տանջում եմ ինքս ինձ, տանջում ընթերցողին»:

Լեզուն աղքատ էր, դարձուածները ընդհանրապէս ծանր ու դժուարամարս, բայց տրամաբանութիւնը կուռ, գրուածքը լաւ մտածուած եւ զերծ աւելորդաբանութիւններէ:

«Դրօշակ»ի առաջին թուերի մէջ, Ժընեւում, «Այբբէն» խորագրով հրատարակուած յօդուածաշարքը պատկանում է մեծ մասամբ Քրիստափորի ու Սիմօնի գրչին: Յօդուածները կը դրկուէին Թիֆլիսէն եւ Ռոստոմը կը տպէր իր կողմէն թեթեւ սրբագրուամներով:

Այդ յօդուածաշարքի մէջ երրորդութիւնը առաջին անգամը, փոքր ինչ տարտամօրէն, կը ցուցադրէր իր ընկերվարական հաւատամքը:

«Դրօշակ»ի 1893 թ., թիւ 3-ի մէջ կարդում ենք.

«Ամբողջ կովտուրական աշխարհի պատմութիւնը հազարաւոր տարիների ընթացքում ցոյց է տալիս, որ յանձնել ամբողջ ժողովրդի բախտը մի դասակարգի, որը իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, Փիզիքական եւ նիւթական ոյժի կամ թէ նոյնիսկ ուսման վրայ, տալ կառավարութեան

ղեկը որեւէ դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճնշում այդ փոքրիկ մասի եւ միաժամանակ անբարոյականացնել իշխող պօլիտիկաններին...

### Ապա՝ հետեւեալ տողերը.

...հասարակական կեանքի ալիքը թուլացնելով անհատի գազանային ձգտումները եւ պակսեցնելով նիւթական անհաւասարութեան հետ անխախտ կապուած ճնշումը, տանում է մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէպի ընկերային, համայնական հասատատութիւնները:

«Արդարութեան ամենագլխաւոր պահանջը, թէ ամէն մարդ իր քրտինքովը պիտի վաստակէ կերած հացը եւ թէ հաւասար աշխատանքի հետ անհատը պէտք է ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտուելու, – այդ պահանջը տարածում է միշտ աւելի եւ աւելի...»:

Ընկերվարութեան քանի մը հիմնական գրութիւններն են սրանք, արտայայտուած, ինչպէս ըսինք, փոքր ինչ աղօտ ձեւով: Արդարեւ, այդ նոյն գրութիւնները կարող է իրացնել թէ պարզ ընկերվարականը, թէ մարքսիստը եւ թէ կոմմոնիստանիշխանականը:

Եւ իրօք, Քրիստափոր, Սիմօն ու Ռոստոմ, ընկերվարական լինելով հանդերձ, ունէին տարբեր գումարումներ: Առաջինը կարծես աւելի հակուած էր դէպի Լարօվ-Միխայլօվսկու սուբեկտիվստ դպրոցը, իսկ երկրորդը ամէնէն առաջ անհատապաշտ էր (ինտիվիտուալիստ) – անհատապաշտութիւն, որ տեսականի մէջ ստէպ կը զարնուէր Բակունինեան ծայրայեղ անիշխանականութեան ջրերու մէջ...

Ոչ մէկը, սակայն մեր երեք մեծ ընկերներէն տուեր է երբեփցէ ամփոփ ու յստակ ձեւակերպում իր ընկերվարական դաւանանքի: Դժուար է մինչեւ իսկ ասել, թէ նրանցից ոեւէ մէկը հանգամանօրէն ուառնասիրած էր ընկերվարական կամ անիշխանական վարդապետութիւնը: Կենդանի գործի մարդիկ էին, որոնց համար այդ բոլորը միայն «ապագայի երաժշտութիւն» էր, հեռաւոր իտէալ: Հայկական ցաւոտ իրականութիւնն էր նրանց զբաղեցնողը:

Քրիստափոր կը գրէր արդարեւ, դեռ 32 տարի առաջ, նոյն «Դրօշակեան» յօդուածում<sup>12</sup>:

«Ինչպէս հեռաւոր անցեալին, նոյնպէս եւ իտէալական ապագային մենք տալիս ենք երկրորդական նշանակութիւն»:

Դա ակնարկ էր «Հնչակ»ին, որը չափազանց շատ էր խանդավառուած սօցիալիզմով եւ մեծ տեղ էր տալիս նրան իր ծրագրի մէջ:

«Հնչակ»ը այն ժամանակ տարուած էր նաեւ միացեալ Հայաստանի անկախութեան երազով, – եւ այդ առթիւ եա մենք կարդում ենք Քրիստափորի մի ուժեղ ակնարկը «Դրօշակ»ի նոյն յօդուածի մէջ.

«Ազատութեան ձգտելով, արդեօք մեր ժողովուրդը ուզո՞ւ է միմիայն իր ազգային ինքնասիրութեանը գոհացումն տալ, թէ՝ այդ դրութեան հետ նա կապում է առհասարակ իր կացութեան ընդհանուր բարեփոխութիւնը: Մենք չենք հերքում առաջին շարժառիթի նշանակութիւնը, բայց հակառակ ենք այն հայեացքներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախութեան հետ...

# ԴՐՈՇՎԿ

, ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԱՅՐ ՈՒ ԲԵՆ

Նոյեմբեր, 1893 թ.

Այրութեն կայ կարդալ-գրել սովորելու համար. կայ պյութեն, պյութեն տարրական օրէնքներ՝ զանազան մասնագիտութիւնների համար. կայ պյութեն նաև հասարակական խնդիրների շրջանում:

Դժբաղդաբար, պյս վերջին տեսակի պյութենն անհամանալի կամ տարօրինակ է համարվում շատերի համար: Չը նոյելով, որ հասարակական երեցներն աշխարհին բռլոր անկիւններում պատմութիւնը դարձ ցդար կրկնում է զարմանալի նմանութեամբ՝ մեր յեղափոխականներից շատերի համար, կարծես, հայր և Հայաստանը մի բացառութիւն են, որ դուքս պիտի համարվին համամարդկային ընդհանուր օրէնքների ազգեցութիւնից: Հայ-յեղափոխականը չէ ուզում որ և է առընչութիւն ունենալ մարդկային պատմութեան հետ: Անմշների անարատ արինով շաղախված, անարգարութեան ու գրոշմով կնքված, միխօնաւոր ժողովուրդների հառաջանքներով և սգով արտաւորման պատմութեան եղերը մնաք չենք ոզում ճնաշել: Այս, յեղափոխական պյութենը գտնված, ընդունված չէ մեր շան ազան գործիչների կողմից:

Բայց չէ որ պյութ պյութենը կ'ը, և չէ որ նրա ընդունելը կ'լիներ անհանպատակայարմար միոց: մեր երկրի յեղափոխական ձգումները մի ընդհանուր լիզ: չով և ոգով արտապյատելու համար:

Այս, այդ պյութենը կայ, և մեղնով չէ, որ նա որոշվում է: Միմիայն, բնականաբար, նա կը մնայ անը ըմբռնելի բո որ. պյն “գործիշների” համար, որոնք չեն արտապյատում ոչ բաւականաչափ զգացմոնք գետի մեր անքաղց ժողովրդի անպաշտպան շահերը և ոչ ել առողջ միտք: Համամարդկային պատմութեան և ներկայ ժամանակների ուսումնասիրութեամբ հայր գրութիւնը լրւաբանելու համար:

Հայ ժողովուրդը ազանութիւն է ուզում: պյութ

ամենքի համար պարզ է, և պյութուրը միակ տառն է միակ այր է, որի անհրաժեշտութիւնն ընդհանուրի կողմից ընդունված պետք է համարել: Բայց մատու այր ու բեն չէ կազմում: այրից յետոյ գայլիս է բենը:

Ի՞նչ է նշանակում ազանութիւն. ի՞նչ է հասկանում մեր ժողովուրդը ազանութիւն նուրը պրատաններիս:

Ըստերը կանկն. քաղաքական ազանութիւն, ազանութիւն, ազանութիւն անկանութիւն, հայկական կառավարութիւն ազանութիւն աաճկական անի տեղ:

Դա, ի՞ հարկէ, չառ որոշ պայման է. բայց բովանդակում է արդեօք իր մեջ ժողովրդի բոլոր իղերը գաղափարները, նրա բոլոր պահանջներն ազանութիւնից: Ազանութեան ձգութելով՝ արդեօք մեր ժողովուրդն ուզում է միմիայն իր ազգային նկանաբութեանը բաւականութիւն տալի թե պյութը ուղարկեան հետ նա անշուշու կապում է առ. հասարակ իր կեցութեան ընդհանութեան բարեփոխումն անպայման կապում էն միմիայն նրա անկախութեան հետ: Համարելով այդ բարեփոխումը նկանաբութեան հասկանալիքին, որոնք ժողովրդի դրւութեան բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախութեան հետ, համարելով այդ բարեփոխումը նկանաբութեան հասկանալիքի, բնական, անհրաժեշտ հետևանք անկախութեան: Սա է պյութինը պյութ վերայ անհրաժեշտ է կանգ առնել: Բայց համայնքներ նախօրեն, որ խկապէս ժողովուրդն ազանութիւն է կամնում ոչ թե լոկ ազգային նկանաբութեան նից դրգման, պյլ գլխաւորապէս իր առօրինյա կենաքը մաշող ճնշող հանգամանքների ազգեցութեան ներքյ:

Խոսեցրէք Հեքքեարի, Մանազկերտի, Սամենյ մի մասի հային, որը յայտնի է իր անզում ֆլահ (սպրուկ) անուան տակ: Դա պահանջում է պյութ կամ պյն քիւրդ աղպային, որը հարտահարում է նրան ուզածին պէտ, ծախում է նրան ուրիշին 10-20-30 լիրութի, և միևնույն ժամանակ հովանաւորում է հայ վաշխառուի

«Խօսեցէք հայ գիտացուն, հայ արհեստատորին, վաճառականին կամ ինտելիգենտին. ընդհանուր եզրակացութիւնը բոլոր լսածներից այն կը լինի որ ազատութիւն ցանկանալով, հայ ժողովուրդը ձգտում է այնպիսի դրութեան, որ ազատուած լինի թէ մահմետականից հալածուողի իր անարգ դրութիւնից, թէ օրէնքի առաջ եղած անհաւասարութիւնից եւ թէ հարկերի ծանրութիւնից, քրտերի ու պաշտօնեաների յափշտակութիւնից, բէկերի եւ վաշխառուների իշխանութիւնից, հողինվերաբերեալզեղծումներից, իրյուսահատչքատրութիւնից, իր աստանդական մուրացկանի դրութիւնից, եւայն...»:

Հնկերվարական եւ համոզուած դեմօկրատ, սակայն հեռու ցնորքներից եւ խորապէս գիտակից հայ կեանքի ստիպողական պահանջներուն - այդպէս էր մեր ընկերը, այդպէս մնաց նա մինչեւ մահ: Նրա ամբողջ ընկերային-փիլիսոփայական աշխարհահայեացքը տոգորուած էր այդ առողջ իրապաշտութեամբ, ոչալիզմով: Հնկերվարական իր դէմքը նա յստակօրէն ցուցադրեց, երբ - թերեւ առաջին անգամը - 1903-ին, «Դրօշակ»-ի խմբագրատանը սկսեցինք վիճաբանութիւն իմ փոքրիկ աշխատութեան շուրջը, «Հայրենիքի Գաղափարը» խորագրով, որ տպագրուեց իր, Քրիստափորի հաւանութեամբ: Հնկերվարական էր եւ նոյնիսկ չէր խորշուած ամենածայրայեղ եզրակացութիւններից. հնարաւոր է, ասում էր նա, որ հեռու, շատ հեռու ապագայում ազգերը ի մի ձուլուին ու մշակուի մէկ ընդհանուր ու տիրական բարբառ...

Կոսմոպօլիտ էր, համաշխարհային քաղաքացի, բառիս լաւագոյն իմաստով, կեօթէի նման, բայց եւ ամենաջերմ հայրենասէր էր, որովհետեւ լաւ գիտէր, որ բացի իրաքանչիւրի ընական սէրից դէպի հարազատ ժողովուրդը, կայ եւ այն հանգամանքը, որ այդ ժողովուրդը իր ողբերգական

թշուառութեան մէջ պիտի մնար յաէտ որբ ու անօգնական, եթէ նրա բոլոր գիտակից զաւակները ընդգրկէին կօսմօպօլիտիզմը, իբրեւ առօրեայ, գործօն հաւատամք եւ ծառայէին «ամբողջ մարդկութեան»: Նա գիտէր, որ համամարդկային իտէալներուն ամէնէն լաւ կը ծառայեն նրանք, որոնք կը ձգտեն այդ մարդկութեան մէկ հալածական անդամը – հարազատ ազգը – վեր բարձրացնել իր անկեալ վիճակէն եւ կը տրամադրեն իրենց անձը այդ հարազատ ժողովրդին, կը սիրեն նրա լեզուն, պատմութիւնն ու գրականութիւնը, կ'որդեգրեն նրա վիշտն ու տառապանքը...

Այդ գիտակցութիւնը ուժով արթնցաւ դեռ երիտասարդ Քրիստափորի մէջ, երբ նա 80-ական թուերի վերջերին Մոսկուայէն Թիֆլիզ վերադարձաւ, ուսասական մթնոլորտէն առած տարտամ ու պարապ կօսմօպօլիտիզմի հովերով:

Շուտ բուժուեց այդ ուսասական հիւանդութենէն եւ հոգով-սրտով նովիրուեց հայութեան: Հիմնեց «Դաշնակցութիւնը» իր ընկերներու հետ, հիմնեց «Դրօշակ»ը, աքսորուեց Ռուսաստան, Քիշնեւ, հոն իսկ միջոցներ խորհեց փոխադրելու կուսակցութեան օրգանը Ելրոպա, վերադարձաւ աքսորէն, տրուեց նոր եռանդով Թիւրքահայոց ազատութեան գործին, սեղմեց ընկերներու շարքերը, ծաւալեց ու խորացուց կազմակերպութիւնը Կովկասի բոլոր անկիւններում, նորէն բանտարկուեց (1895-ին) ու այս անգամ որկուեց Բաքու, նորէն, արձակուելով, շարունակեց «ստորերկեայ» տաժանելի աշխատանքը, մինչեւ որ կազմակերպութեան որոշումով ու յորդորներով, անցաւ ազատ Ելրոպա, 1898-ի վերջերին, որպէսզի այնտեղ ծաւալէ իր արգասաւոր գործունէութիւնը տարբեր հրապարակի վրայ, միշտ ի նպաստ Գործի:

# ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Ութ տարուց ի վեր «Դաշնակցութիւնը գործել էր երկրում» եւ մոռացել էր Եպոպան: Ութ տարուց ի վեր, ճիղեր էր արձակել դէպի Հայաստանի բոլոր քաղաքներն ու գաւառները, խմբեր հաստատել ամենուրեք, զէնք ու ուզմամթերք փոխադրել, դաւադրական, ապստամբական ձեռնարկներ կազմակերպել եւ կոփաներ վարել Կ. Պոլսէն (Բանք Օտտոման, Սամաթիա) մինչեւ Խանասոր, բայց միանգամայն անտեսել ու արհամարհել էր հայոց հարցի լուծման միա խոշոր ազդակը – Եպոպական դիւնագիտութիւնը եւ Եպոպայի հանրային կարծիքը:

Քրիստափոր եկաւ այդ մեծ վրիպումը շտկելու, Եպոպական մեր պրոպագանտի գործը կազմակերպելու: Եւ կարճ միջոցում, իր մի երկու ընկերներով, կարողացաւ հասցնել այդ գործը այնպիսի բարձրութեան, որպիսին չէր տեսնուած մինչ այն:

Չեմ խօսի այստեղ «Պրո-Արմենիա»ի լայնածառալ կազմակերպութեան մասին – թերթի, կոմիտէի, Եպոպական ճիղաւորումների, միթինգների, պարլամենտական հարցապնդումների եւայլն – որի շուրջը երկարօրէն խօսած եմ արդէն Պրէսսանսէի մասին գրածս ընդարձակ տեսութեան մէջ:

Կովու ներքին ոչակցիայի դէմ.–

Պէտք էր միաժամանակ պայքարել ներքին հակայեղափոխական հոսանքի դէմ, որ 1895-96-ի կոտորածներէն յետոյ համակել էր ողջ հայութիւնը, պէտք էր վերստին հրահրել ձախորդութիւններէն պաղած եռանդը, քաջալերել երիտասարդութիւնը, ապացուցել, որ յեղափոխական

պայքարից դուրս ոչ միայն «չիք հայոց ազատութիւն», այլ եւ «չիք հայոց ազգ...»։ Այդպէս էր համոզուած կուսակցութեան առաջնորդը. նա խորապէս հաստացած էր, որ ըմբոստացուամի հրդեհը մարելով՝ հայ ժողովուրդը պիտի վերածուէր անարդ գրաստներու երամի ու պիտի իսպառ անբարոյականանար... Իսկ մի այդպիսի ժողովուրդ, նրա կարծիքով, լաւ է, որ բնաւ գոյութիւն չունենար։

Այդ տրամադրութիւնը, որ յատով է աշխարհի բոլոր ուղղագաւան, անհաշտ յեղափոխականներուն եւ որու մասին կարծիքները բնականաբար կը տարբերուին, – այդ արմատական տրամադրութիւնը կը բաժնէին շատերը հայ գործիչներից, արեւելահայ թէ արեւմտահայ։

Բայց Քրիստափոր համոզուած էր նաեւ, որ թիւրքաց քաղաքական ու տնտեսական սիստեմը նշանակուած է ուղղակի ֆիզիքական մահ հայ ցեղի համար, անխուսափելի բնաջնջուամ։ Ուստի եւ կոփու հանդիսանուած էր նրա աչքուած որպէս փրկութեան միակ խարիսխը։

Այդ հիմնական թեղիսները նա զարգացուց – յենուելով ի միջի այլոց օտար հեղինակներու եւ պաշտօնական անձերու վկայութեանց վրայ – իր «Ամբոխային Տրամաբանութիւնը» խորագրով գրուածքի մէջ, որ դուրս եկաւ «Դրօշակ»ի տպարանից։

Կրաւորական համակերպո՞ւմ, թ՞է կոփւ...

Հարց է տալիս իրեն եւ պատասխանում.

«Առաջին դէպքուած անխուսափելի է անպատիւ, տմարդի,

ժողովուրդի անհույս ստորովմիանը ապացուցանող անպայման կորուստ. Երկրորդը միայն մի վեհ, մի փայլուն, մի սրբազան ռիսկ է պայմանական աջողովմեամբ...»:

## Մի այլ տեղ՝

«Միակ եզրակացութիւնը, որ մենք կարող ենք անել, – այդ այն է՝ որ հայկական կեանքը վաղուց եկել կանգ էր առել մի խոշոր դիլեմմայի առաջ. – կամ անպայման բնաջնջում, իբրեւ մի ամբողջովմիան, իբրեւ մի ազգովմիան, իբրեւ մի հայրենիքի տէր ժողովուրդ, կամ թէ դիմադրովմիան, կեանք, պատիւ, ստացուածք, տուն հայրենիք, ամէն ինչ բոնաբարող ոյժի դէմ...»:

Անդրադառնալով նախայեղափոխական կացութեան վրայ, որի սարսափներու նկարագրութիւնը քաղում է նոյնիսկ պետութեանց պաշտօնական վաւերագրերից, ապա յիշատակելով քանի մը յուսատու եւ խրախոսիչ ազդակները, ի միջի այլոց նշանաւոր 31-րդ յօդուածը, Քրիստափոր գրում է.

«Եթէ մինչեւ այդ յօդուածը ջնջման հեռանկարից խոսափել ուզենալով, ջլատուած, տկարացած եւ իր տխուր անցեալի բացասական հետքերը կրող հայը կարող էր նաեւ վախենալ ռիսկի վտանգից, – այդ յօդուածով հայովմիանը իրեն արդէն դաշնակից է տեսնում եւրոպական ամբողջ վեց պետութիւններ եւ աջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի փոխարկուէին ... Տատանումը այլեւա անկարելի էր – եւ ահա ժողովրդի սրտից պայթում է յեղափոխական շարժումը, իր հոսանքի մէջ ընդգրկելով ժողովրդական հերոսների եւ գրական գործիչների մի ամբողջ շղթայ...»:

«Ամբոխային Տրամաբանութեան» նպատակն էր ապացուցել հայկական շարժման ոչ միայն ճակատազրականութիւնը, այլ եւ նպատակայարմարութիւնը.

«Ի՞նչ էր, ուրեմն, մեր շարժման նպատակը: Ուրիշ ոչինչ, եթէ ոչ կազմակերպուած ու բռնի ուժով կռուել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ, մինչեւ որ վեց պետութիւնների երաշխատրուած միջամտութեամբ այդ կարգերը դէպի լավը կը փոխուին»:

Քանի որ կար հայ ցեղի գոյութեանն սպառնացող, նրա պատուանդանը փորփորող հիմնական պատճառը – թիւրք քաղաքական եւ տնտեսական սիստեմը – կոփը միակ բանաւոր ելքն էր, համեմատաբար քիչ զոհ պահանջող եւ վերջնական ազատութիւնը խոստացող: Այս էր Քրիստափորի հաւատոյ հանգանակը.

«Երբ կան հիմնական պատճառներ – որպանց դէմ կոտոր բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուին»:

Եւ կատաղօրէն խարանում է ներքին հակայեղափոխական քարողիչներին, որոնք աղէտներու պատասխանատուութիւնը կը նետէին հայ շարժման վրայ:

«Ժխտելով միանգամայն, թէ հայ յեղափոխական շարժումը մեր անհամար կորուատների հիմնական պատճառների շարքում ոեւէ տեղ է բռնում, մենք ցոյց տուինք նաեւ, որ այդ շարժումը նոյնիսկ առիթ կամ պատրուակ համարուել կարող է միմիայն սահմանափակ, պայմանական մտքով, – նոյնչափ, որչափ առհասարակ հայ ժողովրդի ազատութեան խնդրի հետ կապ

ունեցող ամէն մի, թէկուզ շատ ցանկալի, թէկուզ բոլորվին ջատագովուող երեւյթ»:

### Ապա քիչ յետոյ՝

«Այդպիսով պարզուած է մեզ համար, որ այն բոլոր գանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափոխական շարժման կամ ձեռնարկների վրայ, իբրեւ կոտորածների պատճառ կամ առիթ, իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբնութեանը յատուկ խառնիճաղանձ ճիշեր»:

Անգամ իբրեւ «առիթ»... Այստեղ արդէն մեր ընկերը չափազանզօրէն խիստ է, իր «ժխտուած»ի մէջ: Նկատելի է այդ գրուածքի մէջ եւ նրա անխոռվ լաւատեսութիւնը, որ նոյնպէս յատուկ է յեղափոխական շէֆերուն առհասարակ: Իսկ լաւատեսութիւնը միշտ հակումն ունի գունաւորելու անցքերը:

Գրուածքի մանրամասն վերլուծուածը չպիտի տանք հոս - շատ կ'երկարէր: Քրիստուափոր երկար տքնեց «Ամբոխային Տրամաբանութեան» վրայ, որու իւրաքանչիւր տողը մտածուած է, կշուղատուած: Այդ գրքոյկը, որ նրա անկեղծ ու խորունկ համոզումներու ցուցադրութիւնն է, իր բոլոր թերութիւններով հանդերձ, պատուաւոր տեղ մը կը բոնէ հայ քաղաքական ու յեղափոխական գրականութեան մէջ:

Խորունկ ուշադրութեան արժանի է եւ միւս գրուածքը՝ «Պատմական Զարիքը» վերնագրով եւ բոլոր յօդուածները «Դրօշակ»ի մէջ: Կուսակցութեան օրգանը Քրիստուափորի գալով, մեծացրեց իր ծաւալը եւ հարստացաւ նոր աշխատակիցներով, որոնց մէջ՝ Ակնունի եւ Ահարոնեան: «Դրօշակ»ը սկսեց զբաղուել եւ Ռուսաստանով ու Կովկասահայութեան ճակատագրով:

**Միութեան հարցը.- Խմբագրապետի մտահոգութեան  
առարկայ դարձան եւ միջկուսակցային յարաբերութիւնները  
եւ միութեան խնդիրը, որ այն ժամանակ սաստիկ կ'աղմկէր  
հայկական հրապարակը:**

Արտասահմանեան մի շարք գործիչներ - մեծ մասամբ  
ներկայ ու նախկին Հնչակեաններից - կը պահանջէին, որ  
գոյութիւն ունեցող յեղափոխական կուսակցութիւններէն  
կազմուէր նոր մարմին, որով կը յուացուէր աւելի յաջող  
ընթացք տալու հայ ազատագրական շարժման: «Միութիւն»  
թերթի, Մինաս Զերազի, եւ այլոց կողմէ առաջարկ եղաւ այդ



Քրիստափոր «Դրօշակ»ի խմբագրատանը .  
Կանգնածը Ակնունին է

**Նպատակով ընդհանուր ժողով գումարել բոլոր հոսանքներից:**

Այդ այն ժամանակն էր, երբ Հնչակեան նախկին յեղափոխական կուսակցութենէն մնացել էին անոյժ բեկորներ, որոնց մէջ մտել էին անվստահելի տարրեր, իրար հալածող եւ իրարու վարկաբեկող:

«Դաշնակցութեան» առջեւ դրուած էր մի նուրբ ու պատասխանատու հարց: Յեղափոխական ուժերու հաւաքումն ու կենտրոնացումը նրա վաղեմի փափաքն էր:

Եւ Ժընեւ գալու օրէն ի վեր, Քրիստովոր Միքայէլեանը այդ հարցն եւս դարձրեց իր մտահոգութեան առարկայ:

«Դրօշակ»ի մէջ իսկ նա հրապարակօրէն կ'ողջունէր այն բոլոր ձեռնարկները, որոնք նպատակ ունէին վերջ տալ միջկուսակցային երկպառակտութեանց եւ մէկ ընդհանուր ճակատ ստեղծել թշնամու դէմ:

Այժմ, սակայն, կ'առաջարկէին ջնջել բոլոր հին անունները եւ բոլոր հատուածները ձուել մէկ կազմակերպութեան մէջ: Հարկ էր վարովիլ ծայրայեղ զգուշութեամբ: Քրիստովորի համար պարզ էր «Դաշնակցութեան» բռնելիք դիրքը: Եւ նրա հիմնական հայեացքները այդ ցաւոտ հարցի շուրջը արտայայտուած են իր մի նամակի մէջ, ուղղուած Փարիզի ընկերներին – Ահարոնեանին եւ ինձ – 1900 թ. յունիս 4-ին:

Այդ ընդարձակ եւ հետաքրքրական գրութիւնը վաղաժամ է ամբողջապէս հրատարակել, կը քաղենք միայն քանի մը հատուած:

## **Քրիստափոր կը գրէր մեզ Ժընեւէն.**

«Ընդհ. ժողով գումարելով՝ միացնել ներկայումս գոյութիւն ունեցող «յեղափոխական» կուսակցութիւնները», – այդ միտքը որքան եւ դուրեկան լինի շատերին, սակայն, մեր կարծիքով անիրագործելի է: Մենք ունեցել ենք անցեալում երկու բանակցութիւններ, հին Հնչակեանների հետ, երկուն էլ անյաջող: Մէկը՝ նորերի հետ, դարձեալ անյաջող, եւ ահա այսօր երկրորդ բանակցութիւնների առաջմ ոչինչ չխոստացող ընթացքումն ենք: Եթէ երկար ամիսներում եւ տարիներում միմիայն մի կամ միա կուսակցութեան հետ բանակցելով – ինչպէս ցոյց է տալիս փորձը – չենք կարողացել ոչ մի անգամ որեւէ հետեւանքի հասնել, դժուար է ենթադրել, որ մի ժամանակատր ժողով Փարիզում կարող կը լինի միացնել ամբողջ երեք-չորս կուսակցութիւններ:

\*\*\*\*\*

«Այդպիսով, մենք միանգամայն հեռու լինելով ընդհանուր միութեան կարելի համարելու ենթադրութիւններից, սակայն նպատակայարմար ենք համարում օգտուել դէպքերից՝ ըստ կարելոյն համերաշխութեան պրոպագանտը առաջ տանելու համար:

«...Ժողովը մի բան արած կը լինէր, եթէ ընդունէր բոլոր կուսակցութիւնների համար մի քանի պարտաւորեցուցիչ որոշումներ: Այն, թող մնան եղած բոլոր կուսակցութիւնները իրենց անուններով, իրենց թերթերով, իրենց կազմակերպական սիստեմներով, գործունէութեան իրենց տաքտիկով եւայլն, բայց համաձայնութիւն բոլորեքեան, որ իրենք յեղափոխականներ են, որ բոլորեքեան ուզում են յեղափոխութեան ծառայել. թող ընդունին, որ բացի կուսակցական պարտաւորութիւններից,

Նրանք ունին նաեւ ընդհանուր պարտականութիւններ:

\*\*\*\*\*

«Կարելի էր նոյնիսկ նախօրօք մշակել մի քանի հարցեր, որոնք ժողովի որոշման ենթարկուէին: Օրինակ,

1.- Բոլոր կուսակցութիւնների թերթերը ա) ամեն կերպ պրոպագանտ անեն յեղափոխութեան գաղափարը, բ) ամէն կերպ աշխատեն յոյս ներշնչել ժողովրդին դէպի աւելի լաւ ապագայ, գ) վերջ տան կուսակցական ամբաստանութիւններին (որոնք միայն ուրախացնուած են թշնամուն), աւելի մեծ տեղ տալով երկրի եւ հայկական հարցի ուսումնասիրութեանը թէ անցեալուած եւ թէ ներկայուած:

2.- Երկրուած կամ երկրից դուրս միեւնոյն տեղերուած եղած յեղափոխականները պարտաւորուէին իրար երբեք չխանգարել, իրար հետ չվարուել իբր վատ մրցողներ եւ մինչեւ անգամ հարկատր դէպքերուած՝ միշտ իրար օգնել:

\*\*\*\*\*

4.- Եթէ նախընթաց կարգի հարցերուած համերաշխութիւն նկատուի, մի քայլ եա դէնը անել – խօսել ամենաընդհանուր սահմաններուած երկրի եւ երկրից դուրս գործումէութեան մասին, եւ եթէ կարելի է, բաժանել այդ զանազան գործերը իրար մէջ... (ելուպական հասարակական կարծիքի վրայ ազդելու միջոցներ, ժողովրդական ապստամբութիւն, ցոյցեր եւայլն), թող մէկը բաւականանալ մի տեսակ գործերով միայն, որին համակրուած է. միւաը վերցնի իր վրայ գործումէութեան որոշ տեղ միայն, որին աւելի է հաւատուած, միաները – ուրիշ տեղեր, որոնց նոյնպէս կարեւորութիւն են տալիս եւայլն, որպէսզի այդպիսով միեւնոյն կէտերուած, միեւնոյն խնդիրների մասին,

**ստիպուած չլինին մտածել եւ հոգալ բոլոր կուակցութիւնները:**

5.- Եթէ ժողովը որեւէ հետեւանքի կը հասնի այս տեսակ հարցերում, առաջարկել տարին կամ երկու տարին մի անգամ շարումակ ժողովուել: Ժամանակի ընթացքում այդպիսի ժողովներում կարող կը լինէին լայնացնել ընդհանուր պարտականութիւնների սահմանները, իսկ յամենայն դէպս շնորհիւ անխուասփելի փոխադարձ շփումների՝ մարդիկ կարող կը լինէին իրար աւելի մօտիկից ճանաչել եւ հետզհետէ հող պատրաստել աւելի կատարեալ յարաբերութիւնների կամ նոյնիսկ միութեան համար:

\*\*\*\*\*

**«Կը ներկայանանք ժողովին, երբ կը նշանակուի օրը եւ պաշտօնապէս մենք կը հրափրուինք...»**

**Միութեան եռանդուն առաքեալներէն մէկն էր Կ. Պոլսոյ նախկին «Հայրենիք»ի տնօրէն պ. Յովհաննէս Շահնազարը, որ 1900ին տօքթօր Նեվրուզի հետ Ժընեւ եկած էր՝ այդ խնդրի շուրջը Քրիստափորի հետ բանակցելու: Նա եւս կուսակցութիւնների միութեան, ձուլման կողմնակից էր: Բանակցութիւնը տեւեց ամիսներ:**

**«Դրօշակ»ի խմբագրութիւնը, բնականաբար, կը պատասխանէր, որ ձուլման խնդիր տրուիլ չէր կարող: Եւ մի օր, 1900-ի ամառը, Յովհաննէս Շահնազարը Փարիզի Լիքսամբուրգ պարտէզի մէջ մեր մի պտոյտի միջոցին, տաք վիճաբանելով միութեան խնդրի եւ բանակցութեաց վիժուալ մասին, կ'ըսէր ինձ.**

«Քրիստափոր անդրդուելի եղաւ. Եւ ես լաւ կը հասկնամ զինքը ու չեմ մեղադրեր. անիկա ծշմարիտ պետական մարդու մը մտայնութիւնն ու գործելակերպն ունի... Մարդը անթիւ դժուարութիւններով կուսակցութիւն մը ստեղծեր է - չ. Յ. Դաշնակցութիւնը - որ թէեւ կատարելութիւն մը չէ, պատկառելի ոյժ մըն է... Եւ մոլեռանդի մը նախանձնախնդրութեամբ ձեռքերու մէջ ամուր կը պահէ այդ կազմակերպութիւնը, չի թողուր, որ ան վտանգաւոր փորձութիւններու եւ ռիսքերու ենթարկուի, ուրիշ կուսակցութիւններու հետ միանալով...»

Շահնազար միութեան խնդրոյ կից՝ Արքիարի հարցն էր հրապարակ նետել եւ կ'առաջարկէր պատույ ատեան ընտրել եւ Արքիարը դատել: Յայտնի է, որ «Դաշնակցութեան» Պոլսոյ մարմինը 1895-ին դաւաճան էր հոչակել թիւրքահայ նշանաւոր գրողին եւ նոյնիսկ սպանութեան փորձ էր արել նրա դէմ:

Հարուածը վրիպել էր եւ 1896-ին Արքիարը Լոնտոն էր անցել, ուր Տամատեանի, հանգուցեալ Զիթճեանի եւ ուրիշների հետ, Հնչակեան կուսակցութեան պառակտումէն յետոյ, իր ձեռքն էր առել Վերակազմեալ Հնչակեանութեան մտաւոր ղեկավարութիւնը:

Սիսալ էր, անշուշտ, Տամատեանի եւ իր յեղափոխական զինակիցների կողմէն՝ Վերակազմեալ կուսակցութեան գլուխը դնել մի մարդ, որ թէեւ փայլուն, օժտուած հրապարակագիր էր - գուցէ ամենէն փայլունը թիւրքահայոց մէջ - բայց անսկզբունք ու աննկարագիր մէկն էր, զուրկ յեղափոխական խառնուածքէ եւ որ արդէն իսկ վարկաբեկ եղած էր 1890-ին, սովորական կառավարութեան ուղղած իր ծանօթ մեղայականով: Եւ առաւել սիսալ էր այդ ընթացքը՝ որ Վերակազմեալ Հնչակեան հատուածը որոշած էր բանակցութեան մտնել - ուժերու

միութիւններ իրագործելու համար – Հ. Յ. Դաշնակցութեան հետ, մի կուսակցութեան՝ որ արդէն իսկ դատապարտած էր Արփիար Արփիարեանը։ Եւ երբ Միհրան Տամատեան 1896-ի աշնան – Քրիստափորի Ժընեւ գալէն երկու տարի առաջ – կը գրէր ինձ Լոնտոնէն, անհատական մի նամակով իր խորոնկ հիացմոնքն օսմանեան բանքայի դաւագրութեան ու հերոսներու մասին եւ ջերմ փափաք կը յայտնէր Հնչակեան ու Դաշնակցական ոյժերը օր առաջ միացած տեսնելու<sup>13</sup>, երբ այդ գեղեցիկ նամակը կը կարդայի Ռոսոմին, Յոնանին եւ «Դրօշակ»ի խմբագրութեան միւս անդամներին, ամէնքը բնականաբար սկեպտօրէն կը ժպտային «միութեան» հնարաւորութիւնների առթիւ, ցաւ յայտնելով, որ Հնչակեան նոր Կենտրոնը Տամատեանի պէս մարդկանց ձեռքը չէ, այլ Արփիարի, որու ներկայութիւնը մեն-մենակ բաւ էր՝ գործը վիժեցնելու։

**Այդ վերահաս ընթացքը մերայնոց մէջ աւելի եա շեշտուեց Քրիստափորի Ժընեւ գալով։**

Արփիարի նկատմամբ – ոչ մի կօմպրօմիս, ոչ մի իրաւախոհութիւն։ «Դաշնակցութեան» առաջնորդը որքան որ լայնամիտ եւ ներողամիտ էր ընկերներու, մասնաւրապէս երիտասարդընկերներու առօրեայ սխալների եւ սայթաքումների հանդէպ, նոյնքան անհաշտ ու աններող էր, երբ խնդիրը կը վերաբերէր յեղափոխական վարիչներին։ Այդուղ նա կը պահանջէր յեղափոխական էթիքայի ամբողջական, ամենախիստ կիրառումը։ այդուղ նա անողոք էր եւ անդրդուելի։ Արփիարը նրա աչքում վերջնական դատապարտեալ էր։ Արփիարի մասին նա իր կարծիքը կազմել էր արդէն վերը լիշած մեղայականէն յետոյ, որ «Հայրենիք»ի (նախկին, պոլսական) խմբագիրը ուղղել էր թիւրք կառավարութեանը իր բանտէն արձակուելու

առթիւ: Եւ այդ կարծիքը վերջնականապէս հաստատուեց նրա մէջ, երբ «Դրօշակ»ում հանգուցեալ Վոամեանի ձեռքով հրատարակուեց ընդարձակ ամբաստանագիրը Արփիարեանի մասին:

Հին Հնաշակեաններն եւս իրենց օրգանի մէջ հոչակեցին Արփիարը որպէս Նազըմ փաշայի լրտես ու գործիք: Այդպէս ըրին, սակայն, Հնչակեան պառակտումէն յետոյ, երբ Արփիարը այլեա կուսակցական ընկեր չէր, այլ հակառակորդ: Տեղիք կար, ուրեմն, բացարձակ հասատ չընծայելու «Հնչակ»ի մեղադրանքների անաշառութեան:

Այդպէս թէ այնպէս, կասկածի ու ծանր գաղտասուքների մի մնխնոլորտ էր ստեղծուած այդ մարդու շուրջը... Արփիարը մեծագոյն խոշընդուներէն մինն էր համերաշխութեան ճամբու վրայ եւ նա պէտք է իսպառ հեռացուէր յեղափոխական շրջաններէն:

Այդ պահանջը միանգամայն արդար էր եւ բանաւոր: Այդտեղ՝ ոչ մի տարակուսանք եւ ոչ մի տարածայնութիւն մեր ընկերների մէջ: Սակայն, նոյնքան արդար ու բանաւոր չէր երեւար միւս ձեւակերպութիւնը՝

«Արփիար դաւաճան է, մահուան պատժի արժանի եւ ոչ պատոյ ատեանի...»

Այդտեղ է, որ ես ցաւ ունեցայ, իբրեւ կրտսեր ու խոնարհ ընկեր, իբրեւ սիրող աշակերտ, ընդհարուելու Քրիստափորի հետ, ինչպէս նաեւ իւառութեանի ու Վոամեանի հետ: Եւ այդ առթիւ մեր մեծ ընկերը զրեց ինձ մի խիստ երկար նամակ, որից պիտի բերեմ քանի մը հատուած, վասնզի ընթերցողը

կարող է գտնել այդտեղ ուրիշ մանրամասներ Քրիստովորի բարոյական նկարագրի:

Նամակը թիւ չունի, բայց վրուած է (Ժընեվն Փարիզ) 1900 թուականի վերջերուած:

Մեղմօրէն կը յանդիմանէր ինձ, թէ դիւրութեամբ «համոզուա» ու «ընկճուամ եմ» հակառակորդների պատճառաբանութեանց առջեւ, – ապա կը գրէր.

«Ես ոչ մի լուրջ մարդու, ի հարկէ, վայել չեմ համարուամ ամէն քայլափոխուամ աքաղաղի դեր ստանձնել եւ տաքանալ, կուտել, պաշտպանել ինչ որ մերն է եւ անուանարկել այն ամէնը, ինչ մեզնից դուրս է: Քա՛ւ լիցի: Ընդհակառակը, ես մէկն եմ այն կարծիքի պաշտպաններից, որոնք շրջահայեցողութիւնը, կարելիին չափ անկողմնակալութիւնը, նոյնիսկ ջենտլմէնութիւնը պարտատրեցուցիչ յատկութիւններ են համարուամ իւրաքանչիւր պատասխանատու գործ ստանձնողի համար: Տարրական գործնական տաքտը եւս նոյն պահանջներն է դնուամ մեր առաջ, եթէ այդ բանին չտանք այն վատ մեկնութիւնը, որ երբեմն տալիս են տհաս գլուխները: Այո՛, այդ բոլորը այդպէս է: Բայց բոլորովին չեմ հասկանուամ, թէ ինչու ես դու Ք...ից սկսած զիջողութիւնների հրաէրներ կարդուամ մեզ նաեւ Չ...ի, Շ...ի... «Հայրենիք»ի եւ Արքիարի մատնութիւնների խնդիրներուամ:

\*\*\*\*\*

«Ինչո՞ւ... այդքան ներողամիտ ես դէպի մի Չ... եւ այդքան պահանջկոտ դէպի քո զինակիցները... Դու պատրաստ ես այսօր մեղաղըել Բաբէնին, Գնունուն, Սուրէնին, Իառֆեանին եւ Վահապին<sup>14</sup> եւ արդարացնել մի Շահնազար, մի «Հայրենիք»,

որը ամենայն օր, երբ Հայաստանում արիմ էր թափում, երբ տասնեակ հազարներով հայեր էին կոտորւում, կառավարութեան պահանջման ենթարկուելով, սիստեմատիքաբար հրատարակում էր, որ հինգ կոտորածների տեղերում ամէն բան հանգիստ է եւ կայսերական կառավարութեան շնորհիւ ամէն բան ցանկալի վիճակն ունի:

\*\*\*\*\*

«Գուցէ դու չգիտես, ինչպէս մենք էլ հաստատ չգիտենք, բայց լսել ենք, որ Խառնիր ասել է Շահնազարի մասին, թէ նա եկաւ իր մօտ եւ սպառնաց ոստիկանութեան, թէ դեսպանատան (ռուսաց), իսկոյն յայտնել իր ով լինելը, եթէ անմիջապէս չձգէ Պոլիսը եւայլն: Այդ մասին մենք, երեւի, կը ստանանք շուտով Խառնից ամենաճիշդ տեղեկութիւններ... Ի՞նչ է նշանակում պ. Շահնազարի իբր թէ «կարետը» յայտնութիւնը, թէ Թիւթիւննեվն է տեղ մեզ Արփիարի քննութիւնը, – այն Թիւթիւննեվը, որին մենք սպանել ենք ինքներս:

Դրանով պէտք է հաստատեն կեղծիքը: Ո՞վ կարող է այդպիսի թղթեր ձեռք բերել դիւնատներից (ոստիկանական), բայց եթէ ոչ լրտեսը. դրանով նրանք չեն հերքել, այլ միայն կը հաստատեն... Իսկ մի հաստատուած լրտեսի սպանութիւնը միթէ դատապարտելի կարող է լինել: Ամենաշատը կարող են բարոյական տեսակէտից հարց զարթեցնել, թէ որքան արժանաւոր բան է՝ մի լրտեսի հետ գործ ունենալ, նրանից օգտուելու եւ յետոյ նրան սպանելու համար... Որքան ինձ գոնէ յայտնի է, մերոնք այդ թուղթը ստացել են Գիւղջեանից<sup>15</sup> եւ ոչ ոք իրենցից որեւէ յարաբերութիւնների մէջ չէ եղել Թիւթիւննեվի հետ. իսկ թէ ինչքան մօտ է եղել գործին Գիւղջեանը, – այդ էլ Ցաւելուածի<sup>16</sup> մի կէտում պարզուած է...

...Հնդհանրացնելով այս բոլոր ասածներս ես կ'ուզէի, սիրելի Միքայէլ, որ դու մի փոքր աւելի համարձակ լինէիր դէպի քեզ անծանօթ, նոր մարդիկ կամ քեզ ծանօթ հակառակորդները եւ մի քիչ աւելի հաւատայիր քո կոռակից ընկերներին:

\*\*\*\*\*

«Դա մի հոգեբանական երեւյթ է, որը յատով է բոլոր մարդկանց եւ որից երեւի որոշ չափով ազատ չէ եւ ոչ մի մահկանացու աշխարհում: Բոլորս այդպէս ենք. որքան անխնայ, կոպիտ եւ պահանջկոտ ենք դէպի մեզ մօտիկ մարդիկ, նոյնքան մենք ներողամիտ, քաղաքավարի եւ զիջող ենք մեզ անծանօթ, անյայտ, նոր անձնատրութիւնների վերաբերմամբ: Բայց դա արդարութիւն չէ: Ինչո՞ւ չի ղեկավարուեմ մօտիկ մարդու շահերով, մի մարդու, որի հետ կապուած եմ եղել երէկ, կապուած եմ այսօր եւ կը լինիմ էգուց, – ու ի նկատի առնեմ, օրինակ, մի խանութպանի տրամադրութիւնները, քանի որ առաջին անգամն եմ նրան պատահում, չփիտեմ ի՞նչ Սատանայ է նստած նրա սրտի խորքերում եւ վերջապէս, քանի որ գուցէ կեանքում այլեա ոչ մի անգամ չտեսնեմ այդ մարդուն: Որքան եւ տեղին լինէր այս «ինչո՞ւ»ն, բայց եւ այնպէս, պէտք է կրկնեմ, որ դա մի հոգեբանական գաղտնիք է, որ յատով է բոլորիս եւ որը չափատրելու համար, մենք պէտք է միշտ գիտակցենք մարդկային այդ թուլութիւնը, որպէսզի շատ դէպքերում չինինք անարդար: Ահա, ուրեմն, ինչով եմ ես բացատրում այն մի շարք ինքնախարազանումները, որ դու անում ես քո վերջին նամակներում, յիշեալ հարցերի շրջանում: Իբրեւ մեղմ, փափով բնաւորութեան մարդ, դու իմ կարծիքով տարւում ես երբեմն մարդկային այդ թուլութեամբ: Բայց մենք կանգնած ենք այսօր գործնական կեանքում եւ իբրեւ այնպիսի մարդիկ, որոնք շատ ընկերներ ունենալով հանդերձ,

կարող ենք միշտ պատահել եւ շատ անծանօթ, նոր մարդկանց ու շատ հակառակորդների, պէտք է մի փոքր զսպենք մեր հոգեկան անարդար հակումները եւ որ գլխաւորն է, միշտ պէտք է զիտակցենք, որ այդպիսի հակումներ ունինք, որպէսզի աւելի քիչ սխալների մէջ ընկնենք։ Ես վերջացրի իմ ասելիքը։ Եթէ ես սխալում եմ ընդունիր նախօրէն իմ ներողութիւնը եւ ի նկատի առ իմ պատրաստակամութիւնը լսելու թէկուզ քո խիստ հայհոյանքները։ Եթէ չեմ սխալում կամ ճշմարտութեան մի մաս կայ իմ ասածներում, – ապա իմացիր քո անելիքի…»։

\* \* \*

Հնարատը է, որ չէր սխալում Քրիստափորը, որ չէին սխալում Իառափեանը, Վոամեանը եւ Պոլսոյ մեր Կ. Կ. միւս անդամները, Հնարատը է, որ Արփիարը իրօք դաւաճան էր, լրտես էր, մատնիչ էր, արժանի միայն յեղափոխական վրիժառու գնդակի եւ անարժան պատոյ ատեանի… Հնարատութենէն մինչեւ իրականութիւնը – տարածութիւն կայ։ Արփիար կարող էր իր բնածին թուլամորթութեամբ, իր անսկզբունք նկարագրի եւ իր անսահման, հայկական կրքի զօրութեամբ, այս կամ այն յանցաւոր վրիպումը գործել… սակայն Իառափեանի, Վոամեանի բազմաթիւ վկայութիւններն ու բացատրութիւնները բաւականաչափ համոզիչ չէին եւ դժուար էր միմիայն նրանց վրայ յենուելով՝ հայ սերունդներու առջեւ յափտենական անարգանքի ենթարկել մի անուանի գրողի ու հասարակական գործիչի, առանց գէթ նրա ինքնարդարացման խօսքը լսելու դժուար էր հայրենավաճառ եւ հայրենաղաւ լրտեսի ու մատնիչի անունը դրոշմել մի մարդու ճակտին, որ ամբողջ կեանքը սպասաւորել էր հայրենիքին, արտակարգ եռանդով ու տաղանդով, իբրեւ գրող ու հրապարակագիր, իբրեւ աշխատակից «Մշակ»ի ու այլ թերթերի, իբրեւ կազմակերիչ հայրենանուէր ընկերութեանց, դեռ 70-ական թուականներէն,

հանդիսանալով թիւրքահայ վերածնութեան ու հայկական դատի ամենախանդավառ ուսմաներէն մին:

Կարծէք, յետագայում, Դաշնակցութեան վարիչ շրջաններու մէջ հետզհետէ թուղացաւ նախկին համոզումը Արփիարի դաւաճանութեան մասին... Մեր շարքերը հանգիստ ձգեցին այդ մարդուն, մինչ յայտնի է որ «Դաշնակցութիւնը» սովորութիւն ունէր հետապնդելու դաւաճաններին անողոք վրէժինդրութեամբ մինչեւ գերեզման...

Արփիար Արփիարեանը ի վերջոյ այնուամենայնիւ սպանուեցաւ: Բարեբախտաբար, ոչ Դաշնակցականի ձեռքով: Վերակազմեալ Հնչակեանները սպանեցին նրան - իր վաղեմի զինակիցները - որքան կը յիշեմ, զուտ թայֆայական նկատումներով:

Հայկական մեծ, տարամերժ դրամայի բնորոշ արտայայտութիւններէն մինն է Արփիարեանի այդ ողբերգական ճակատագիրը, որ շատ կողմերով կը յիշեցնէ մի այլ վաղեմի հրապարակախօսի, Արսէն Թոխմախեանի եղերական վախճանը...

Ընդամէնը երկու ու կէս տարի մնաց Ժընետամ: Եւ այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում իր անհատական կնիքը դրոշմեց գործունէութեան բոլոր ճիւղերու վրայ:

Կը զբաղուէր անգամ ուսանողութեան գործերով, կը մասնակցէր նրա ժողովներուն, ստէպ իբրեւ նախագահ: Կը մօտենար իր հաւանած զաղափարական տղաներուն, կը քարոզէր, կը մշակէր ու կը ճամբէր դէպի երկիր այլեւայլ պաշտօններով:

J. C. WILSON

I hope today, if you're up north  
is to projecting for a good  
amount of territory for the day  
bright, sunspots, etc. - and  
enough to work. It is going to  
last until about sunset. I am  
~~expecting~~ to see it at  
the beginning working around the  
20 degree mark in the sunspot.  
The following day, ~~about~~ <sup>about</sup> 1998  
was a good day, ~~but~~ <sup>but</sup> it was  
still not enough to work. So  
for today this is what I am  
expecting and ~~but~~ <sup>but</sup> I am  
not sure if it will be enough  
to work around everywhere  
there and so far as I am

~~11~~ ~~11~~ ~~11~~

the project was well  
started and so progressing; also  
further meetings were held by  
local telephone stations, continuing  
but with a certain amount of difficulty  
of organization + I ~~had~~  
~~had~~ to leave before a meeting  
which started on Friday  
and left the following <sup>Friday</sup> morning  
and the next day we had another  
meeting together again.  
- ~~had~~ ~~had~~ ~~had~~ ~~had~~ ~~had~~ ~~had~~

Երկու ու կէս տարուան մէջ շատ մը երիտասարդ գործիչներ երկիր մեկնեցան, Քրիստափորի շունչով տողորուած: Նրանց մէջ էր Սարգիս Բարսեղեանը, որ յետոյ դարձաւ Վասպուրականի խոշոր ու սիրուած գործիչներէն մինը եւ 1915-ին ապրեց հայ մտաւորականութեան գողգոթան: Գաղափարի ազնուութեան մարմնացումն էր այդ արիասիրտ երիտասարդը, փոքրիկ հասակով եւ ահարկու խանուածքով: Դեռ պատանի, իր հայրենի Գանձակի մէջ ապրել էր սիրոյ մի բուն տրամա եւ վիրաւորուած պատիւը վերականգնելու համար, ոչնչացրել էր իր ախոյեանին:

Ժընեւ եկել էր ուսանելու: Սկսեց յաճախել համալսարան, եռանդով ուսումնասիրել լեզուն, կազմեց փոքրիկ ու շքեղ գրադարան, Թէն, Սպենսեր եւայլն... Քրիստափորը սակայն, հետեւում էր նրան արթուն ու խուզարկու աչքերով եւ մի օր ըստ Սարգսին գրեթէ հրամայական տոնով.

-Այդ գրադարանը յանձնիր Միքայէլին, իսկ դու դաշոյնի մարդ ես, դու ինձ պէտք ես ուրիշ գործի համար:

Երիտասարդը լուտ ու անտրտունջ համակերպեց եւ քանի մը ամիս յետոյ Քրիստափորի հետ կը գտնուէր Ռուսահայաստանի լեռնոտ վայրերում՝ «փոթորիկի» ծանր ու վտանգաւոր գործի վրայ...

Քրիստափորի հոգեւոր զաւակներէն էր եւ Զաքարիա Պղտիկեանը, որ Ժընեւում իր ուսումը աւարտելէ յետոյ, երկար տարիներ վարեց կուսակցութեան աշխատանքը Ատանայի ու Կիլիկիոյ մէջ:

Նոյն Ժընեւեան, Քրիստափորեան դպրոցէն էր բժ. Արմենակ

Հայրանեանը, որ նահատկուեց 1915-ին, կարծեմ իր հայրենի Տիվրիկի մէջ:

Եւ բազմաթիւ ուրիշներ, որ չեմ լիշեր այս վայրկեանիս:

\* \* \*

Ուշի ուշով կը հետեւէր Ժընեվի մէջ քաղաքական անցքերուն եւ հէնց որ կը ներկայանար նպաստաւոր մի պարագայ մեր ձայնը լսելի ընելու դիւանագիտական աշխարհի մէջ, կամ հէնց որ չարագուշակ մի ամպ կը նշմարէր հորիզոնում, կոտորածի մի վտանգ անմիջապէս շարժման մէջ կը դնէր իր փոքրաթիւ սպայակոյտը՝ այլեւայլն դիմումներու համար:

1900-ի աշնանը Քրիստափոր Փարիզ էր, դիմումներ կ'ընէր «Պրօ Արմէնիա»ի ու այլ գործերու համար՝ նշանաւոր հայերուն, որ հաւաքուեր էին մեծ ցուցահանդէսի առիթով Ֆրանսայի մայրաքաղաքում: Հայկական շարժման մէջ մտցուց Մուկուսայի հայազգի պլոֆէսօր Գամբարօվին, մասնակցեցաւ իր ընկերներով Խաղաղութեան Միջազգային Կօնգրէսին, եւ հրապարակային մի գեղեցիկ ատենախօսութիւն ըրաւ հայոց հարցի մասին, ոռաերէն լեզուով, ոռա-հայկական հասարակութեան առջեւ՝ հոչակատր գիտնական Մաքսիմ Կօվալեվսկիի նախագահութեան տակ: Տեսնուեցաւ մեծանուն հայասէրներու՝ Պրեսսանսէի, Պիէռ Քիյառի եւ այլոց հետ: Կազմակերպեց նրանց հետ «Պրօ Արմէնիա»ի հրատարակութեան գործը եւ վերադարձաւ Ժընեւ:

Դրամի հոգսը մղձաւանջի պէս կը խեղդէր մեր մեծ ընկերոջ: Եւ նա ստէպ կը կրկնէր նշանաւոր խօսքը. «Շարժումը բեղմնաւորելու համար անհրաժեշտ է դրամ, դրամ, եւ դրամ»: Դիմեց քանի մը տեղ – ամէն կողմէ մերժում: Դիմեց ի միջի

այլոց Մոսկուայի ծանօթ միլիոնատէր Ժամհարեանին, որու հետ զնաց անձամբ տեսնուելու Նիցցայի մէջ, 1900-ի ձմեռը: Հայ Կրեսոսը խոստացաւ մէկ գումար տալ արտասահմանեան հայ պրոպագանտը ուժեղացնելու համար, սակայն քիչ յետոյ հրաժարեցաւ:

Քրիստափոր տարաւ այդ բոլորը, ատամները կրծտելով: Մեծ էր նրա ատելութիւնը դէպի հայ կապիտալիստ դասակարգը: Նոյն ատելութիւնն էր, որով լեցուած էին հայոց վերածնութեան բազմաթիւ ուսհվիրաները եւ մասնաւրապէս՝ մեր հինատուց ու մեծ հրապարակախօսը – Միքայէլ Նալբանտեան: Քրիստափորն եւս «Դրօշակ»ի մէջ թունոտ ոճով խարազանեց հայ դրամատէր բուրժուազիան, նրա քար անտարբերութիւնը դէպի հայ տառապանքն ու հայկական դատը: Հոս կ'ուզէի առաջ բերել մէկ երկու էջ այդ բուն խարազանումներէն –

«Հազարաւոր անհատներ կարելի է գտնել հայերի մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ նահանգներ զինել տաճկաստանի մէջ: Դուրս եկա՞ւ քոնէ մէկը... Բաւական է յիշել որ ամենախոշոր գումարը, որ ամբողջ հայութեան մէջ մի հատիկ մարդ նուիրել է զէնքի գործին, այդ եղել է ընդամէնը 25,000 ֆրանք: Բայց միաժամանակ քանի՛ քանի անձնուէր ու փորձուած գործիչներ, քանի՛ քանի գաւառներ կորան, հալուեցին միմիայն եւ միմիայն տարիների ընթացքում եւ ամենաբարեյածող հանգամանքներուած զէնք, զէնք ու զէնք սպասելու եւ վերջի ի վերջոյ չստանալու պատճառով...

«Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդակաստան, Անգլիա, Ամերիկա, Աֆրիկա ջհաննամ են զնում ո՞վ գիտէ ինչ դժոխային միջոցներով իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց եւ ոչ մէկը չգտնուիր, որ այսպիսի մի անսովոր

պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժուէր՝ հասարակօգուտ ունի ձեռնարկի համար: Եւ այս՝ ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլ եւ երիտ. դրամատէրերի շրջանում, որոնք ունին եւ ուսում եւ զարգացում, եւ երբ սկսում են խօսել հասարակական գործունէութեան եւ ժողովրդի շահերին ծառալելու անհրաժեշտութեան վրայ, Գլատստոններ ու Լասսալներ պէտք է գերեզմաններից կանչուեն՝ նրանց հետ մրցելու համար...

«Քաղաքակիրթ աշխարհում էլ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանգ չտար հայկական թշուառ վիճակին: 1894 թւականից սկսած՝ անգլիացիք, ֆրանսիացիք, հոլլանդացիք, ամերիկացիք, զուիցերացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին օգնութեան ձեռք մեկնեցին – երկրի մէջ հայ ժողովրդին դրամ, հաց եւ երկրագործական անասուններ բաժանելու կամ որբացած մանուկներին խնամելու եւ կրթութիւն տալու համար: Իսկ ի՞նչ արին իրենք հայերը: Մենք ունինք հազարատը հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ արուեց մի քանի ազգերից ժողովուած դրամներով: Բայց դուրս եկա՞ւ այդպիսի մէկը»...

\* \* \*

Դրամի հոգսը կաշկանդում էր ամէն բան: «Պրօ Արմէնիա»ի պէս համեստ ձեռնարկն անգամ անկարելի եղաւ ապահովել հայ բուրժուազիայի միջոցներով եւ «Դաշնակցութեան պարագուիսը» ստիպուած էր ֆրանքներով ժողովարարութիւններ ընել գաղութներու ու ուսանողութեան մէջ՝ հրատարակութեան ծախքերը հոգալու համար:

**Դեռ չենք խօսում ընդհանուր շարժման ստիպողական**

պահանջներու մասին: Կովկասում հաւաքուած դրամները հազիւ կը բաւէին կազմակերպական ընթացիկ ծախքերը ծածկելու: Մեծ արդիւնք չունեցաւ ժողովարութեան այն պտոյտը, որ Քրիստափորի հրահանգով գնացինք կատարելու Ահարոնեանը եւ ես Կովկասում ու Ռուսաստանում, 1899-ի վերջերին:

Եւ Քրիստափոր նստած էր Ժընեւում թեւերը կտրուած արծովի պէս: Մեծ-մեծ ծրագիրներ կը յղանար նրա մշտապէս եռուն ուղեղը եւ ամէնէն մեծը յաճախանքի պէս բռնել էր նրա ամբողջ էութիւնը... Ամէնէն մեծը – կազմակերպել հայ ժողովրդի վրէժինդրութեան սրբազան դաւր, զարնել այն մարդուն, որ 300,000 հայերի ջնջման հեղինակ էր...

Մտածեց երկար, որոճաց երկար այդ ծանր կնճիռը եւ ի վերջոյ յղացաւ այն արիւնոտ գործը, որու հետեւանքներէն մէկը պիտի լինէր իր սեփական նահատակութիւնը: Մակեդոնացիք, Բօրիս Սարաֆովի ղեկավարութեամբ, յօրինել էին արդէն դրամ գտնելու միջոցը: Կը յափշտակէին հարուատ մարդկանց, կը փախցնէին լեռները եւ փրկանք կը պահանջէին: Նրանք փախցրեր էին ամերիկուհի Միսս Սթօնը, պահեր էին երկար ամիսներ լեռներու մէջ եւ մահուան սպառնալիքներու տակ, ստացեր էին մի խոշոր գումար, մօտ կէս միլիոն ֆրանկ, Մակեդոնիոյ յեղափոխական գանձարանի համար:

Ինչո՞ւ հայ ուազմիկները չէին կարող որդեգրել նոյն տակտիկը, որ ժամանակ առ ժամանակ կիրառուեր է յեղափոխական ազգերու մէջ, մասնաւրապէս Արեւելքում... Մակեդոնացիք կ'ընդունէին Հ. Յ. Դաշնակցութիւնը, որպէս իրենց ուսուցիչ: Ուսուցիչն ալ երբեմն կարող է ընդօրինակել աշակերտին...

Խնդիրը արդէն որոշուած էր Քրիստափորի ուղեղի մէջ,

նա շուտով դարձաւ կազմակերպութեան որոշումը: Սիմոն Զաւարեան պահ մը ընդդիմացաւ, ապա համակերպեց յանուն կարգապահութեան:

Քրիստափոր ինքն իսկ յանձն առաւ կազմակերպելու այն գործը, որ պիտի փոթորկէր հայ Կրեսոսներու մթնոլորտը: Գործի անունը ինքն իսկ յօրինեց – «Փոթորիկ»: Ես մի օր, «Դրօշակ»ի խմբագրատունը, մօտեցաւ ինձ խորհրդատր ձեւով ու ցոյց տուեց նուրբ կտափ մի պաստառ, որի վրայ տպուած էր «Փոթորիկ» բառը խոշորատառ: Վերը՝ Դաշնակցութեան խորհրդանշանը, վարը՝ հակիրճ ու ահատր սպառնագիրը: Գրաշարին չէր վստահացել եւ ինքն էր շարել կտափ վրայ գիշեր ատեն, մեն-մենակ, «Դրօշակ»ի տպարանում:

Եւ շուտով առաւ կտափ բազմաթիւ պաստառները իրեն հետ, ամրացուց մի ապահով տեղ ու մեկնեց դէպի Կովկաս: Օգտագործեց եւ իր ուղետրութիւնը, տեսնուեցաւ Փարիզում մեր Ֆրանսիացի բարեկամներու հետ, եւ Բերլինում՝ Բէրէլի հետ, որին ներկայացուց Հայաստանի վիճակը (թարգմանչի դերը կատարեց բժ. Սաղեան): Բէրէլ այդ առթիւ մի երկար նամակ ուղղեց «Դրօշակ»ի խմբագրութեանը, հայոց հարցի եւ Գերմանիոյ քաղաքականութեան մասին:

\* \* \*

1901-ի վերջերը Քրիստափոր Կովկաս է: Հաստատուեց Բագում եւ երիտասարդական խանդավառութեամբ վերստին նետուեց պրոպագանդի մէջ: Թող պատմեն նրանք, որոնք ականատես եղած են մեր ընկերոջ այդ շրջանի գործունէութեան: Նոր շրջան կը սկսուէր կովկասեան մտաւորականութեան կեանքում, Պետերբուրգին ու Մոսկուային

ընկերվարութեան ալիքը յորձանք էր տուել դէպի Բաքու եւ Թիֆլիս, ոռաւ-վրացական սոցիալ-դեմոկրատիան ծաւալել էր իր դրօշը, պրոլետարիատի զանգուածները կ'ալեկոծուէին ու տեղի կ'ունենային գործադուներ ու ցոյցեր։ Այդ բոլորը, բնականաբար, կ'անդրադառնար նաեւ հայ կեանքի վրայ։ Հոն տակափին մտքերու վրայ կ'իշխէր Դաշնակցութիւնը, բայց երիտասարդ մտաւրականութեան մէկ մասը տարուել էր արդէն համառուսական ընկերվարական շարժումով։



Քրիստափոր Միքայէլեան եւ Վալերիան  
Լունկեվիչ (Արարատսկի)

Քրիստափորի գիտակցութեան մէջ առաջ կը գար ծանր տագնապ: Ինքը ընկերվարական էր իր ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեացքով: Սակայն չէր ուզեր սոցիալ-դեմոկրատիայի լայն ծաւալումը հայ զանգուածներու մէջ, վասն զի այդտեղ վտանգ կը տեսնար թրքահայ դատի եւ ընդհանրապէս հայ ազգային դատի համար: Ստէպ, գաղտնի, բազմամարդ ժողովներում բանակոփւ կը մղէր սոց-դեմոկրատիայի քարոզիչներու դէմ (Գնունեան եւ այլք) եւ միօր կը նետէր նրանց այս խայթիչ boutade-ը:

—«Դուք խօսում էք յաւելեալ արժեքի մասին (որ դրամատէրը իւրացնում է, շահագործելով գործատրին), բայց այնտեղ, թիւքաց Հայաստանի մէջ, խնդիր է դրուած յաւելեալ արեան»...

Համակ եռանդ էր այդ պատմական օրերու մէջ, շարունակ կը պտտէր, կը քարոզէր ու կը զինուորագրէր նոր երիտասարդ ուժեր. չէր մոռնար եւ պատանեկովինն ու աշակերտովինն. նրա ձայնին ուշադիր էին ամէնքը. մի ձայն, որ ամէնէն հեղինակաւորն էր նաև շահագործի եւ գուցէ ամբողջ Կովկասի ալեծուփ մթնոլորտում:

Պրոպագանտի առօրեայ հոգսերը, սակայն, չին մոռցնէր Քրիստափորի բուն ծրագիրը, «Փոթորիկ»ը, դրամի ֆոնտը, որի համար Կովկաս էր գնացել:

Չէր ուզեր, սակայն, մէկէն ի մէկ դիմել բոնի միջոցների. յեղափոխական լինելով հանդերձ, նա կը խորշէր արինէ եւ հայ դրամատէր դասակարգի վրայ ազդելու համար, բոնել էր համոզելու խաղաղ ճամբան:

26 փետրուար 1902 թուակիր մի նամակով կը գրէր ինձ

## Բագուէն.-

...«Կովկաս դառնալու վճիռդ նմանապէս առայմ յետաձգել պէտք է: Կան այստեղ բաներ, որոնց մասին առայժմ չեմ գրում ոչ ոքի, վախնալով յետոյ հիասթափուենք: Քանի դեռ այստեղ եմ, քանի Բագուից ոտ չեմ դուրս դրել, դեռ այստեղից սպասելիքների մասին դժուար է հաշիւ տալ: Յամենայն դէպս, շատը գնացել քիչն է մնացել. շուտով երեսի ամէն բան յայտնի կը լինի թէ ինձ եւ թէ ձեզ: Ի հարկէ, մինչեւ օրս ես դեռ խաղաղ ճանապարհի վրայ եմ»...

Նամակի միա մասը կը վերաբերի Սասնոյ գործերուն: 1902 թուականն էր. թիւրք կառավարութիւնը լուրջ պատրաստութիւններ կը տեսնէր՝ իսպառ կործանելու ըմբուտ լեռնավայրը: Հարկ էր դիմագրաւել... Քրիստափոր կը գրէր.-

«Մի շաբաթ առաջ Թայինեանի<sup>17</sup> միջոցով գրեցի Քիյեառին, որ աշխատին գարնանը գոնէ ֆրանսիական հիապատոս ուղարկել տալ Մուշ, Սասունի գործերով, այնտեղի անցքերով հետաքրքրուելու համար: Բանը նրանուն է, որ գարնան սպասում են այնտեղ ընդհարուաններ: Ներփակ նամակներից որոշ չափով կարող էք գաղափար ստանալ այդ մասին: Արեւելեան Բիւրօի հետ կարգադրեցինք եւ գրեցինք Գիսակին<sup>18</sup>, որ ինքը, Վահանը եւ Դժոխքը շուտով դէպի Սասուն գնան, իրենց հետ քաշելով իրենց ձեռքի տակ գտնուող մթերքները եւ աշխատեն 1) Միացնել բոլոր խմբերը, 2) Հաւաքել տեղացի երիտասարդների մի մասը եւ 3) Հաց եւ ուրիշ մթերքներ գնելով պատրաստուեն գալիքը պատուով դիմաւորելու: Արդէն երէկ այդ նպատակի համար այստեղից փոխադրեցինք 1,000 ռուբլի եւ խոստացանք կրկին 3-4,000: Որպէսզի դէպքերը ծանր հետեւանքներ չունենան ժողովուրդի համար, շատ ցանկալի է

Եւրոպական ներկայացուցիչների մօտիկութիւնը այդ շրջանին: Դուք էլ, ըստ ձեր կարողութեան, աշխատեցէք այդ մտքով: Սիմոնը<sup>19</sup> արդին ճանապարհուել է այստեղից»...

\* \* \*

Դրամի հոգու շարունակում էր ճնշել... Քրիստափոր նալթաշխարհի հայ միլիոնատէրերու հանդէպ բոնել էր համոզելու խաղաղ ճամբան, որ, սակայն, տարաբախտաբար, շօշափելի արդիւնք չտուեց: Ստացուածը չնչին բան էր հսկայական պահանջներու հանդէպ:

Այն ժամանակ էր, որ մեր ընկերը, յուսահատ, անէծքը շրթներին՝ որոշեց խաղալ իր վերջին քարտը եւ հրապարակ նետեց «Փոթորիկ»ի խումբը: Ինքն անձամբ ստանձնեց ղեկավարութիւնը: Եւ սքանչելիօրէն խաղաց իր դերը այդ վտանգալի, պատասխանատու, գերազանցապէս դաւադրական գործի մէջ: Իր մի խումբ կորիւններով փախցուց եւ գերեվարեց հարուստ Ժամհարեանը Շուշու բարձրունքներում: Խմբի մէջ էին Մարգար Ժամհարեանը, որ նահատակուեց 1905-ին հայ-թաթարական կոփիներու մէջ, Սարգիս Բարսեղեանը եւ մեր վիթխարի եւ սքանչելի Օննիկ Նեվրուզը (Թէքրիտաղցի), որին Քրիստափորը տարել էր յատկապէս՝ Ժամհարեանին իր դաժան տեսքով սարսափեցնելու համար<sup>20</sup>:

Լաց, աղաչանք ու պաղատանք հայ Կրեսոսի կողմէն... Վճռական խոստում՝ որ Դաշնակցութեան պահանջած գումարը պիտի բերէ որոշուած օրը, նշանակուած տեղը:

Ընկերները արձակեցին նրան, թէեւ, ի հարկէ, այնքան միամիտ չէին, որ բացարձակ հաւատ ընծայէին կալանատրի

**խոստումներուն:** Դիւրին բան չէր շաբաթներով ու ամիսներով պահել մարդուն գերութեան մէջ: Նարաբաղի բարձրունքները Մակեդոնիոյ լեռները չէին եւ ոռասական ոստիկանութիւնը փոքր ինչ աւելի լաւ էր կազմակերպուած, քան թիւրքականը:

Ընկերները արձակեցին Ժամհարեանին, վերջին անգամը ուղղելով նրան այս սպառնական խօսքերը, որ արձանագրուած էին Ժընեվէն բերուած կտաւէ պաստառի վրայ. «Մատնութեան պարագային Հ. Յ. Դաշնակցութիւնը մահով կը պատժէ մատնիչը»...

Հայ հարուատի վրայ չազդեց, սակայն, սպառնալիքը: Ազատուելով, նա անմիջապէս վազեց ոստիկանատուն... Եւ երբ նշանակուած օրը Պեխ աղբրի մօտ, մեր 2-3 ընկերները կը սպասէին Ժամհարեանին, որ պիտի բերէր խոստացուած գումարը (որքան կը յիշեմ, երեսուն հազար ռուբլի), ոռա ոստիկաններու մի խումբ էր, որ նոյն Ժամհարեանի ուղեկցութեամբ եկաւ ու ձերբակալեց մերոնց: (Զերբակալուածներու մէջ էր փոքրիկ Սարգիսը, որ յետոյ տարուեց Գանձակի բանտը, ապա մի ուրիշ տեղ փոխադրուելու ատեն, սպանեց իր ուղեկից ժանտարմը եւ փախաւ):

Գոռող ու չարախնդաց՝ հայ մեծատունը շարունակեց իր արհամարհու ընթացքն դէպի հայ յեղափոխական կազմակերպութիւնը ապահնելով ոռասական ոստիկանութեանը, որ նրա աչքում ամենազօր էր: Նոյն մտայնութիւնը կը տիրէր մեր ամբողջ դրամատէր դասակարգի մէջ:

Մատնութիւնը սովորութիւն դարձած էր մասնաւրապէս իսահակ Ժամհարեանի մէջ, որու մահուան առթիւ շատ թափուեցան կոկորդիլոսեան արցունքներ: Դեռ 1889-ին

էր, որ նա մատնեց ոռա դպրոցական վարչութեանը հայ աշակերտներուա մի հայրենասիրական քայլը: 1889-ի Զատկին Շուշուայ ոչալական դպրոցի բարձր դասարաններու մի խոսմբ աշակերտներ – Դափիթ Տէր Սարգսեան, Միքայէլ Տէր Դավթեան, Հմայեակ Նազարեան եւ տողերուա գրողը – կառքով տունէ-տուն պտտելով, ժողովարարութիւն կ'ընէինք ի նպաստ «Ոյժ» հայրենասիրական ընկերութեան, որ հիմնուած էր Ղարաբաղի մայրաքաղաքում Դաշնակցութեան հինադրութենէն քանի մի տարի առաջ: Պտոյտը յաջող էր, ամէն տեղ համակրանքով կը դիմաւորէին մեզ: Սիրալիր ընդունելութիւն ըրաւ եւ Ժամհարեանը, խոստացաւ մէկ նուէր, սակայն երկու օր յետոյ սարսափով իմացանք, որ մեր այցի մասին նա անձամբ գնացել ու հաղորդել էր դպրոցի հայատեաց վերատեսչին (Տարասօվ), որ պատմեց մեզ քանի մի օր բանտարկութեամբ դպրոցի մէջ եւ այնուհետեւ խստացրեց հսկողութիւնը դպրոցի հայրենասէր աշակերտներու վրայ, որոնք ամէնքն էլ անդամագրուած էին «Ոյժ» ընկերութեան, կը մասնակցէին գաղտնի գրական երեկոյթներուն, արգիլուած թատերական ներկայացուամներուն, եւայլն:

\* \* \*

Ժամհարեանի մատնութեան հարուածը, ընականաբար, խիստ ծանր եղաւ: «Փոթորիկ»ի գործը կարծէք էն սկզբից կը դատապարտուէր վիժուամի եւ այնքան ծրագիրներ ի դերեւ կ'ելնային...

Քրիստափոր չվհատեցաւ այդ ժամանակաւոր ֆիասկօէն: A la guerre, comme al la guerre... Մատնիչը պէտք է պատժուէր: Եւ կովկասեան հայ մեծատուն դասակարգը պէտք է զգար իր կաշուի վրայ հայ յեղափոխական կազմակերպութեան ոյժը,

որպէսզի սթափուէր իր լեթարգիական մրափէն ու փոքր ինչ հետաքրքրուէր ազգային գաղափարական հոսանքներով:

Այդպէս որոշեց Դաշնակցութեան պարագումիը եւ շատ չանցած, Մոսկուայի հայոց եկեղեցու բակում օր ցերեկով մատնիչ Ժամհարեանը սպանուեցաւ երիտասարդ Մաթէոսի ձեռքով, Քրիստափորի երկարպագու եւ ազգական<sup>19</sup>: Դաժան քայլ էր եւ ոչ ոք աւելի չէր գարշում հայ մարդու արիմ թափելուց, քան Դաշնակցութեան գիտակից տարրերը: Մատնութիւնը, սակայն... իրողութիւն էր:

Դէպքը, ոռամբի պայթիւնի պէս, սասանեցրեց հայ բուրժուազիին: Քրիստափոր իր թագստոցից սկսեց այնուհետեւ շանթահարել մեծ հարուատներին իր պահանջներով ու սպառնալիքներով: Կտաէ խորհրդաւոր պաստառները անձնուէր ուազմիկներու ձեռքով կը պատէին ամենուրեք հարուատ տուներու եւ գրասենեակներու մէջ: Ոչ ոք այլեւ չէր համարձակեր – մատնել: Շուարած, խելակորոյս, հայ միլիոնատէրերը գաղտուկ մեծ ժողով ըրին Թիֆլիսի մէջ, Անանօվի նախագահութեամբ: Փոքրամասնութիւնը, զլուխ ունենալով նախագահը, կը պահանջէր յանձնել կտաէ սպառնալիքը եւ Դաշնակցութեան բոլոր ղեկավարները ոստիկանութեան: Մեծամասնութիւնը, աւելի խոհեմ, թելաղբեց ընդառաջ զնալ Դաշնակցութեան պահանջներուն: Հիմք կայ կարծելու, որ միմիայն երկիւղը չէր այդ մեծամասնութեան գրգիշը՝ այլ եւ այն՝ որ նրա մէջ որոշ տարրեր համոզուեր էին, թէ յեղափոխական կազմակերպութիւնը արկածախնդիրներու մի խումբ չէր եւ թէ դրամները պիտի ծառայէին հայրենասիրական մի գործի:

Այսպէս թէ այնպէս, Քրիստափորի ձեռնարկը պսակուեց

լիակատար յաջողութեամբ: Այժմ արդէն նիւթական հնարատրութիւն կար իրագործելու հակահամիտեան մեծ ծրագիրը:

Շուտով արդէն մեզ մօտ էր, Ժընեւ: Գնաց ընդհ. ժողովի, վերադարձաւ ու նորէն գնաց... այս անգամ անդարձ:

Ժընեփի կայարանը հաւաքուել էր մեծ բազմութիւն: Ամէնուն ծանօթ չէր Քրիստափորի ուղեւորութեան նպատակը. ամէնքը, սակայն, զիտէին, որ նա այս անգամ պիտի նետուէր մահացու վտանգի մէջ: Սպասումի ծանր, ճնշող վայրկեաններ էին: Խօսելու սիրտ չկար: Լուս արձանացած էինք մեր սիրելի ուսուցչի հանդէպ, որ կանգնած էր գնացքի լուսամուտին: Երբ գնացքը շարժուեց, բազմութեան մէջ լսուեցաւ բարձրաձայն հեկեկանք եւ հրաժեշտի այս խօսքերը. «Քրիստափոր, թանկագին Քրիստափոր, մնան բարով»... Վիշտը համակեց բոլորին: Տիսուր նախազգացումը կար վեթերանի մօտալու մահուան...

Մի պահ, որ կարելի էր եւ պէտք էր արգիլել, որ կարելի էր եւ պէտք էր յետաձգել ամբողջ տասնեակ տարիներով, ի շահ գործի ու կուակցութեան... Սակայն, մեր վարիչ շրջանները ոչինչ չըրին, համակերպեցան մի շուարեցուցիչ անտարբերութեամբ, զիտակցութեան մի տարապայման մթագնումով... Ա՞հ, սահմանափակ միամիտները սիրով կը փաստաբանեն, թէ Քրիստափոր իր մահով աւելի ըրաւ հայ ազգի ու Դաշնակցութեան համար, քան եթէ ապրէր...

Նա գնաց նետուելու զուտ տերրօրական ահաբեկչական գործունէութեան մէջ – եւ ոչ միայն լոկ կազմակերպիչի, վարիչի դերով: Գնաց, թողնելով ահագին կուակցութիւնը անգլուխ

ու որբ, հողմերու միջին: Ղեկավարութիւնը թուղացաւ: Կը բացակայէր Քրիստափորի երկաթէ բազուկը եւ մենք ամէնքս սրտի խորունկ կսկիծով զգացինք այդ՝ վերջին քսան տարուայ հայոց պատմութեան սուր ու բախտորոշ տագնապներու ընթացքում:

Հետեւեալքաղուածքը մի յայտնի չափով թերեա ցոյց կուտայ, թէ ինչ դիրք կը բռնէր Դաշնակցութեան պարագլուխը 1912-13 թուականներին, երբ ոռու-գերման ոչֆօրմներու ծրագրի առթիւ աննախընթաց խանդավառութիւն կը տիրէր հայ աշխարհում եւ երբ ամբողջ թիւքահայութիւնը, Պատրիարք, Ազգ. Ժողով ու քաղաքական կուսակցութիւններ, միանգամայն տարուել էին ոռուասիրական խելագար հովերով (մի հանգամանք, որով 1915ին Թալէաթ փաշա կ'արդարացնէր իր հայաջինջ ձեռնարկը) կամ 1914-ին, կամաւրական շարժման օրերում, երբ թիւքահայ մի շարք գործիչներն ու բոլոր թիւքահայ խմբապետները կը զինուրագրուէին ոռուական շարքերում...

Մեր փարիզեան ընկերներէն բժ. Լորիս-Մելիքով բողոքել էր «Դրօշակ»ի մէջ հրատարակուած Քրիստափորի մէկ առաջնորդողի դէմ, որ հակաանգիական շունչ ունէր: Նա կ'ուզէր, որ մեր համակրութիւնները Անգլիոյ կողմը յարին:

Քրիստափոր հետեւեալը կը գրէր այդ դիտողութեան առթիւ, 1900 թին:

«Մենք համաձայն չենք, որ «Դրօշակ»ի վերջին համարի առաջնորդողը քաղաքական սխալ է մեր կողմից, ինչպէս կարծուած է Թ. (Լ.-Մ.): Որ մեր յօդուածը յեղափոխական տեսակէտից կրթական նշանակութիւն կարող է ունենալ մեր ժողովրդի համար, այդ պարզ է մեզ համար: Իսկ ի՞նչ

պիտի տար մեզ յօդուտ Անգլիայի գրուած մի բան,- այն Անգլիայի, որի մի վճռողական քայլը ժամանակին բաւական էր կոտորածների առաջն առնելու համար. այն Անգլիայի, որի հրեշտուր անհաւատարմութեանը հաւատարմութեամբ պատասխանելը մի աննօրմալ երեսոյթ կը լինէր միայն: Առաջին. մենք արդէն գիտենք, որ կառավարութիւնները մեր յօդուածներով չեն որ հետեւում են այս կամ այն ընթացքին մեր հարցի վերաբերմամբ: Երկրորդ. դէմ լինելով Անգլիային, ինչպէս եւ Ռուսիային, Գերմանիային, մենք ազատ ենք մնում կրիտիքական րոպէին այն կողմը յարելու, որից շօշափելի օգնութիւն կը տեսնենք:

Երրորդ. առանց այն էլ, ոռաները մեզ համարում են Անգլիայի գործիք-լրտեսները, իսկ անգլիացիք, գերմանացիք եւ հայ հակաղաշնակցականները – Ռուսիայի գործակատարներ: Համակրութեամբ վերաբերուել այդպիսի հանգամանքներում Անգլիային, դա կը նշանակէր առանց որեւէ օգտի գրգռել հակառակ կողմը-ոռաներին, որոնք հէնց այդպիսի կասկածների շնորհիւ այնքան խիստ, այնքան անգութ են դէպի մեզ: Այս ամէնը՝ դեռ զուտ «տիպլօմատիական» տեսակէտից: Իսկ եթէ աւելացնենք մի փոքր էլ «բարոյական» եւ այլ տեսակէտներ, որոնք նոյնպէս ժողովրդի կրթութեան համար անհրաժեշտ են, որովհետեւ ժողովուրդը ամբողջապէս տիպլօմատներ չի դառնալու, այնինչ՝ մի ընդհանուր, համազգային գործ կատարելու համար միանգամայն անհրաժեշտ է որ նա հարուստ լինի բարոյական առողջ բնագդներով – այն ժամանակ, կարծում ենք, ակներեւ պէտք է լինի, թէ կշռի ո՞ր կողմը պէտք է թեքուի: Եթէ ոչ splendid isolation, գոնէ «պատուաւոր մեկուսացում», – ահա մեր կարծիքը, մեր բռնելիք ընթացքը: Բոլորը մեր դէմ են, մենք չենք կարող ոչ ոքի կողմը լինել – ահա մեր ֆօրմուլան. մինչ... մինչ կը տեսնենք, թէ ո՞վ է մեր


շահերում տեսնում իր սեփական շահերը»:

Որքան շիտակ ըմբոնում եւ գաղափարապաշտ ոգու հետ որպիսի զգաստ, առողջ ուշալիզմ այդ մարդու մէջ, որ ծնուած էր դիւանագէտ-վարիչ, բայց որին մենք նետեցինք տերրօրական դաւերու զիրկը եւ այնտեղին – զայլի երախը...

1904-ին, մահէն ընդամէնը 6 ամիս առաջ, Քրիստափոր Աթէնք է: Բայց նրա նամակներում այլեւ չենք կարդում քաղաքական իմաստութեան հրահանգներ: Այդ նամակներէն այժմ արդէն ուժանակի ու վառորդի հոտ կը բուրէ:

յու. 19. Եր առ. Տարի յի ջնուր թիւն ու բար չի եղած անոնք  
պարհե շու քատ որեց. այդ բարեւու ցնոր նուազ ըմբոնք,  
և - այց բարելուրե բայց բարեւու ցնոր անուազ է ի ջնուր անու  
ու առ ըստի: այսին առաջ. և բար այս ենք և այլ անու  
պարեաց այսու թ. բարեւու այց տուրք:

յու. 20. Կառապատաւ առեց և այստե իտեր իութե օստիք առաջու  
թիւ յուրի տէցնե իւ տար. համաս և պատու:



10 մար. 90 թ.  
Արքա:

Քրիստափորի ձեռագիրը  
Փորձնական Կանոնագիր Ցուցական Սարմնի  
«Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան Պատմութեան  
Համար», Դ. հատոր, էջ 223

**Ահաւասիկ մէկը, ուղղուած Ժընեւ Թուագրուած է 1904 օգոստոս 26: Քրիստափոր զրում է մեզ.-**

...«Թիւֆէքչիեվից<sup>20</sup> վերցրած է նիւթը<sup>21</sup> այն չափով, որ բացի փոխադրուած 3,200 ֆրանկից, հարկաւոր է նրան վճարել կրկին մօտ 2,400: Սաֆօն իր հաշիմերը ուղարկել է ձեզ. ստուգեցէք եւ այդ գումարն էլ լրացրէք, խնդրում ենք...

«Մենք այս օրերս ամփոփելով մեր մարմնի կիսամեայ հաշիմերը, ձեզ կ'ուղարկենք. այդ հաշիմերում դուք կը գտնէք մի քանի թղթեր, որոնցից կարելի է իմանալ, թէ ո՞ւր ի՞նչ կարելի է գնել: Բայց յամենայն դէպս հարկաւոր ենք համարում ձեզ հաղորդել հետեւեալ մի քանի հասցէները.

1) Զէնք մեծ քանակութեամբ (եթէ պատէրը հասնի մօտաւորապէս 30,000 ֆր.ի), յանձն է առնում ամենալաւ տեսակներիցը... հետեւեալ մեծ վաճառատոմը.

\*\*\*\*\*

«Պրն. Կր... թէեւ գլխաւորապէս գործ ունի զէնքի հետ, բայց կը տայ նաեւ պայթուցիկներ...

2) Հեռազիտակներ, տարածութիմը չափող, ծախում են Փարիզում (տրուած է հասցէն Մ. Վ.)

3) Պայթեցնող ելեքտրական մեքենաներ, կապսիլներ ամէն տեսակի, պատրոյգներ, մկրատներ եւ առհասարակ պայթուցիկների վերաբերեալ ամէն տեսակ գործիքներ... վաճառում են (տրուած է հասցէն Մ. Վ.):

4) Գրքեր պայթուցիկների եւ զինուորական (ռազմական)

խնդիրների մասին կարելի է գտնել... (հասցէն):

«Էլլէնի<sup>22</sup> գտած նոր նիւթը, որ թէ ոյժի եւ թէ մանաւանդ գնի, փոխադրովթեան ու այլ յարմարովթիւնների կողմից կարող էր իսկապէս մեզ համար «գիտ» համարուել, դժուարանում ենք յանձնարարել թէ ձեզ եւ թէ կազմակերպովթեան ուրիշ մարմիններին հետեւեալ պատճառով։ Ինչպէս այստեղ Փարիզից բերուած գրքերից իմացուեց, այդ խառնուրդը վտանգաւոր է, եթէ պատրաստուելուց յետոյ շուտով չի գործածում։ Որա մէջը կայ chlorate de potasse, իսկ բանից դուրս է գալիս, որ վերջինս խոնաւովթեան եւ տաքի ազդեցովթեան տակ, ամէն տեսակ խառնուրդներում crystallise է լինում եւ դառնում է շատ զգայուն, այնքան զգայուն, որ երբեմն ինքնիրեն պայթումներ է առաջ բերում՝ լոկ ատմօսֆերային փոփոխութիւնների ազդեցովթեան տակ<sup>23</sup>... Մենք կ'ուղարկենք ձեզ պատրաստովթեան ձեւի մասին բացատրովթիւններ եւ այնուհետ կը տեսնէք՝ ե՞րբ, ո՞ր դէպքում կարելի է օգտուել դրանից եւ յանձնարարել ընկերներին...»

Ապա տեսնում ենք Քրիստափորին Ֆիլիպէ, Սօֆիա, Բուզգարիոյ այլ անկիւններում։ Երկար թափառումներ ու դեգերումներ, նախապատրաստական անդուլ աշխատանք, ուժանակային փորձեր եւ ի վերջոյ՝ զարհուրելի աղէտը Վիտօշի բարձրունքներում, որուն զոհ գնաց իր սիրելի Վոամշապուհի հետ։

Մեռաւ, որպէսզի ապրի Համիտը։ Որոշած էր անձամբ վարել դժոխային մեքենան, անձամբ տանել դժոխային կառքը Երլտրզի պարիսպներու մէջ, անձամբ սպանել Համիտը։ Եւ նրա մահը – մահն եղաւ իր ծրագրի, որի գործադրովթիւնն անցաւ այնուհետեւ Երկրորդական անձերու ձեռքը եւ վիժեց։ 1905 թ. յուղիսի 8-ի Երլտրզեան պայթիւնը չտուեց ցանկալի

արդինքը, թէեւ պատճառեց կոսակցովթեանը դրամական ահատը ծախքեր, նիվթեց մեծ աւերած ու կոտորած սովթանի շրջապատում եւ ունեցաւ մեծ շառաչում։ Աբտիւ Համիտ ողջ մնաց եւ, աւելի բախտատր, քան իրեն յաջորդող վամպիրները, Թալէաթ, Զէմալ, Էնվէր, Դոքտոր Շաքիր, Սալիտ Հալիմ, Տրապիզոնի վալին, Եսայլն. մեռաւ ի վերջոյ բնական մահով։

\* \* \*

Շատերը կը մոռցուին – նա կը մնայ: Քրիստափորի աստղը չի մարի հայոց խաւար հորիզոններում, նա կը մնայ որպէս ուղեցոյց փարոսներէն մինը հայ գաղափարական սերունդներու համար։ Դաշնակցական, Ռամկավար, Հնչակեան, Մենշեփիկ թէ Պոլշեփիկ, բոլոր նրանք, որոնց համար նոփրական է հայ բազմատանջ ժողովրդի դատը, պատկառանքով պիտի անցնին այդ մարդու շիրմի առջեւէն, որ գիտցաւ ոչ միայն սպասաւորել իտէալին, այլ եւ լուաստրել իտէալը իր պայծառ ու ներհուն իմացականովթեամբ եւ իր մարդկային ու ընկերական վարք ու բարքով։

Բոլշեփիկներէն լաւագոյնները կը գիտակցին, վերջապէս, որ բարոյական արժէքները նոյնն են պատմովթեան բոլոր շրջաններում, աշխարհագրական բոլոր գօտիներու մէջ, որ մարդուն գեղեցկացնողը ջինջ, վերասլաց իտէալիզմն է, յամառ, դժնդակ, անձնուրաց ճիզը, յօգուտ հարազատ ժողովրդի եւ բոլոր ժողովուրդների. կը գիտակցեն – Քրիստափորի օրինակէն – որ անկարելի էնպաստել մի համայնքի բարոյական վերածնովթեան ու ձեռք բերել ճշմարիտ ժողովրդականովթիւն, առանց ճշմարիտ հայրենասէր լինելու։ Բոլշեփիկներէն լաւագոյնները կ'ըմբռնեն, որ Քրիստափորի եւ իր ընկերներու ջանքերով է ստեղծուել 30 տարուց ի վեր հայ մտածող եւ զգայուն շարքերու մէջ այն

ուժեղ, ուամկավար, ազատական գիտակցութիւնը, որու վրայ այժմ կ'ուզեն յաւերժացնել բռնութեան տիրապետութիւնը, շրջելով հայոց պատմութեան անիւր դէպի խաւար միջնադար...

Իսկ ծեր գործիչները, որ դեռ կ'ապրին Հայաստանի աշխարհի մէջ, ողբալով ներկայ մտաւոր ու բարոյական թշուառութիւնը, կը յիշեն միշտ ջերմ կարօտով հայ ազատագրական շարժման մօհիկաններին եւ ստէպ կը կրկնեն ոռա բանաստեղծի խոսքերը.-

«Այո՛, մարդիկ կային մեր ժամանակներում – հսկաներ, ոչ մեղ պէս»...

\* \* \*

Բոլգար մայրաքաղաքը սարքեց Քրիստափորին արքայավայել թաղում: Մի ճշմարիտ ապօթէօղ էր, որ կատարեցին դագաղի շուրջը բոլգար-մակեդոնական ուազմիկ շարքերը, Բօրիս Սարաֆովի առաջնորդութեամբ:

Քսան տարի անցաւ: Եւ թանկագին նշխարները դեռ կը հանգչին Սօֆիայի գերեզմանատանը, օտար հորիզոններու տակ, սպասելով այն օրին, երբ հայրենի հողը, ազատուած ընդմիշտ օտար տիրապետութեան ու բռնութեան մղձաւանջէն, կը կարողանայ հիւրնկալել իր դաժան ու միշտ հրապուրիչ ծոցի մէջ՝ հայ ժողովրդի մեծ զաւակը – հայկական Մածանին:

(ՎԵՐՋ)

(<sup>1</sup>) Տես այս մասին մեր «Բողոքը Նորագոյն Պատմովթեան մէջ»

(<sup>2</sup>) Նշանակալից է, որ առաջին եւրոպացի գրողը, Փարիզեան Թանի խմբագրապետ Հերբեթը, Պարսկաստանի իր ուղեւորովթեան ընթացքում ծանօթանալով Եփրեմի ու նրա կոհմերի պատմովթեանը, համեմատում է նրան Գարիբալդիի ու Կրօմուելի հետ

(<sup>3</sup>) Ինքը հանգուցեալ Զալեանը հաղորդում էր ինձ, որ այդ ձեռնարկի մէջ ամենախոշոր դերն ունեցել է Ներսէս Աբէլեան: Մ.Վ.

(<sup>4</sup>) Լորիս-Մելիքեանի կեղծանունը

(<sup>5</sup>) Ա. Ահարոնեան

(<sup>6</sup>) Երրորդովթիւն

(<sup>7</sup>) Սմբատ Խաչատրեան

(<sup>8</sup>) Այս դրուագը չենք բերում, ի հարկէ, ոեւէ ստուեր ձգելու համար ողբացեալ Շահումեանին վրայ. ճիշտ է, նա հակառաշնացական իր պալքարի մէջ, մեթօտի տեսակէտէն, բնաւ չէր տարբերում միւս հայ սօցիալ-դէմոկրատներէն, ճիշդ է նաեւ, որ նա արտակարգ ոչինչ ունեցաւ իր գործունէովթեան մէջ եւ նրա գիտական պաշարը խիստ սահմանափակ ու բրօշիւրային՝ բնաւ ոչնչով չփայլեց այն տեսական բանակոփաներու մէջ, որ եղան երկուական միջեւ Կովկասում, 1906-ին եւ յետագայում, ազգային ու այլ հարցերու շուրջը, – բայց 1917-ի փոթորիկներու մէջ, իբրեւ Լենինի տեղապահ Անդրկովկասում յանկարծ ու տարօրինակապէս խոշորցաւ, դառնալով մեծ յեղափոխական դէմք եւ միանգամայն ջերմ հայրենասէր, որ եւ գտաւ իր ազնիւ, ողբերգական վախճանը բարբարոսներու գնդակներու տակ...

Առիթէն կ'օգտուինք յետ վանելու այն մովթ ու անվայել գաղտասովները, որ երբեմնապէս ծայր կուտան այլ եւ այլ տեղեր, ձգտելով չ. Յ.

Դաշնակցովթեան մեղսակցովթիւնը հաստատելու Շահումեանի ու իր ընկերներու այդ եղերական վախճանի մէջ: Դրա դէմ կ'աղաղակէ այն հանրածանօթ իրողովթիւնը՝ որ 1918-ի Բագուի ալէծուփի օրերում Ստեփան Շահումեան եւ Ստեփան Զօրեան (մեր Ռոստոմը), իբրեւ երկու մեծագոյն ուժերու ներկայացուցիչներ, մոռանալով անցեալը, գործել են թեւ թեւի, մի յուղիչ համերաշխովթեամբ, ու մտերմովթեամբ, որ նոյն

Համերաշխութեան զգացումը ունեցել են դէպի Շահումեան նաեւ մեր

միւս Դաշնակցական գործիչները

(9) Ռոստոմի կեղծանուներից մէկը

(10) Տես Կ. Պոլսոյ մէջ հրատարակուած գրքոյկը, որ ամփոփում է ընկերներու մի գեղեցիկ յօդուածաշարք Քրիստաֆորի մասին:

(11) Այդպէս կ'անուանէինք տիկին Միքայէլեանին:

(12) Թիւ 5, Ալբրէն

(13) Նամակը թուազրուած է 1896 թ. 15 հոկտեմբեր

(14) Վռամեանի այլ կեղծանունը

(15) Խօսքը ողբացեալ Մելքոն Կիւրճեանի մասին է

(16) Խօսքը «Դրօշակ»ի յաւելուածի մասին է, նուիրուած Արփիարի գործին

(17) Լորիս-Մելիքեան

(18) Վարգէսը՝ որ այն ատեն Վան էր

(19) Մաթէոսը, մեր ամենամաքուր, ամենաանձնուէր երիտասարդներից մէկը, նահատակուեց 1915-ին Մուշի մէջ


(20) Բուզար-մակեդոնական շարժման ղեկավարներէն է, ուժանակային գործի մասնագէտ, որ սպանուեցաւ երեք տարի առաջ Սօֆիայում

(21) Խօսքը ուժանակի մասին է: Մ. Վ.

(22) Էլին՝ իր կեղծանունն է

(23) Այդ խառնուրդը չէր արդեօք աղէտաւոր ոռոմբը, որ վաղաժամ պայթելով, կտրեց Քրիստափորի կեանքի թելը... Մ.Վ.

# Յաւելուած



Քրիստափոր Միքայէլեան եւ  
Ռուբինա Արեգեան-Օհանջանեան



Սուլթան Համիտի մահափորձի ժամանակ  
օգտագործուած կառքը



Սաֆո, Զարեհ, Էմիլ, Ռուբինա



Ոռւթինա Արեշեան-Օհանջանեան



Համօ Օհանջանեանը քրիստափորի շիրիմին



212-19

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՅԱՎՈՐԻՔԻՆ

## FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

4. 90 LUB

与む少戸のを君を君も 与ひよさ

COMITÉ CENTRAL

**CONSTANTINOPLE**

*N.*

Moraf n'apprécie pas trop la crise hivernale  
et (en 1583) Crédit lyonnais-à longue Banque  
tonienne-à appeler qu'il: n'importe pas  
et peut faire: pas que ce soit tout  
quand même: mais que ce soit tout  
encore n'a pas été le cas.

Dragster's or whatever we say & he  
was just like a parrot who  
had never said anything else than what  
he wanted said.

Augt 1905 to Hufford Wyo. where we  
are enroute, up Snake River. For the river  
and mountains, especially, of the upper part  
of the valley.

desirous of your money, are going to  
a native one hotel & jailor, & he ought  
not to be compelled:

After 2 months of no exercise

Քրիստովորի ձեռագիր Նամակներէն

**Ստորեւ ներկայացուած նիւթերը կրնաք գտնել «Նիւթեր  
ՀՅ Դաշնակցութեան Պատմութեան Համար» Գ. (3-րդ) հատորի  
Էջ 108 եւ 259։ Հատորը նովրուած է ՀՅԴ 4-րդ Հնդհանուր  
Ժողովին, որ տեղի ունեցաւ 1907 թուականի Փետրուար-  
Մարտ ամիսներուն, Վիէննա, Աստրիա**

**ՀՅԴ 4-րդ Հնդհանուր Ժողով, 41-րդ նիստ, 19 Մարտ 1907  
Նախագահում է՝ Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի)**

Նախքան նիստը փակելը, նախագահը լիշեցնում է, որ այսօր Քրիստափորի  
եւ Էդուարդի մահուան երկրորդ տարելիցն է։ «Ուղիղ երկու տարի առաջ,  
Սոֆիայի գերեզմանատանը, մի քանի ընկերներ կանգնած էինք երկու  
արտասովոր գերեզմանի առաջ։ Այդ օրը մենք մեր վերջին հրաժեշտն  
էինք տալիս մեր երկու ընկերներին, որոնք իրարից հեռու ծնուած, մէկը  
պոլսեցի, միւսը կովկասցի, ժողովրդի վշտի ու տանջանքի գաղափարակով  
սակայն, կապուել էին միմեանց հետ, Քրիստափորն ու Էդուարդը։  
Մեզանից մէկը որ դամբանականը խօսեց, այն յոյսը յայտնեց ներկայ  
գտնուող բուզգար ընկերներին, թէ մի օր էլ կը գանք այստեղ, մեր այս  
ընկերների աճիւնները տեղափոխելու համար, բայց կը գանք ոչ իրեւ  
փախստականներ, ինչպէս մինչեւ հիմա, այլ իբրեւ ազատ քաղաքացիներ։  
Իսկ մինչ այդ պահպանեցէք մեր այս թանկագին գերեզմանները։» Եւ  
իսկապէս երկրի դրութիւնը փոխուեց գահավէծ արագութեամբ։ այսօր մենք  
կարող ենք մեր փափաքն իրագործել։ Այստեղ ի հարկէ ես չեմ խօսիր  
Քրիստափորի մասին։ իրաքանչիւրը ձեզանից գիտէ նրան եւ յարգում է  
նրա յիշատակը։

Ժողովականները յոտնկայս յարգում են նրա յիշատակը։

Նախագահը խնդրում է ցաւակցութեան հեռագիր ուղել Քրիստովորի այրիին: Ապա առաջարկում է Քրիստովորի դիակը տեղափոխել Կովկաս, յիշելով Եղուարդի մարմնի Պոլիս փոխադրելու անհնարաւորութիւնը:

Ժողովը համաձայնում է:

Առաջարկ է լինում Զարդարեանի կողմից՝ Եղուարդի մարմինն էլ Կովկաս փոխադրել, որը նմանապէս ընդունուած է:

Նախագահ.- Տեղափոխման խնդրի տեխնիկական կողմի մասին առանձին գեկուցում կ'անի դիւանը:

Քրիստովորի այրիին ուղղուած հեռագրի պատճենը հետեւեալն է.-

Ժընեւ, խմբագրութիւն «Դրօշակ»ի

Տիկին Միքայէլեանին:

Անմոռանալի ընկ. Քրիստովորի մահուան երկրորդ տարելիցի օրը, ժողովը յարգելով յոտնկայս նրա թանկագին յիշատակը, որոշեց նրա աճիւնը տեղափոխել օտար հորիզոնոց հայրենի Կովկասը, եւ յայտնել ձեզ իր խորին յարգանքները եւ սրտաբուխ ցաւակցութիւնը անփոխարինելի կորստի առթիւ:

Դաշնակցութեան Ընդհ. Ժողով:

**ՀՅԴ 4-րդ Հնդհանուր Ժողով, 106-րդ նիստ, 26 Ապրիլ 1907  
Նախագահում է՝ Խաչատուր Մալումեան (Է. Ակնոնի)**

Նախագահը առաջադրում է կարդալ Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքի ապահովութեան խնդրի մասին եղած բանաձեւը:

Մալումեան կարդում է բանաձեւը, որն անցնում է միաձայն:

**Ահա այդ բանաձեւը՝**

«Հնդհ. Ժողովը հաճոյքով լսեց կովկասեան Ռայոնական Ժողովի որոշումը եւ Երեսանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկ. Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգար մինչեւ այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ եւ որ այդ եղանակով դժուար է ապահով պայմանների մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլեւ այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգտուելով այս առիթից արտայայտելու յարգանք մեր ընկերոջ թանկագին յիշատակին, որոշեց՝ կոսակցութեան վրայ առնել այդ գործի կարգաւորումը եւ պարտաւորեցնել Թիֆլիզի եւ Բագուհի մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել եւ ամենաուշը մինչեւ 1907 թուի վերջը կողմնաի միջոցներով կազմել մի ֆոնդ եւ յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքին եւ նրա զաւակի ուսման գործին»:



Ելեկտրոնային այս հրապարակման  
գրաշարութիւնը, էջադրումն ու  
կողքի ձեւավորումը կատարեց  
ՍԵՒԱԿ ԱՐՈՅԵԱՆ:

**Միքայէլ Վարանդեանի Քրիստափոր Միքայէլեանը**  
**ներկայացնող այս նիւթը հրատարակուած է**  
**«Հայրենիք» ամսագրի՝**

**Յունուար 1924-Թիւ 3, Մարտ 1924-Թիւ 5, Յունիս 1924-**  
**Թիւ 8 եւ Հոկտեմբեր 1924-Թիւ 12-ի մէջ:**

ՊՈՍԹԸՆ

**«Մենք նոյն ճշմարտութիւնը պիտի ասենք – ըստ  
մեր ըմբռնուածին – եւ մեր աւելի մեծ դէմքերու  
մասին՝ Քրիստաֆորի, Զաւարեանի, Ռոստոմի:  
Այլապէս գրիչ չէինք վերցնի կենդանագիրներ  
հիւաելու: Ոչ ոք անսխալական է եւ ոչինչ չկայ  
աւելի անհամակրելի, քան կոյր, մոլեռանդ  
երկրապագութիւնը: De mortuis aut verum aut nihil –  
«Մեռածի մասին՝ կամ ճշմարիտը կամ ոչինչ»....»:**

Միքայէլ Կարանդիտան

